ՌԴ-ի «Ապահովագրական գործի կազմակերպման մասին» 1997թ. ընդունված գործող օրենքը[8] որպես ապահովագրության առանձին տեսակ դիտարկում է միայն բժշկական ապահովագրությունը՝ առողջության ապահովագրությունը ապահովագրության առանձին տեսակ չհամարելով:

Պետք է նշել, որ ՌԴ-ում ևս առկա էր նման խնդիր միայն այն տարբերությամբ, որ ապահովագրության վերաբերյալ ռուսական հրապարակումներում «բժշկական ապահովագրություն» և «հիվանդության դեպքում /հիվանդության հետևանքով առաջացած/ ապահովագրություն» եզրույթներն էին հաճախ նույնականացվում: Օրինակ, գերմաներենից թարգմանված «Ապահովագրական գործ» դասագրքում[9] այդ հասկացությունները օգտագործվում են որպես հոմանիշներ: Ապահովագրության դասակարգման վերաբերյալ հարցերի քննարկումների ժամանակ հավասարության նշան է

---

[7] Տե՛ս Закон о страховании, /http://meget.kiev.ua/zakon/zakon-o-strahovanii/ էլեկտրոնային աղբյուր, դիտման ամսաթիվ 20.11.2013:

[8] Տե՛ս Закон РФ от 27.11.1992 № 4015-1 (ред. от 23.07.2013) «Об организации страхового дела в Российской Федерации».

[9] Страховое дело: учебник. В 2-х т. (пер. с нем. О.И. Крюгер и Т.А.Федоровой), М.: Экономист, 2004.

դրվում բժշկական ապահովագրության[10] և ֆիզիկական անձանց՝ հիվանդության հետ կապված ծախսերի ապահովագրության[11] միջև:

Ա.Վ. Մոզալյովի կարծիքով նման նույնականացումը կարող է կապված լինել թարգմանության առանձնահատկությունների հետ, ինչպես նաև ապահովագրության վերաբերյալ ռուսական գիտության կողմից ընդունված եզրույթաբանության առանձնահատկությունների հետ[12]:

Ընդ որում, մինչհեղափոխական Ռուսաստանում օգտագործվում էր «հիվանդության դեպքում ապահովագրություն» եզրույթը, սակայն խորհրդային շրջանում այն վերացավ, քանզի նման ապահովագրություն ԽՍՀՄ-ում չէր իրականացվում: Իսկ ԽՍՀՄ փլուզումից հետո ռուսական գիտությունը սկսեց օգտագործել «բժշկական ապահովագրություն» հասկացությունը:

Ն.Ա. Տիժինովան նշում է[13], որ այնպիսի չափանիշի բացահայտման հիման վրա, ինչպիսին է ապահովագրության օբյեկտը, անձնական ապահովագրությունում հիմնավոր է երկու ենթաճյուղերի առանձնացումը՝ կյանքի ապահովագրության, որն իր մեջ զուգակցում է կյանքի ռիսկային և կուտակային ապահովագրությունը, և առողջության ապահովագրությունը, որն իր մեջ պարունակում է դժբախտ դեպքերի և բժշկական ապահովագրությունը:

Այսինքն, բժշկական ապահովագրությունը և առողջության ապահովագրությունը չեն նույնացվում, այլ բժշկական ապահովագրությունը ներառվում է առողջության ապահովագրության մեջ:

Այս պայմաններում ՀՀ օրենսդիրը պետք է հստակեցնի ապահովագրության այս երկու տեսակների շուրջ ստեղծված անորոշությունը և /կամ/ «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքում նախատեսի ապահովագրության այս երկու տեսակներն էլ միաժամանակ կամ նրանցից միայն մեկը:

Մեր ուսումնասիրությունը պարզեց, որ տեսական գրականության մեջ ևս ապահովագրության այս երկու տեսակները հստակ տարանջատված չեն և հաճախ օգտագործվում են միաժամանակ՝ որպես հոմանիշներ:

---

[10] Страховое дело: учебник. Т. 1 (пер. с нем. О.И. Крюгер и Т.А. Федоровой), М.: Экономист, 2004. С. 99.

[11] Терминология учебника «Страховое дело».

[12] *Мозалев А.В.* Добровольное медицинское страхование: особенности и направления развитиз в РФ: диссертация на соискание ученой степени кандидата экономических наук. С. 54.

[13] *Тыжинова Н.А.* Развитие личного страхования в посткризисный период автореферат диссертации на соискание ученой степени кандидата экономических наук, Иркутск 2012, С. 10.

Այդ պատճառով էլ անհրաժեշտություն է առաջանում հստակեցնել, թե որ եզրույթն է առավել հարմար օգտագործել՝ բժշկական ապահովագրություն, թե՞ առողջության ապահովագրություն: ՌԴ-ում օգտագործվում է բժշկական ապահովագրություն եզրույթը՝ «Медицинское страхование», Արևմտյան Եվրոպայում առավել հաճախ՝ առողջության ապահովագրություն եզրույթը՝ "health insurance", Բելառուսում՝ բժշկական ծախսերի ապահովագրություն[14]: Հայրենական տեսական և իրավական ոլորտներում կիրառվում է ինչպես բժշկական, այնպես էլ առողջության ապահովագրություն եզրույթը:

Սակայն մեր կարծիքով ապահովագրության այս տեսակին առողջության ապահովագրություն անվանելը չի բխում վերջինիս էությունից, քանի որ ապահովագրության այս տեսակի դեպքում ապահովագրվում է ոչ թե անձի առողջությունը կամ ապահովագրական հատուցում է տրվում ոչ թե առողջությանը վնաս պատճառվելու դեպքում, այլ ապահովագրական ծրագրով նախատեսված բուժօգնությունից օգտվելու դեպքում, հետևաբար այս պարագայում մենք ապահովագրում ենք անձի՝ բժշկական ծառայությունների համար կատարվող ծախսերի իրականացումը:

Այսպիսով, կարծում ենք ապահովագրության այս տեսակը պետք է անվանել բժշկական ապահովագրություն:

Ինչպես ընդհանուր, այնպես էլ բժշկական ապահովագրության հասկացության վերաբերյալ ևս միանշանակ կարծիք գոյություն չունի: Ավելին, որքան երևույթը բարդ է, այնքան ավելի դժվար է տալ այդ երևույթի՝ բոլորի համար ընդունելի, էական հատկանիշները արտացոլող սահմանումը:

Բժշկական ապահովագրության հասկացությունը սահմանելիս հարկ է հաշվի առնել, որ այն կիրառելի է երկու մակարդակում՝ տեսական՝ մասնավորապես գիտական աշխատություններում, ուսումնական ձեռնարկներում, և օրենսդրական մակարդակում՝ օրենքներում, նորմատիվ-իրավական ակտերում և այլն:

Բժշկական ապահովագրության հասկացությունը տեսական մակարդակում բնորոշվում է սոցիալական կամ իրավական տեսանկյունից՝ յուրաքանչյուր նոր սահմանման մեջ գերակշռելով կա՛մ սոցիալական, կա՛մ իրավական ուղղվածությունը:

Յ.Պ.Լիսիցինի կողմից ձևակերպված սահմանման մեջ բժշկական ապահովագրությունը դիտարկվում է որպես սոցիալական ապահովագրության

[14] Տե՛ս Постановление Совета Министров Республики Беларусь от 22 сентября 2004 г. № 1180 «О концепции добровольного медицинского страхования в Республике Беларусь. /http://www.minfin.gov.by/print/supervision/acts/d070ffd39480f32b.html, Էլեկտրոնային աղբյուր, դիտման ամսաթիվ 25.05.2014/

տեսակ՝ շեշտադրելով այս երևույթի սոցիալական ուղղվածությունը: Այսպես, ըստ Յ.Պ.Լիսիցինի, բժշկական ապահովագրությունը սոցիալական ապահովագրության տեսակ է, որը դիտարկվում է որպես աշխատողներին և նրանց ընտանիքի անդամներին ծերության, հիվանդության, աշխատունակության կորստի դեպքերում, մայրության և մանկության պաշտպանության, ինչպես նաև հասարակության անդամների առողջության պաշտպանության համար պետության կողմից երաշխավորված նյութական ապահովության միջոցների ամբողջություն[15]:

Սակայն այդ սահմանումը չի արտացոլում բժշկական ապահովագրության ողջ էությունը և նշանակությունը: Այսպես, վերոգրյալ հասկացության մեջ ողջ շեշտադրումը դրվում է բժշկական ապահովագրության՝ որպես սոցիալական ապահովագրության տեսակ լինելու հանգամանքի վրա, ինչի արդյունքում էլ այն դիտարկվում է որպես միայն պետության կողմից նյութական ապահովության միջոցների ամբողջություն: Այս պարագայում վերոգրյալ սահմանումը ավելի շատ կարելի էր դիտարկել որպես պարտադիր բժշկական ապահովագրության սահմանում, քան թե ընդհանուր բժշկական ապահովագրության, քանի որ կամավոր բժշկական ապահովագրության դեպքում այն առողջության պաշտպանության համար պետության կողմից երաշխավորված նյութական ապահովության միջոցների ամբողջություն դիտարկել հնարավոր չէ: Ընդ որում, վերոգրյալ սահմանումը չի արտահայտում նաև բժշկական ապահովագրության էական առանձնահատկությունը, այն է՝ ապահովագրական դեպքի ժամանակ բուժօգնության տրամադրման հանգամանքը:

Ի տարբերություն Յ.Պ. Լիսիցինի սահմանման՝ այդ ոլորտի հայտնի գիտակներից Յ.Ա. Ստեպկինան տվել է բժշկական ապահովագրության առավել ընդհանրական սահմանումը, համաձայն որի բժշկական ապահովագրությունը առողջության պաշտպանության ոլորտում բնակչության շահերի սոցիալական պաշտպանության ձև է, որը երաշխիք է ապահովագրական դեպքի առաջանալու պարագայում կուտակված ապահովագրական միջոցների հաշվին բժշկական օգնություն ստանալու համար[16]:

Այս սահմանումը՝ ի տարբերություն նախորդի, առավել ընդհանրական

---

[15] Տե՛ս *Лисицын Ю.П.* Общественное здоровье и здравоохранение: учебник.2-е изд., М., ГЭОТАР-МЕДИА, 2010, էջ 442.

[16] Տե՛ս *Лисицын Ю.П.* Общественное здоровье и здравоохранение. Տե՛ս *Степкина Ю.А.* Развитие системы финансирования обязательного медицинского страхования в РФ: Диссертация на соискание ученой степени кандитата экономических наук, 2012, Санкт-Петербург, С. 38.

է և վերաբերում է բժշկական ապահովագրության երկու տեսակներին էլ: Բացի այդ, այս հասկացությունն արտահայտում է բժշկական ապահովագրության՝ ապահովագրության մյուս տեսակներից տարբերակող հատկանիշը, այն է՝ ապահովագրական դեպքի ժամանակ բժշկական օգնություն տրամադրելու հանգամանքը:

Սակայն այս սահմանման հիմնական թերությունն այն է, որ բժշկական ապահովագրությունը դիտարկում է որպես երաշխիք ապահովագրական դեպքի ժամանակ կուտակված ապահովագրական միջոցների հաշվին բժշկական օգնություն ստանալու համար: Բժշկական ապահովագրությունը, մեր կարծիքով, առողջության պահպանության ոլորտում բնակչության շահերի սոցիալական պաշտպանության ձև է, բայց ոչ՝ երաշխիք բժշկական օգնություն ստանալու: Այն կարող է բժշկական օգնություն ստանալու միջոց դիտարկվել, բայց ոչ երբեք՝ երաշխիք: Այս ոլորտում որպես բժշկական օգնություն ստանալու երաշխիք կարելի է դիտարկել բժշկական ապահովագրության ոլորտում պետության կողմից իրականացվող քաղաքականությունը, ընդունված իրավական ակտերը, համապատասխան պետական, տեղական մարմինների ու հասարակական կազմակերպությունների վերահսկողական գործունեությունը, սակայն բժշկական ապահովագրությունը՝ որպես բժշկական օգնություն ստանալու երաշխիք, չի կարող դիտարկվել:

Անգլոսաքսոնական իրավական համակարգի երկրներում բժշկական ապահովագրության հասկացությունը տեսական գրականության մեջ սահմանելիս հիմնական շեշտը դրվում է բժշկական ապահովագրության իրավական բնույթի վրա՝ այն դիտարկելով միայն որպես քաղաքացիաիրավական պայմանագրի տեսակ, որը սահմանում է ապահովագրական իրավահարաբերությունների մասնակիցների իրավունքները և պարտականությունները:

Այսպես, ըստ Մ.Ա. Գրինի և Ջ.Ք. Ռոուելի, բժշկական ապահովագրությունը պայմանագիր է ապահովագրողի և ապահովադրի կամ կառավարության միջև, որով ապահովագրողի կողմից ապահովագրական ծրագրի շրջանակներում ամբողջությամբ կամ մասնակի փոխհատուցվում են ապահովագրվողի ծախսերը՝ կապված բուժաշխատողների կողմից մատուցված անհրաժեշտ բուժօգնության կամ կանխարգելիչ միջոցառումների հետ[17]:

Վերոգրյալ սահմանումը, ինչպես նշվեց, բժշկական ապահովագրությունն առաջին հերթին դիտարկում է որպես իրավական երևույթ, այսինքն որպես պայմանագիր՝ չընդգծելով բժշկական ապահովագրության սոցիալա-

---

[17] Տե՛ս *Michele A. Green, Joann C.* Rowell, Understanding Health Insurance; A Guide to Bill ing and Reimbursement, Eleventh edition, 2013, էջ 22:

կան նշանակությունը բնակչության առողջության պահպանման ոլորտում: Սակայն դրա հետ մեկտեղ բժշկական ապահովագրության սահմանման մեջ էական հատկանիշ է այն, որ ծախսերը կապված են բուժաշխատողների կողմից մատուցվող անհրաժեշտ բուժօգնության կամ կանխարգելիչ միջոցառումների հետ: Մինչ այդ առկա սահմանումներում հիմնականում նշվում է բժշկական հաստատությունների կողմից մատուցվող բժշկական ծառայությունների մասին՝ անտեսելով այն հանգամանքը, որ բժշկական ապահովագրության դեպքում բժշկական ծառայություններ կարող են մատուցել նաև պետության կողմից համապատասխան լիցենզիա ստացած անհատ բժիշկները և բուժաշխատողները ևս, իսկ հասկացություններում նախատեսելով միայն բժշկական հաստատությունները՝ արդեն հնարավորություն չենք տալիս անհատ բժիշկներին և բուժաշխատողներին ևս մասնակցել բժշկական ապահովագրությանը:

Տեսական մակարդակում տրված երևույթի, ինստիտուտի հասկացությունը հետագայում արդեն իր ազդեցությունն է ունենում օրենսդրական մակարդակում տրված հասկացությունների, բնորոշումների վրա, ինչի արդյունքում երբեմն օրենսդրության մեջ տրված սահմանումը ամբողջությամբ արտացոլում է տեսական գրականության մեջ տրված սահմանումը, կամ էլ տեսական գրականության մեջ առկա տարակարծությունների դեպքում, հիմք ընդունելով առկա հասկացությունները, փորձում է տալ առավել ընդունելի հասկացությունը:

Ընդհանրապես ապահովագրության տեսակների հասկացությունները օրենսդրության մեջ հաճախ չեն տրվում և այդ առումով բժշկական ապահովագրությունը բացառություն չի:

Օրենսդրական մակարդակում բժշկական ապահովագրության հասկացությունը սահմանելու փոխարեն օրենսդիրները սահմանափակվում են կողմերի իրավունքներն ու պարտականությունները նշելով: Սակայն մի շարք երկրների օրենսդրությամբ փորձ է արվել սահմանել բժշկական ապահովագրության հասկացությունը:

Այսպես ՌԴ-ի 28.06.1991թ. Քաղաքացիների բժշկական ապահովագրության մասին[18] օրենքի 1-ին հոդվածը բավականին հակիրճ կերպով սահմանում էր բժշկական ապահովագրության հասկացությունը՝ նշելով, որ բժշկական ապահովագրությունը առողջության պահպանության ոլորտում բնակչության շահերի սոցիալական պաշտպանության ձև է, որի նպատակն է երաշխավորել ապահովագրված անձին ապահովագրական պատահարի

[18] Закон РФ от 28.06.1991, № 1499-1 (ред. от 24.07.2009) О медицинском страховании граждан в Российской Федерации, սույն օրենքը իր ուժը կորցրել է 01.01.2011թ.-ին:

վրա հասնելու դեպքում կուտակված միջոցների հաշվին բժշկական օգնություն ստանալու հնարավորությունը, ինչպես նաև ֆինանսավորել կանխարգելիչ միջոցառումները:

Վերոգրյալ սահմանումը, թեև բժշկական ապահովագրությունը դիտարկել էր և՛ սոցիալական և՛ իրավական տեսանկյունից, սակայն անհրաժեշտություն էր առաջացնում նշելու, որ այն բժշկական օգնության ստացումը երաշխավորում է ապահովագրական ծրագրի կամ պայմանագրի շրջանակներում, քանի որ ապահովագրական դեպքի վրա հասնելու դեպքում բժշկական օգնությունն բժշկական ապահովագրության շրջանակներում տրամադրվում է ըստ ապահովագրական ծրագրով կամ պայմանագրով նախատեսված ծավալների և պայմանների: Հետևաբար բժշկական ապահովագրությունը չի կարող երաշխավորել ապահովագրական դեպքի ժամանակ ցանկացած տեսակի ու ծավալի բուժօգնության տրամադրումը, այլ այն հստակ երաշխավորում է միայն ապահովագրական ծրագրով կամ պայմանագրով նախատեսված ծավալի և տեսակի բժշկական օգնությունը:

Սակայն արդեն «Քաղաքացիների բժշկական ապահովագրության մասին» 1991թ.-ի ՌԴ-ի օրենքին փոխարինող 29.11.2010թ. «ՌԴ-ում պարտադիր բժշկական ապահովագրության մասին» օրենքում[19] բժշկական ապահովագրության ընդհանուր հասկացությունը չի տրվում. դրա փոխարեն տրվում է պարտադիր բժշկական ապահովագրության սահմանումը, որը որպես բժշկական ապահովագրության ընդհանուր հասկացություն չի կարող դիտարկվել:

Գերմանիայի՝ «Ապահովագրական պայմանագրի» մասին 2008 թվականի օրենքը ևս չի սահմանում բժշկական ապահովագրության հասկացությունը, թեև օրենքում բավականին մանրամասն կարգավորված է բժշկական ապահովագրության ոլորտը[20]:

Հաշվի առնելով նշված սահմանումներում առկա հակասությունները, անլիարժեքությունը՝ առաջարկում ենք ապահովագրության այս տեսակը անվանել բժշկական ապահովագրություն և տալ բժշկական ապահովագրություն հասկացության հետևյալ սահմանումը. բժշկական ապահովագրությունը իրավահարաբերությունների ամբողջություն է, որը ձևավորվում է առողջության պաշտպանության ոլորտում ապահովագրված անձանց գույ-

[19] Федеральный закон от 29.11.2010, № 326-ФЗ (ред. от 25.11.2013) Об обязательном медицинском страховании в Российской Федерации.

[20] Տե՛ս Insurance Contract Act 2008, /http://www.gesetze-im-internet.de/englisch_vvg/englisch_vvg.html#p0669, էլեկտրոնային աղբյուր, դիտման ամսաթիվ 10.11.2013/

քային շահերի կապակցությամբ և նպատակ ունի ապահովագրական դեպքի առաջացման պարագայում բժշկական ապահովագրական ծրագրի շրջանակներում երաշխավորելու ապահովագրված անձի՝ ապահովագրական միջոցների հաշվին բժշկական որակյալ օգնություն ստանալու հնարավորությունը:

ПОНЯТИЕ МЕДИЦИНСКОГО СТРАХОВАНИЯ

С.Р. Аветисян

АННОТАЦИЯ

В данной статье рассматриваются важные вопросы, связанные с медицинским страхованием, в частности, что такое медицинская страховка, какой вид страховки считается медицинской страховкой и как определяется это понятие.

Отражены интерпретации этого понятия в разных странах и сделан ряд интересных предложений относительно определения, восприятия и применения данного понятия в РА. Предложенные в статье формулировки существенно обогатят более четкое восприятие этого понятия.

Ключевые слова: страхование, медицинское страхование, страхование здоровья, медицинские услуги, определение понятия.

THE CONCEPT OF MEDICAL INSURANCE

S. Avetisyan

SUMMARY

The article deals with the important problems referring to medical insurance, especially what medical insurance is, what kind of insurance is considered medical and how this concept is defined. The author touches upon the interpretation of the concept in different countries and some interesting proposals referring to the definition, the perception and application of that concept in RA.

The statements proposed in the article will significantly enrich the distinct perception of the concept in our conutry.

Keywords: insurance, medical insurance, health insurance, medical services, definition of the concept.

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴՐԱ ԿԱՊԸ ՈՐՈՇ ԻՐԱՎԱԿԱՆ ԵՐԵՎՈՒՅԹՆԵՐԻ ՀԵՏ

Ա.Պ. Վարդևանյան

ԱՄՓՈՓՈՒՄ

Տվյալ հոդվածի շրջանակներում հեղինակը, հաշվի առնելով մի շարք իրավագետների դիրքորոշումները, ներկայացրել է սահմանադրականության հասկացության և կարևորության վերաբերյալ իր մոտեցումը: Հեղինակը հատկապես կարևորել է այն մոտեցումը, որ սահմանադրականությունը պետք է դիտարկել և ընդունել ոչ թե որպես սահմանադրական իրավունքի կամ իրավունքի տեսության մի մաս, այլ որպես իրավունքի հիմնարար սկզբունք:

Ներկայացվել է նաև սահմանադրականության կապը մի շարք իրավական երևույթների հետ: Հեղինակը մասնավորապես վերլուծել է սահմանադրականության և իրավական որոշակիության սկզբունքի միջև կապը՝ հատկապես հաշվի առնելով այդ սկզբունքի վերաբերյալ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի, ինչպես նաև ՀՀ սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները, այնուհետև ներկայացվել են եզրահանգումներ: Վերլուծվել է նաև սահմանադրականության և իրավաքաղաքական ռեժիմի միջև եղած կապը:

Հիմնաբառեր՝ սահմանադրականություն, սահմանադրության գերակայություն, իրավական որոշակիության սկզբունք, իրավաքաղաքական ռեժիմ, ժողովրդավարություն, իշխանությունների բաժանում:

Ժողովրդավարական և իրավական պետության կայացման կարևոր նախապայմաններից է սահմանադրության գերակայության և դրա նորմերի անմիջականորեն գործողության ապահովումը: Նշվածը ենթադրում է հասարակական հարաբերություններում սահմանադրական սկզբունքների ու նորմերի երաշխավորումը և պաշտպանվածությունը: Մեր կարծիքով վերջինիս իրականացման համար յուրաքանչյուր հասարակություն նախևառաջ պետք է ունենա իրական և գործող Սահմանադրություն, կոնկրետ այդ հասարակության սահմանադրական մշակույթ և սահմանադրականություն: Կիսում ենք պրոֆեսոր Գ.Գ. Հարությունյանի այն մոտեցումը, որ «Սահմանադրականությունը հանդես է գալիս որպես սինթեզված հասկացություն, որը մարմնավորում է սահմանադրական կառուցվածքի և սահմանադրական գործնականի առավել էական երևույթները. դա սահմանադրական ուսմունքն է, հենց սահմանադրությունը և դրա իրականացման սահմանները, դա և իշխանության կրողների և ամբողջ բնակչության սահմանադրական մշակույթն է [1]»:

Նշյալ հասկացությունները անբաժանելի և դինամիկ կապի մեջ են գտնվում՝ փոխադարձաբար լրացնելով և առհասարակ պայմանավորելով միմյանց: Միաժամանակ պետք է նկատել, որ գիտության կողմից ընդունված են «իրական, փաստացի սահմանադրություն» կամ «ձևական, կարծեցյալ սահմանադրություն» լակոնիկ ծավալուն հասկացությունները [2]: Հատկանշական է նաև, որ սահմանադրականություն հասկացությունը ուղղակիորեն կապված է նշված հասկացությունների հետ,

քանի որ ձևական, կարծեցյալ սահմանադրություններ ունեցող հասարակությունները չեն կարող զուտ դրա առկայությամբ երաշխավորել սահմանադրականության առկայությունը: Նշված դիրքորոշման լույսի ներքո հատկապես արդիական է պրոֆեսոր Գ.Գ. Հարությունյանի մոտեցումը, որը մենք ամբողջությամբ կիսում ենք. «Սահմանադրությունից մինչև սահմանադրականություն ճանապարհը չի ավարտվում երկրի Հիմնական օրենքի ընդունումով, անցումային դրույթներով նախատեսված ինչ-ինչ նախապատրաստական քայլերով, անհրաժեշտ ինստիտուտների ու կառույցների ձևավորումով, մարդու իրավունքներն ու ազատությունները Սահմանադրության մեջ ամրագրելով [3]»: Այսինքն, ինքնին Սահմանադրության առկայությունը չի ենթադրում սահմանադրականության հաստատում:

Իրավաբանական գրականության մեջ «սահմանադրականություն» հասկացությունը չի ստացել լայն կիրառություն, սակայն մշտապես գտնվել է գիտական հետաքրքրությունների տիրույթում. ավելին առ այսօր մշակված չէ սահմանադրականության էության և հայեցակարգային զարգացման, ինչպես նաև կոնկրետ և սպառիչ հատկանիշներով բնութագրելու վերաբերյալ միասնական մոտեցում:

Իր ծագմամբ «սահմանադրականություն» հասկացությունը պարտական է ամերիկյան քաղաքական-իրավական մտքին: ԱՄՆ 1787 թվականին Սահմանադրության հիմնադիրները դրանով նշեցին ամրագրված սահմանադրության գերակայությունը օրենքների և այլ իրավական ակտերի նկատմամբ [4] և դրա երաշխավորման միջոց դիտարկեցին իշխանությունների բաժանումն ու հակակշռումը: Պետք է նկատել նաև, որ սահմանադրականության երաշխավորման տեսանկյունից բավականին լուրջ և արդյունավետ մոտեցում էին որդեգրել Ֆրանսիայում: Այսպես, 1789 թվականի օգոստոսի 26-ին Մարդու և քաղաքացու իրավունքների ֆրանսիական հռչակագրի 16-րդ հոդվածում ամրագրվեց, որ «Յուրաքանչյուր հասարակություն, որտեղ ապահովված չէ իրավունքների երաշխավորումը և հաստատված չէ իշխանությունների բաժանումը, ընդհանրապես չունի Սահմանադրություն»: Կարելի է ասել՝ դեռևս 18-րդ դարում նշված հռչակագրով բարձրացվեց սահմանադրության իրական կամ ձևական բնույթ ունենալու խնդիրը, և դրա հետ պատճառահետևանքային կապի մեջ գտնվող սահմանադրականության առկայության կամ բացակայության հարցը: Ռուս իրավագետներ Ա.Ա. Միշինը և Գ.Վ. Բարաբաշևը, ևս կապելով սահմանադրականությունը սահմանադրության ստեղծման հետ, դիտարկում են այն որպես պետական կառավարում՝ սահմանադրությամբ սահմանափակված: Ըստ Միշինի և Բարաբաշևի՝ «Առաջին բուրժուական սահմանադրություն, բառիս բուն իմաստով հանդիսացել են 1787թ. Ամերիկյանը և 1791թ. Ֆրանսիականը: Նույն դարաշրջանում ծագում և համակարգվում է սահմանադրականության հայեցակարգը, որն ընկալվում է որպես սահմանադրությամբ սահմանափակված կառավարում: Սահմանադրականության հայեցակարգը, որը ստացվել է բնական իրավունքի գաղափարներից, հանդիսանում է ավտական բռնապետության բուրժուական-դեմոկրատական հակաթեզ [5]»: Պետք է նկատել, որ ըստ նշված աշխատության, այդ շրջանի տեսաբանները զարգացնում էին այն մոտեցումը, որ սահմանադրությունը ոչ միայն սահմանափակում է պետական իշխանության սահմանները, այլ նաև հաստատում իշխանական գործառույթների իրականացման գործընթացները [6]:

Կարծում ենք, որ սահմանադրականության (սահմանադրական պետության, սահմանադրական կառավարման, սահմանադրական օրինականության, իրավունքի գերակայության) գաղափարները հանդիսանում են պատմականորեն առաջընթացային, ինչպես հենց բուրժուական պետությունը և բուրժուական դեմոկրատիան:

Ուշադրության է արժանի նաև այն հանգամանքը, որ հենց ամերիկյան և ֆրանսիական սահմանադրությունները, ըստ էության, առաջ քաշեցին իշխանությունների տարանջատման սկզբունքը, որը մինչ օրս ժամանակակից ժողովրդավարական պետություններում հանդիսանում է սահմանադրականության հաստատման կարևորագույն նախադրյալներից մեկը:

Ն.Վ. Վիտրուկը դիտարկում է սահմանադրականությունը որպես բազմատարր և բազմամակարդակ երևույթ, իսկ դրա հասկացությունը՝ ընդարձակ և ծավալուն: Վիտրուկը, անդրադառնալով սահմանադրակությանը որպես նորմատիվային-իրավական համակարգի, գտնում է, որ այն իրենից ներկայացնում է սահամանդրական պոզիտիվ իրավունքի նորմաների համակարգի ձև, որը ստանում է արտահայտում սահմանադրության և սահմանադրական իրավունքի այլ աղբյուրներում (օրենքների, սահմանադրական սովորությունների և այլնի մեջ) [7]:

Մի շարք գիտնականներ սահմանադրականությունը կապում են արդարության առավել լայն հասկացության հետ: Այդպես, Տ.Մ. Տրյախինան նշում է, որ լայն իմաստով սահմանադրականությունը համարժեք է արդարությանը, և այդ առիթով - թույլ է տալիս սահմանադրականության՝ որպես հիմնական օրենքի գնահատման հնարավորությունը իրավունքի էության տեսանկյունից՝ որպես մարդկանց ազատության, հավասարության և արդարության եռամիասնություն [8]:

Գ.Ա. Վասիլևիչը նույնպես սահմանադրականության հասկացության վերաբերյալ ընդհանրական դիրքորոշման կողմնակից է՝ համոզված լինելով, որ սահմանադրականությունն ուղղակի ինքնուրույն համոզմունք չէ, այլ՝ ինտեգրող հասկացություն, որը բովանդակության մեջ ներառում է այնպիսի հիմնական արժեքներ, ինչպիսիք են իրավունքի գերակայությունը, մարդու իրավունքների և ազատության առաջնայնությունը, ժողովրդավարությունը, իշխանության տարանջատումը, քաղաքական բազմակարծությունը (պլյուրալիզմը), տնտեսական գործունեության ազատությունը [9]: Կ.Վ. Արանովսկին, օրինակ, կողմնակից է այն տեսակետին, որ պետության Հիմնական օրենքը բնորոշող հատկանիշները սահմանադրականության համար հիմք չեն հանդիսանում: Վերջինիս պնդմամբ սահմանադրականությունը հանդիսանում է համապատասխան հասարակության յուրահատուկ ավանդույթ՝ իր մեջ ներառելով ոչ միայն տեսանելի մաս հանդիսացող իրավական ակտեր, սկզբունքներ, այլ նաև աշխարհայացքային ընկալումների, համոզմունքների, վարքագծային հմտությունների մի համակարգ [10]:

Վ.Տ. Կաբիշևը և Տ.Մ. Պրյախինան նշում են, որ սահմանադրական իրավունքի գիտության մեջ սահմանադրականության տակ ընկալում են սահմանադրության բարձրագույն և որոշիչ դերը իրավական համակարգում, պետական կառուցվածքի և քաղաքական ռեժիմի սահմանադրական կարգավորումներում սահմանադրության ուղիղ ազդեցությունը, անհատի ազատությունների և իրավունքների սահմանադրական ընդունումը, պետության և քաղաքացու փոխհարաբերությունների իրավական բնույթը [11]: Պետք է նկատել, որ Վ.Տ. Կաբիշևը, սահմանադրականության վերաբերյալ իր աշխատության մեջ անդրադառնալով սահմանադրականության և սահմանադրական իրավունքի հարաբերակցության հարցին, պնդում էր, որ սահմանադրականությունը՝ սահմանադրական գաղափարները, ընդհանրացված կատեգորիա է, որը խտացված արտահայտում է սահմանադրական իրավունքի էությունը, արտացոլում պետության սահմանադրական կայունությունը, ինչը և կազմում է սահմանադրական իրավունքի գիտության հիմքը, դրա միջուկը [12]:

Ինչպես նշում է պրոֆեսոր Գ.Գ. Հարությունյանը. «Սահմանադրականությունը բարդ հասարակական-քաղաքական և պետաիրավական հասկացություն է: Այն

առաջին հերթին ենթադրում է սահմանադրական ժողովրդավարության հաստատում: Դա այն նպատակն է, որին ձգտում են սոցիալական առաջադիմության ուղի ընկած երկրները: Սակայն այդ նպատակի իրականացումը պահանջում է, մասնավորապես, այնպիսի պարտադիր երաշխիքներ, ինչպիսիք են սահմանադրական նպատակների ու հիմնարար սկզբունքների ճանաչումը և երաշխավորումը պետության ու ողջ հասարակության կողմից, սահմանադրական սկզբունքներին համապատասխանող պետական իշխանության առկայությունը, իրավունքի գերակայության սկզբունքի վրա կառուցված իրավական համակարգի կայացումը, սահմանադրական կարգի ու Սահմանադրության գերակայության հուսալի պաշտպանությունը և այլն» [13]:

Նշված մոտեցումները հաշվի առնելով՝ գտնում ենք, որ սահմանադրականությունը լայն իմաստով սահմանադրական արժեքների ու սկզբունքների առկայությունն է հասարակության յուրաքանչյուր անդամի սոցիալական վարքագծի բոլոր դրսևորումներում: Կիսելով պրոֆեսոր Գ.Գ. Հարությունյանի կողմից առաջ քաշված մոտեցումը, համաձայն որի «իրավական պետությունում սահմանադրականությունը հանդիսանում է իրավունքի հիմնարար սկզբունք, որի իրացմամբ հասարակական հարաբերությունները ձեռք են բերում սահմանադրական բնույթ՝ ձևավորելով համարժեք սահմանադրական մշակույթ [14]»՝ գտնում ենք, որ սահմանադրականությունը հարկավոր է դիտարկել և ընդունել ոչ թե որպես սահմանադրական իրավունքի կամ իրավունքի տեսության մի մաս, այլ որպես իրավունքի հիմնարար սկզբունք:

Հարկ ենք համարում անդրադառնալ նաև «սահմանադրականություն» հասկացության և իրավական մի շարք երևույթների և կապի վերաբերյալ հիմնահարցին: Ըստ պրոֆեսոր Գ.Գ. Հարությունյանի՝ «սահմանադրականություն» հասկացությունը արդի միջազգային իրավամտածողության մեջ կապվում է այնպիսի իրավական երևույթների հետ, ինչպիսիք են

– սկզբունքների, գործունեության կարգի և կառուցակարգային մոտեցումների ընդհանրությունը, որոնք ավանդաբար օգտագործվում են պետական իշխանության սահմանափակման նպատակով,

– սահմանադրական միջոցները՝ պետական իշխանության համար սահմանափակումներ նախատեսելու նպատակով,

– համապետական, վերկուսակցական, միաբանող գաղափարախոսությունը,

– իրավաքաղաքական ռեժիմը, որի դերը հասարակության ներսում արդարության ու ներդաշնակության երաշխավորումն է,

– կառավարման սահմանադրական կարգի առկայությունը, պետական կառավարումը՝ սահմանափակված Սահմանադրությամբ,

– պետության ինքնասահմանափակումը,

– իրավունքի և քաղաքականության փոխներթափանցման աստիճանը

– և մի շարք այլ իրավական երևույթներ [15]:

Սույն հոդվածի շրջանակներում մանրամասն կներկայացվի սահմանադրականության կապը իրավաքաղաքական ռեժիմի և իրավական որոշակիության ու կանխատեսելիության սկզբունքի միջև:

Այսպես, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի մի շարք նախադեպային որոշումների (տե՛ս Ստիլը և այլոք ընդդեմ Միացյալ Թագավորության 23.09.1998թ., Մարկխն ընդդեմ Բելգիայի 13.06.1979թ., «Սանդի Թայմսն» ընդդեմ Միացյալ Թագավորության 26.04.1979թ.) համաձայն՝ իրավական որոշակիության սկզբունքը նախատեսում է, որ նորմը պետք է ձևակերպված լինի այնպիսի

հստակությամբ, որը թույլ կտա շահագրգիռ անձին, անհրաժեշտության դեպքում նաև խորհրդատվությունից օգտվելով, համապատասխանեցնելու իր վարքագիծը սահմանված կարգավորումներին և կանխատեսելու այն հետևանքները, որոնք կարող են առաջանալ համապատասխան գործողությունների հետևանքով [16]: Հատկանշական է, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը իրավական որոշակիության և կանխատեսելիության սկզբունքը դիտարկում է իրավական որոշակիության սկզբունքի հետ անքակտելի կապի մեջ՝ միաժամանակ դիտարկելով այն որպես պետական իշխանության հայեցողական լիազորությունների կարգավորման երաշխիք [17]: Ըստ իրավագետ Պատրիսիա Պոպելյեի՝ իրավական որոշակիության սկզբունքը ոչ միայն ընդհանուր առմամբ ընդունվել է և արդյունավետ կիրառվում է Եվրոպական դատարանների կողմից (ինչպես, օրինակ, Մարդու իրավունքների եվրոպական դատարանը), այլ նաև գրեթե բոլոր Եվրոպական երկրների կողմից [18]:

ՀՀ Սահմանադրական դատարանը իր ՍԴՈ-753 որոշման մեջ հայտնել է դիրքորոշում, որի համաձայն իրավական պետության սկզբունքը՝ ի թիվս այլոց, պահանջում է նաև իրավական օրենքի առկայություն: Վերջինս պետք է լինի բավականաչափ մատչելի. իրավունքի սուբյեկտները պետք է համապատասխան հանգամանքներում հնարավորություն ունենան կանխորոշելու, թե տվյալ դեպքում իրավական ինչ նորմեր են կիրառվում: Նորմը չի կարող համարվել «օրենք», եթե այն ձևակերպված չէ բավարար ճշգրտությամբ, որը թույլ կտա իրավաբանական և ֆիզիկական անձանց դրան համապատասխանեցնել իրենց վարքագիծը. նրանք պետք է հնարավորություն ունենան կանխատեսել այն հետևանքները, որոնք կարող է առաջացնել տվյալ գործողությունը: Սահմանադրական դատարանը 2006թ. ապրիլի 18-ի ՍԴՈ-630 որոշման մեջ մասնավորապես արձանագրել է. «...օրենքը պետք է համապատասխանի նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի մի շարք վճիռներում արտահայտված այն իրավական դիրքորոշմանը, համաձայն որի որևէ իրավական նորմ չի կարող համարվել «օրենք», եթե այն չի համապատասխանում իրավական որոշակիության (res judicata) սկզբունքին, այսինքն՝ ձևակերպված չէ բավարար աստիճանի հստակությամբ, որը թույլ տա քաղաքացուն դրա հետ համատեղելու իր վարքագիծը»: 2014 թվականի մարտի 18-ի ՍԴՈ 1141 որոշմամբ ՀՀ Սահմանադրական դատարանը սահմանել էր, որ իրավական որոշակիության սկզբունքը հանդիսանում է իրավական պետության ու իրավունքի գերակայության երաշխավորման անբաժանելի տարրը. առավել ևս իրավուն-քի գերակայության սկզբունքի որդեգրման շրջանակներում օրենքում ամրագրված իրավակարգավորումները պետք է անձի համար կանխատեսելի դարձնեն իր իրավաչափ սպասելիքները: Վերոնշյալ որոշմամբ դատարանը նաև արձանագրել էր, որ իրավական որոշակիության սկզբունքը, լինելով իրավական պետության հիմնարար սկզբունքներից մեկը, ենթադրում է նաև, որ իրավահարաբերությունների բոլոր սուբյեկտների, այդ թվում՝ իշխանության կրողի գործողությունները պետք է լինեն կանխատեսելի ու իրավաչափ: Այսինքն, վերլուծելով նշյալ դիրքորոշումները, կարող ենք նշել, որ որևէ իրավական նորմ չի կարող համարվել օրենք, եթե այն ձևակերպված չէ այնպիսի հստակությամբ, որը թույլ տա անձին դրա հետ համատեղելու իր վարքագիծը: Պատահական չենք համարում, որ իրավական որոշակիության պահպանումը հանդիսանում է Սահմանադրությամբ երաշխավորված իրավական պետություն սկզբունքի, այդ թվում նաև՝ իրավունքի գերակայության սկզբունքի պահանջներից: Մի շարք իրավագետներ նշել են, որ սահմանադրականության կայացման գործընթացում առանցքային նշանակություն ունեն իրական

գործող ժողովրդավարությունը և պետական իշխանության մարդկանց իրավունքներով սահմանափակվածությունը՝ դրանք դիտարկելով որպես սահմանադրականության տարրեր [19]: Ակնհայտ է, որ իրավական որոշակիության սկզբունքը առանցքային նշանակություն ունի ցանկացած հասարակությունում ժողովրդավարության և իրավունքի գերակայության երաշխավորման համար: Գտնում ենք, որ իրավական որոշակիության սկզբունքի առանցքային դերը հատկապես արտահայտվում է նրանում, որ այն մի կողմից պահանջում է որպեսզի օրենքները այնքան հստակ և մատչելի լինեն, որ թույլ տան անձին դրա հետ համատեղելու իր վարքագիծը, և մյուս կողմից այդ սկզբունքի պահանջներից է որպեսզի իշխանական լիազորություններ ունեցող մարմինների հայեցողության սահմանները ևս լինեն հստակ և կանխատեսելի: Հակառակ իրավիճակն անխուսափելիորեն հանգեցնում է իրավակիրառ մարմինների կողմից լայն հայեցողական մոտեցումների, սուբյեկտիվիզմի դրսևորման և մարդկանց իրավունքների խախտումների: Հաշվի առնելով վերոգրյալը՝ գտնում ենք, որ սահմանադրականության կայացման գործընթացում՝ ի թիվս այլ իրավական երևույթների, հատկապես կարևորվում է իրավական որոշակիության սկզբունքի պահանջներին հետևողական լինելը:

Միևնույն ժամանակ սահմանադրականությունը նաև իրական և գործող իրավաքաղաքական համակարգ է՝ հիմնված ոչ միայն պետության հիմնական օրենքի, այլև սահմանադրական դոկտրինայի և սահմանադրական սովորույթների վրա: Ըստ ամերիկացի սահմանադրագետ Մարկ Բրենդոնի՝ սահմանադրականությունը իրենից ենթադրում է այնպիսի մի համակարգ, որն ապահովում է քաղաքական իշխանության կամայականության սահամանափակումը [20]:

XIX դարի բուրժուական սահմանադրականության տեսությանը և պրակտիկային վերաբերող հետազոտության մեջ հեղինակները մեկնաբանում են սահմանադրականությունը տեսական, գաղափարական-քաղաքական շարժման և պետական-իրավական գործնական արժեքի տեսանկյունից: «Սահմանադրականության որպես քաղաքական-իրավական պրակտիկայի համար էական արժեք ունի և սահմանադրության առկայության և երկրի քաղաքական կյանքի վրա դրա գործուն ազդեցության փաստը, սահմանադրության իրական գործառնությունը օրենսդրության համակարգում: Բացի դրանից սահմանադրականությունը ենթադրում է պետական կառուցվածքի և քաղաքական ռեժիմի սահմանադրական-իրավական կարգավորում, պետության հետ անհատի փոխհարաբերություններում վերջինիս ազատությունների և իրավունքների սահմանադրական պաշտպանություն» [21]:

Լ.Վ. Սոնինան գտնում է, որ Սահմանադրականության՝ որպես իրավաքաղաքական ռեժիմի դերը ընդհանուր առմամբ կայանում է հասարակությունում արդարության և ներդաշնակության երաշխավորման մեջ, որի պարագայում կապահովվի հասարակության լիարժեք զարգացումը [22]:

Պետք է նկատել, որ նշյալ երևույթը, հասկացությունը պայմանավորվում է պետական իշխանության Հիմնական օրենքով՝ սահմանադրությամբ գործնական սահմանափակմամբ: Սահմանադրականությունը լեգիտիմացնում է պետական իշխանությունը, իրավաքաղաքական ռեժիմը՝ հաստատելով դրա իրավաչափությունը: Սահմանադրականությունը նպաստում է հասարակությունում պետական իշխանությանը հեղինակությամբ օժտմանը, ընդ որում ոչ թե ուժային, այլ՝ սոցիալապես մշակված մեթոդներով: Սահմանադրականության քաղաքական համակարգը միավորում և փոխադարձ հավասարակշռում է պետության և քաղաքացիական հասարակության սոցիալ-քաղաքական շահերը՝ չթույլատրելով անհիմն միջամտություն որևէ մեկի կողմից սահմանադրական ազատությունների և իրավունքների

ոլորտ: Հատկանշական է, որ Ա.Ն. Մեդուշևսկին համարում է, որ սահմանադրականությունը կարող է մեկնաբանվել որպես հասարակության կողմից սոցիալական կոնֆլիկտի գիտակցում, որպես այդ սոցիալական կոնֆլիկտի գործիքակազմային լուծման մեթոդ և, ի վերջո, որպես քաղաքական համակարգի որոշակի երևույթ [23]: Ըստ պրոֆեսոր Ա. Հարությունյանի՝ այն երկրներում, որտեղ քաղացիական հասարակությունը կայացած էր, սահմանադրականությունը ապահովում էր դեպի ժողովրդավարության թևակոխման գործընթացը՝ սկսելով պետության ղեկավարի գործառույթների սահմափակման և խորհրդարանական գործառույթների ընդլայնման ապահովումից [24]: Նշված դիրքորոշման հետ փոխկապակցված է Մուխայեվի կարծիքը, համաձայն որի սահմանադրականությունը ձևական էր այն երկրներում, որտեղ քաղաքացիական հասարակությունը կայացած չէր [25]: Միաժամանակ պետք է նկատել, որ ցանկացած երկրում, որը ժողովրդավարական զարգացման ուղի է ընտրել, առանցքային նշանակություն պետք է ունենա հակակշիռների և զսպումների մեխանիզմի երաշխավորումը, իսկ այդ ափահովելու համար բավարար չէ զուտ ժողովրդավարական քաղաքական համակարգին բնորոշող գաղափարներին ձգտելը: Գտնում ենք, որ ժողովրդավարությունը՝ որպես սահմանադրական սզբունք, արժեք, գտնվում է այլ սահմանադրական սկզբունքների հետ ուղղակի կապի մեջ: Իր հերթին սահմանադրականությունը՝ որպես համակարգ, իր մեջ ներառում է նաև ժողովրդավարական բոլոր արժեքները, այսինքն չի կարող լինել ժողովրդավարություն առանց սահմանադրականության և հակառակը:

Դիտարկելով սահմանադրականությունը իրավաքաղաքական ռեժիմի (ժողովրդավարության) հետ անքակտելի կապ ունեցող, «ընդհանուր-մասնավոր» հարաբերակցության լույսի ներքո՝ գտնում ենք, որ ժողովրդավարությունը դառնում է ամբողջական, և վերջինիս գաղափարների կատարումը երաշխավորվում է սահմանադրականության միջոցով, քանի որ սահմանադրականությունը արձանագրում է սահմանադրական պետության, պառլամենտարիզմի, իշխանությունների բաժանման, հակակշիռների և զսպումների մեխանիզմի, սահմանադրության գերակայության և սահմանադրության անմիջական գործողության երաշխավորված ապահովումը: Արդյունքում կարող ենք նշել, որ ընդհանուր առմամբ սահմանադրականությունը՝ որպես իրավաքաղաքական համակարգ, ապահովում է իշխանությունների բաժանումը, միավորում և փոխադարձ հավասարակշռում է պետության և քաղաքացիական հասարակության սոցիալ-քաղաքական շահերը՝ չթույլատրելով անհիմն միջամտությունները, արդյունքում երաշխավորելով հասարակության ներսում արդարության և ներդաշնակության առկայությունը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. *Հարությունյան Գ.* Սահմանադրական մշակույթ: Եր., «Նժար», 2005թ.
2. *Хабриева Т.Я., Чиркин В.Е.* Теория современной конституции. М.: Норма, 2007. СС. 105–110.
3. *Գ.Գ. Հարությունյան,* Սահմանադրությունից՝ սահմանադրականություն. Եր., «Նժար», 2004թ, էջեր 6–7:
4. *Берман Г.Дж.* Западная традиция права: эпоха формирования. Пер. с англ. М. 1994. СС. 370.
5. *Барабашев Г.В., Мишин А.А.* Государственное право буржуазных и развивающихся стран. М., 1989. С. 67:
6. Там же. С. 84:

7. *Витрук Н.В.* Развитие конституционализма в Российской Федерации (в контексте правовых позиции Конституционного суда Российской Федерации) // Проблемы развития и совершенствования российского законодательства. Сб. Ст. Ч. 1. Тоск., 1999, СС. 12–22:
8. *Тряхина Т.М.* Конституционная доктрина. Дис. …д-ра юрид. Наук. Саратов, 2004. СС. 37–38.
9. *Василевич, Г.А.* Конституция. Человек. Государство – Минск: Право и экономика, 2001. СС. 59–60.
10. *Арановский, К.В.* Конституция как государственно-правовая традиция и условия ее изучения в российской правовой среде «Правоведение», СПб: Университетский издательский консорциум «Юридическая книга»2008. № 1. СС. 43–45.
11. *Кабышев В.Т., Пряхина Т.М.*, Теоретические проблемы российского конституционализма // Вестник Саратовской государственной академии права, 1995. № 2, С. 32.
12. Տե՛ս *Кабышев В.Т.* Конституционализм в современной России // Материалы Всероссийской конференции «Конституционное и административное право». М., 2000. էջ 11:
13. *Հարությունյան Գ.Գ.* Սահմանադրությունից՝ սահմանադրականություն. Եր., «Նժար», 2004թ, էջ 5:
14. *Арутюнян Г.Г.* Конституционализм как фундаментальный принцип права в правовом государстве, «Конституционное правосудие» // Вестник Конференции органов конституционного контроля стран новой демократии, Вып. 1 (55) 2012. СС. 12–13.
15. Նոր հազարամյակի սահմանադրականությունը. Իրականության պարադիգմաները և մարտահրավերները: Լույս է տեսել ՀՀ սահմանադրական դատարանի նախագահ, իրավագիտության դոկտոր, պրոֆեսոր *Գ.Գ. Հարությունյանի* նախաձեռնությամբ: Եր., «Նժար», 2013, էջեր 35–40:
16. Marckx v. Belgium [1979] no. 6833/74, Sunday Times v. The United Kingdom, No. 6538/74, §49, 2 EHRR 245., Steel and Others v. The United Kingdom, No. 24838/94, §54, 1998-VII, No. 91.
17. Mooren v. Germany, judgment of 9 July 2009, No. 11364/03
18. *Popelier P.* The role of the Belgian Constitutional Court in the Legislative Process, Statute Law Review, Vol. 26, 2005, PP. 22–40.
19. The Twilight of Constitutionalism? , edited by *Petra Dobner and Martin Loughlin*, 2010, Oxford University Press, էջեր 9-11; *Cass R. Sunstein*, Designing democracy: What Constitutions do (2001) Oxford University Press. PP. 47–49.
20. *Mark E. Brandon* Constitutionalism and constitutional failure, The Good Society, Vol. 9, No. 2 (1999). PP. 62–63.
21. История буржуазного конституционализма XIXв. / Под ред. В.С. Нерсесянца. М., 1986. СС. 13–15.
22. *Сонина Л.В.* Конституционализма в Российской Федерации как политико-правовой режим: Автореф. дис... на Соискание научной степени канд. юрид. наук /Л. Сонина. Екатеринбург, 2001. СС. 7–8.
23. *Медушевский А.Н.* Демократия и авторитаризм: Российский конституционализм в сравнительной перспективе. М., 1998.
24. *Арутюнян А.А.* Конституционализм: проблемы постсоветской реальности. М.: Норма, 2013, СС. 88–89.
25. *Мухаев Р.Т.* Политология. М., 2003. С. 189.

ПОНЯТИЕ КОНСТИТУЦИОНАЛИЗМА И ЕГО СВЯЗЬ С НЕКОТОРЫМИ ПРАВОВЫМИ ЯВЛЕНИЯМИ

А.П. Вардеванян

АННОТАЦИЯ

В рамках данной научной статьи представлены мнения ряда авторов относительно понятия и значения конституционализма, после обобщения которых автор представляет свою позицию. Автор в частности подчеркивает важность той позиции, согласно которой конституционализм надо рассматривать и принимать не просто как часть конституционного права или теории права, а как общеправовой принцип.

Также рассмотрены вопросы относительно связи между конституционализмом и некоторыми правовыми явлениями. В статье проанализирована связь между конституционализмом и принципом правовой определенности. В частности, представлены правовые позиции Европейского суда по правам человека, а также Конституционного Суда РА. Рассмотрены также вопросы, касающиеся связи между конституционализмом и политико-правовым режимом.

Ключевые слова: конституционализм, верховенство конституции, принцип правовой определенности, политико-правовой режим, демократия, разделение властей.

DEFINITION OF CONSTITUTIONALISM AND ITS CONNECTION WITH CERTAIN LEGAL PHENOMENA

A. Vardevanyan

SUMMARY

The article presents the definition and importance of constitutionalism provided by numerous legal scholars and, having summarized them, the author introduces his own position regarding it. The author gives paramount importance to the position, according to which constitutionalism should be considered and accepted not as part of Constitutional Law or Theory of Law, but as a general principal of Law.

The connection of constitutionalism and other legal phenomena is also examined. Taking into account the legal approach adopted by the European Court of Human Rights and the Constitutional Court of RA, the author thoroughly analyzes the connection between constitutionalism and the principle of legal certainty. The connection between constitutionalism and political-legal regime is also investigated.

Keywords: constitutionalism, rule of constitution, principle of legal certainty, political-legal regime, democracy, separation of powers.

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՊԱՅԹՅՈՒՆԻ ՎԱՅՐՈՒՄ

Ամփոփ մեկնաբանություններ գործող ուղեցույցի վերաբերյալ

Հ.Հ.Ղուկասյան

Ուղեցույց քննիչների և քրեագետների համար

Քննչական խմբի առաջնային գործողությունները դեպքի /պայթյունի/ վայրում.

1. Կազմակերպել տուժածների առաջին բուժօգնությունը և անհրաժեշտության դեպքում՝ զոհվածների իդենտիֆիկացիան:

2. Փոխգործակցություն կազմակերպել դեպքի /պայթյունի/ վայրում գտնվող իրավապահ մարմինների, հրամանատարական անձնակազմի /տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչների/ միջև:

3. Պայթյունի վայրից հեռացնել կողմնակի անձանց:

4. Միջոցներ ձեռնարկել այլ հնարավոր վտանգավոր հետևանքները /նոր պայթյուններ, փլուզումներ, հրդեհի առաջացում և այլն/ բացառելու ուղղությամբ:

5. Ստուգել պայթյունի վայրի պահպանությունը և անհրաժեշտության դեպքում ուժեղացնել այն:

6. Հարցման միջոցով ականատեսներից տեղեկանալ պայթյունի հանգամանքներին և դրանց հետ հնարավոր առնչություն ունեցող անձանց վերաբերյալ: Գրառել ականատեսների տվյալները:

7. Ճշտել ականատեսներից՝ ինչ հնարավոր փոփոխությունների է ենթարկվել դեպքի վայրը մինչ քննչական խմբի ժամանելը:

8. Ստանալ տեղեկատվություն դեպքի վայրի իրադրության վերաբերյալ մինչ պայթյունը: Կախված տեղանքից՝ ներգրավել զննությանը դեպքի վայրին լավ ծանոթ անձանց՝ հրամանատարներից, զինվորներից, տեղի բնակիչներից:

9. Բացատրել ընթերականերին և մասնագետներին նրանց իրավունքներն ու պարտականությունները:

10. Կապ հաստատել քննչական բաժնի ղեկավարի հետ և զեկուցել ժամանման, օպերատիվ իրավիճակի և ձեռնարկված միջոցառումների մասին:

11. Հաշվի առնելով վտանգավորության բարձր աստիճանը, որը կարող են պարունակել դեպքի վայրում չգործարկված պայթուցիկ սարքերը՝ բոլոր

գործողությունները դրանց և դրանցով կասկածվող առարկաների հետ պետք է կատարի պայթյունային գործի համապատասխան մասնագետը՝ սակրավորը կամ հատուկ նշանակության ստորաբաժանման պայթյունատեխնիկմասնագետը, իսկ խմբի անդամները պետք է անվտանգ տարածությունից հաստատված կապ պահպանեն վերջինիս հետ:

Դեպքի /պայթյունի/ վայրի զննության սկզբնական փուլը.

1. Մինչ զննության մասնակիցների մտնելը պայթյունի վայրի տարածք, անհրաժեշտ է միջոցներ ձեռնարկել հետագա աշխատանքների անվտանգության ապահովման ուղղությամբ: Դեպքի վայրի ընդհանուր պատկերի ընկալման նպատակով նախ պետք է կատարել արագացված դիտարկում: Միաժամանակ հարկ է հիշել, որ տեղանքում, որտեղ պայթել է գործարկված պայթուցիկ սարքավորումը, կարող է տեղադրված լինել մեկ ուրիշ պայթուցիկ սարքավորում, որն այլ տեսակի է կամ ունի գործարկման այլ եղանակ: Անհրաժեշտ է նաև կատարել տարածքի հետախուզում վտանգավոր վայրերը հայտնաբերելու և զննության մասնակիցների հետագա անվտանգությունն ապահովելու նպատակով: Նպատակային լուսանկարահանում և տեսանկարահանում կատարելուց հետո նպատակահարմար է փլուզել, ամրացնել կամ արգելափակել վտանգավոր հատվածները: Հոսանքազրկել կամ գազի սնուցումից անջատել համապատասխան սարքավորումները և միջոցներ ձեռնարկել դրանց հանկարծակի գործարկումը կանխելու ուղղությամբ:

2. Դեպքի վայրի զննության սկզբնական փուլում պարզել դեպքի ամբողջական պատկերը, որը հիմնվում է պայթյունի հետքերի ուսումնասիրման, առարկաների փողտեղակայման և ականատեսների ցուցմունքների վրա: Այդ փուլի հիմնական նպատակն է պարզել՝ «ինչ է կատարվել» և ինչ հետքեր և օբյեկտներ է պետք որոնել, ինչպես նաև ճշգրտել զննության ենթակա տարածքի սահմանները: Զննության սկզբնական փուլում որևիցե իրավիճակային փոփոխություններ դեպքի վայրում չեն կատարվում:

3. Պարզել հանցագործի դեպքի վայրին մոտենալու և դեպքի վայրից հեռանալու հնարավոր ուղիները, այն վայրերը /ճանապարհները, կառույցները նայլն/ որտեղից ականատեսները կարող էին տեսնել հանցագործին, դիտարկել նրա գործողությունները կամ այլ կասկածելի վարքագիծ տվյալ վայրում:

4. Հայտնաբերել հետքեր, առարկաներ և փաստաթղթեր, որոնք կարող էին անմիջական կապ ունենալ պայթյունի հետ և միջոցներ ձեռնարկել՝ պահպանելով դրանք անձրևի, ձյան, փոշու, արևի ճառագայթների, իսկ հրդեհի ժամանակ՝ կրակի և մրի ազդեցությունից, ինչպես նաև հնարավորինս սահմանափակել դրանց հետ շփում ունեցող անձանց թիվը: Ի հայտ

բերել նշված հետքերի, առարկաների և փաստաթղթերի հետ որևէ գործողություն կատարող անձանց՝ ֆիքսելով այդ գործողությունների բնույթը:

5. Պատկերացում կազմել դեպքի մեխանիզմի վերաբերյալ.

– պարզել, ինչ է կոնկրետ տեղի ունեցել՝ ի հայտ բերելով կատարվածում հանցագործության հատկանիշների առկայությունը,

– պարզել ենթադրյալ պայթյունի կենտրոնը. դրա մասին կարող են վկայել հարթության վրա ձագարաձև խոռոչը, առավել ինտենսիվ վնասումները՝ ճեղքվածքների և անցքերի տեսքով, մրի շերտանստվածքները, թերմիկ ազդեցության հետքերը /հալվածքները/, այրված հրահաղորդլարի մնացորդները և այլ հատկանիշներ,

– պատասխանել հետևյալ հարցին՝ երբ է տեղի ունեցել պայթյունը. կարևոր է պարզել ոչ միայն ժամը, այլ նաև պայթուցիկ սարքի գործած ման րոպեները /տեսաձայնագրող սարքերի, պայթյունավտանգ օբյեկտներում տեղակայված ստուգիչ սարքերի, երկաթուղային տրանսպորտում և ավիացիայում գործող հաշվառման համակարգերի, խափանված ժամացույցների միջոցով, ականատեսների բառերից և այլն/,

– ինչպես է տեղի ունեցել պայթյունը /պայթյունի վայրը, ինչ եղանակով, ինչ միջոցների կիրառմամբ/: Պայթուցիկ նյութի տեսակը /փշրտող գործողության պայթուցիկ նյութի պայթյուն, վառոդային կամ պիրոտեխնիկլիցքի պայթյուն, կենցաղային պայթյուն, օրինակ՝ գազի բալոնի և այլն/, պայթեցման եղանակը, էլեկտրական շղթայի առանձնահատկությունները, պայթուցիկ սարքում քողարկման բնույթը և այլն/,

– օժտված էր արդյոք գործարկված պայթուցիկ սարքը բեկորային գործողությամբ, թե գործել է ֆուգասային եղանակով: Տվյալ հարցի պարզաբանման նշանակությունը կարևորվում է դեպքի վայրի զննության սահմանների ճշգրտման, որոնվող օբյեկտների պատկերացման և պայթուցիկ նյութի որոշման նպատակով ֆիզիկաքիմիականհետազոտությունների համար առավել ինֆորմատիվ օբյեկտների ընտրության պարագաներում,

– ձևավորել նախնական վարկածներ հանցագործության մասնակիցների վերաբերյալ. պայթյունի կատարմանը ներգրավված անձանց մոտավոր թվաքանակը, դրանց արտաքին հատկանիշները, պրոֆեսիոնալ ունակությունների առկայությունը կամ բացակայությունը, պայթեցման գործի իմացությունը և այլն:

6. Կատարել պայթյունի ուժգնության մոտավոր հաշվարկ դրա տրոտիլային համարժեքությամբ: Այսինքն, որոշվում է տրոտիլի մոտավոր քանակը, որի պայթյունի հետևանքով կառաջանային այնպիսի ավերածություններ և վնասումներ, որոնք համանման կլինեին հետազոտվող պայթյունի հետևանքով առաջացածներին: Սակայն դրանից առաջ անրաժեշտ է պարզել, թե ինչ ձևով է կատարվել պայթուցիկ նյութի փոխակերպումը՝ այրման թե դետոնա-

ցիայի, ինչը ընդհանուր զննության փուլում հնարավոր է պարզել միայն որոշ որակական հատկանիշներով: Վնասման հետևանքով տեղաշարժի ենթարկված գոտիների հետքերի առկայությունը գործարկված պայթուցիկ սարքի բեկորների վրա վկայում է փշրտաղ գործողության պայթուցիկ նյութի կիրառման մասին, որի փոխակերպումը կատարվել է դետոնացման եղանակով: Խոշոր բեկորների առաջացումը բնութագրական է պայթուցիկ նյութի փոխակերպմանը այրման ձևով: Պայթուցիկ նյութի դետոնացումից առաջանում են առավել փոքր չափերով բեկորներ: Որոշ դեպքերում կարելի է պարզել, որ պայթուցիկ նյութը ելքի վրա ունեցել է «կրակիֆորս», ինչը վկայում է այն մասին, որ վերջինիս փոխակերպումը, ամենայն հավանականությամբ, կատարվել է այրման ձևով: Գործարկված պայթուցիկ սարքի պայթուցիկ նյութի այրման ձևով փոխակերպման ընթացքում ասֆալտի, բետոնի, գրանիտիտի պիթիրախները անգամ պայթյունի կենտրոնում զգալի վնասումներ չեն ունենում: Նման պայթուցիկ սարքերի գործարկումից խառնարաններ գրեթե չեն առաջանում, կամ դրանք ունենում են համեմատաբար փոքր չափեր:

7. Հայտնաբերել և ֆիքսել հավանական հանցագործի հետքերը, միջոցներ ձեռնարկել դրանց պահպանման համար, հետագա քրեագիտական հետազոտություններ կազմակերպելու նպատակով /այդ թվում, օդորոլոգիական հետազոտություններ, ինչպես նաև, կինոլոգի կողմից որոնողական աշխատանքներ կատարելիս/:

8. Որոշել զննության տարածքը, ճշտել դրա սահմանները կողմնորոշիչ օբյեկտներով, նշել հանգուցային հատվածները հետագա զննության համար: Որոնման շրջանների սահմանները որոշվում են գործարկված պայթուցիկ սարքի խոցման գործոնների ազդեցության հեռավորությամբ. բեկորային գործողության համար՝ բեկորների թռիչքի հեռավորությամբ, ֆուգասային գործողության համար՝ հարվածող ալիքի խոցման գործոնի պահպանման հեռավորությամբ: Գործարկված պայթուցիկ սարքի մնացորդների որոնման շրջանների սահմանները որոշելիս անհրաժեշտ է հաշվի առնել շրջակա միջավայրի առարկաների էկրանավորման գործոնի ազդեցությունը գործարկված պայթուցիկ սարքի բեկորների թռիչքի վրա, բեկորների թիրախներում մնալու հնարավորությունը, հարկ է նաև հաշվի առնել բեկորների հայտնվելը շենքերին շինությունների տանիքներին:

9. Որոշել դետալային զննության հաջորդականությունը, որը նպատակահարմար է կատարել պայթյունի կենտրոնից, օրինակ՝ բաց տարածքներում դեպքի վայրը բաժանելով 60-90° սեկտորների, իսկ փակ տարածքներում՝ 1-2մ կողմերով քառակուսիների:

Դեպքի վայրի զննությունը պլանավորելիս անհրաժեշտ է որոշել

– զննության անցկացման համար անհրաժեշտ ուժերը,

– զննության հաջորդականությունը,

– որոնման սահմանները,
որոնվող օբյեկտների անվանացանկը,
– դեպքի վայրի բաժանումը սեկտորների, հատվածների և այլն,
– տեխնիկական և այլ աշխատանքային միջոցների անվանացանկը,
– պարտականությունների բաժանումը զննության մասնակիցների միջև:

10. Դեպքի վայրի դետալային զննության համար օպերատիվ-քննչական խմբի ղեկավարին ճշգրտել խմբի յուրաքանչյուր անդամի գործառույթները:

11, Կատարել կողմնորոշիչ և տեսածիրային լուսանկարահանում: Կատարված սկզբնական լուսանկարահանումը և տեսանկարահանումը թույլ են տալիս պահպանել դեպքի վայրի իրավիճակային պատկերացումը՝ մինչ աշխատանքների անվտանգությունից ելնելով դրանում կատարվող փոփոխությունները:

12. Հաշվի առնելով հավաքագրված տվյալները՝ որոշել այլ մասնագետների /կոմունալ ծառայությունների աշխատակիցների, տեխնիկական աշխատողների, շինարարների, քիմիկոսների, ֆիզիկոսների և այլն/ ներգրավման անհրաժեշտությունը պայթյունի վայրի զննությանը և ապահովել դրանց ներկայությունը:

13. Որոշել անհրաժեշտ տեխնիկական միջոցների անվանացանկը, ստուգել դրանց առկայությունը և աշխատանքի համար պիտանելիությունը:

Դեպքի/պայթյունի/ վայրի դետալային զննությունը.

1. Դետալային զննության ընթացքում անհրաժեշտ է հայտնաբերել ենթադրաբար պայթյունին վերաբերվող հետքեր և առարկաներ, ապահովել պայթուցիկ սարքավորման հնարավորինս մաքսիմալ քանակի մնացորդների հավաքագրումը, դրանց ուսումնասիրումն ու վերլուծությունը առաջնային ինֆորմացիա ստանալու նպատակով, կատարել իրավիճակային վերլուծություն հանցագործության հանգամանքները պարզելու համար, կատարել պայթյունի վայրի վերակառուցում, այսինքն՝ իրավիճակի մտովի վերականգնում, որը խախտվել է առաջնային գործողությունների և բուն զննության ընթացքում:

2. Պայթյունի վայրի զննությունը հիմնականում սկսվում է պայթյունի կենտրոնի զննությունից:Նշված հատվածը որպես սկզբնակետ որոշվում է խառնարանի և ավերածությունների դիտարկմամբ: Առաջնահերթ զննվում է դեպի պայթյունի կենտրոն տանող ուղին, որն էլ հետագայում հանդիսանում է զննության մասնակիցների տեղաշարժման ճանապարհը:

3. Տրանսպորտային միջոցների պայթյունների ժամանակ զննությունն անհրաժեշտ է սկսել շրջակա տարածքից, քանի որ երթևեկելի մասի ազատման անհրաժեշտությունը կարող է բերել որոնվող օբյեկտների և հետքերի

կորստի: Այդպես, խոշոր պայթյունների ժամանակ փրկարար աշխատանքների կատարումը ԱԻՆ անձնակազմի կողմից բերում է հետքերի մի մասի և պայթուցիկ սարքավորման որոշ հատվածների կորստի:

4. Դեպքի վայրի զննության ժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել եղանակային պայմանները. անձրևն ու ձյունը կարող են մաքրել պայթուցիկ նյութի հետքերի որոշակի քանակություն, ոչնչացնել պայթուցիկ նյութի որոշ մասնիկներ և ջրի մեջ լուծվող կոմպոնենտներ: Այդ իսկ պատճառով նմուշների և օբյեկտների հավաքագրման հետ կապված բոլոր գործողությունները անհրաժեշտ է կատարել առաջնահերթ: Իսկ եթե պայմանները հնարավորություն չեն տալիս, անհրաժեշտ է միջոցներ ձեռնարկել պայթյունի հետքերը սկզբնական վիճակում պահպանելու համար:

5. Քանի որ մեծ տարածքի զննությունը ֆիզիկապես անհնար է իրականացնել մեկ մասնագետի կողմից, ուստի ամբողջ շրջակայքի նախնական զննությունից և դրա սեկտորների և մասերի բաժանումից հետո պետք է կազմել 2-3 հոգուց բաղկացած մի քանի խումբ՝ իրահանգավորելով զննության կատարման կարգի վերաբերյալ, միաժամանակ ուշադրությունը հրավիրելով առանձնահատկությունների վրա: Անհրաժեշտ է, որ նշված խմբերը զննության ամբողջ ընթացքում խորհրդակցեն պայթյունատեխնիկ-մասնագետի հետ: Միաժամանակ, ֆիզիկաքիմիական հետազոտություններով պայթուցիկ նյութի որոշման նպատակով օբյեկտների և նմուշների հավաքագրման բոլոր գործողությունները պետք է կատարվեն պայթյունատեխնիկ-մասնագետի կողմից: Ցանկալի է նաև, որ գործող յուրաքանչյուր խումբ հագեցված լինի մետաղորոնող սարքով:

6. Դետալային զննությունը անհրաժեշտ է սկսել պայթուցիկ նյութի մնացորդների որոնումից, որն իրագործվում է վիզուալ եղանակով, ինչպես նաև պայթյունի կենտրոնում կատարվող պեղումներով /առկա հետքերի ֆիքսումից հետո/, հողի զանգվածի մաղմամբ /մաղի միջոցով/, ձյան, ցեխի, փոշու զանգվածների հավաքմամբ: Պայթուցիկ սարքավորման մետաղական մնացորդների հայտնաբերման համար օգտագործվում է մետաղորսիչ կամ մագնիս: Զննության ընթացքում անհրաժեշտ է առգրավել

– ժամացույցի մեխանիզմներին նմանվող մնացորդներ, այդ թվում՝ լարման բռնակներ, առանցքներ և վալեր, ատամնավոր դետալներ, արտաքին երեսվածքի հատվածներ,

– հարուցիչների մնացորդներ, որոնք կարող են լինել կապսուլ-դետոնատորների և էլեկտրոդետոնատորների պարկուճների բեկորներ, լարեր, պլաստիկ խցաններ, զսպանակների մասնիկներ, հարվածիչներ և այլն,

– հրահաղորդ լարի մնացորդներ,

– հոսանքի լարման աղբյուրի մնացորդներ՝ էլեկտրական մարտկոցների իրանների հատվածներ, կոնտակտներ և այլն,

– տարբեր ռադիոդետալներ, տումբլերներ, անջատիչներ, էլեկտրապլատաների մնացորդներ, լամպերի և լարերի մնացորդներ,

– պայթուցիկ սարքավորման իրանից անջատված պլաստիկ և մետաղյա դետալներ՝ պայթյունի ներգործության հետքերով պլաստիկ և մետաղյա բեկորներ,

– ռազմամթերքի մասեր, ձեռքի նռնակների պայթյուցիչների հատվածներ և իրանների բեկորներ, նռնականետի կրակոցի շարժիչի մնացորդներ, ականների պայթյուցիչների հատվածներ և այլն,

– պայթուցիկ սարքավորումների քողարկիչներ՝ պայուսակներ, ստվարաթղթե և փայտյա տուփեր, պոլիմերային փաթեթների մնացորդներ և այլն:

7. Շինություններում և առարկաներում բեկորների հայտնաբերման պարագայում անհրաժեշտ է մանրակրկիտ նկարագրել բեկորների ներդրմամբ առաջացած վնասվածքները և զգուշորեն հանել դրանք՝ ֆիքսելով ներդրման խորությունը: Եթե բեկորների հանելը հնարավոր չէ, ապա առգրավվում է կրող օբյեկտն ամբողջությամբ կամ նրա մի մասը:

8. Արտաքին միջավայրի փոփոխված էլեմենտների զննությունն ու ֆիքսումը պետք է սկսել պայթյունից առաջացած խառնարանից և դրա շուրջն առկա մարման հետքերից, որից հետո կատարել խառնարանի շառավիղի, խորության, դրա շուրջ առկա ալիքաձև հատվածի բարձրության, ինչպես նաև պայթյունի կենտրոնից մինչև մոտակա անշարժ օբյեկտների տարածության չափագրումները, մանրակրկիտ զննել առարկաների ձևափոխման հատկանիշները, հալվածքները, պայթյունային առաջացման ծռվածությունները և կոտրվածքները, դրանց մակերեսներին առկա ճաքերը: Այդ ամենը կարևորվում է նրանով, որ պայթուցիկ սարքավորման մնացորդների և շրջակա օբյեկտների վրա կարող են գտնվել պայթուցիկ նյութի հետքեր և արգասիքներ /չգործարկված պայթուցիկ նյութի մասնիկներ և տարբեր խառնորդների միկրոհետքեր, մասնավորապես, էլեկտրական մարտկոցների էլեկտրոլիտի հետքեր/:

9. Պայթուցիկ նյութի տեսակը պարզելու համար անհրաժեշտ է վերցնել հողի զանգվածի /1 կգ ոչ պակաս/ նմուշներ պայթյունի խառնարանի հատակից, կողային մակերևույթներից և դրա շուրջ առկա ալիքաձև հատվածից. նույնը վերաբերում է ջրային /1լ ոչ պակաս/ և բուսական զանգվածներին: Յուրաքանչյուր փորձանմուշ փաթեթավորվում է առանձին կոնտեյներում կամ պոլիէթիլենային փաթեթում: Ուղեկցող գրառումներում նշվում են համեմատական հետազոտության համար /պայթուցիկ նյութի հայտնաբերման նպատակով/ վերցված փորձանմուշի համարը, առգրավման տեղը և ժամը: Զննվող տարածքի տարբեր հատվածներից վերցվում են նաև համեմատական հետազոտության համար ստուգիչ նմուշներ /հողի զանգվածի, փոշու, ձյան, ջրի և բուսականության/: Պայթյունի վայրից առգրավված պայ-

թուցիկ սարքավորման մնացորդները և համեմատական հետազոտության համար վերցված նմուշները փաթեթավորվում են առանձին կոնտեյներներում, պոլիէթիլենային փաթեթներում, կամ թղթյա ծրարներում, համապատասխան ուղեկցող գրառումներով: Հետագա հետազոտությունները թույլ են տալիս պարզել ինչպես կիրառված պայթուցիկ նյութը, այնպես էլ վերակառուցել պայթուցիկ սարքավորումը:

10. Շրջակա առարկաների վրա պայթուցիկ նյութի հետքային քանակների հայտնաբերման նպատակով առաջնահերթ զննվում են մարման գոտիներ պարունակող հատվածները, որոնք ֆիքսելուց հետո վերցվում են /քերվում են/ համեմատաբար փափուկ քերիչով /պոլիէթիլեն, տեֆլոն և այլն/ և տեղափոխվում հատուկ տարաներ /բյուքսեր/, որոնք համարակալվում են: Անմիջական պայթյունի օջախի մոտ գտնվող առարկաները /10-50սմ/ և մրի շերտանստվածքով պատված առարկաները մշակվում են օրգանական լուծիչով /սպիրտ, ացետոն/ թացացված թանզիֆեխծուծներով, իսկ այնուհետ թորած ջրով թացացված խծուծներով:

11. Կատարվում է հանգույցային և դետալային տեսանկարահանում և լուսանկարահանում:

12. Սկզբնական էտապում հավաքագրված տեղեկատվությունը ստուգվում և համադրվում է զննության ընթացքում պարզաբանված հանգամանքների հետ, առավել ուշադրությամբ վերլուծության են ենթարկվում ի հայտ եկած հակասությունները:

Դեպքի /պայթյունի/ վայրում առկա հետքերի ֆիքսումը և առգրավումը.

1. Զննության վերջին փուլում, օգտագործելով դետալային զննության ժամանակ ձեռք բերված բոլոր տվյալները և քննչական գործողության տեսաձայնագրությունը /եթե վերջինս ուղեկցվել է տեսաձայնագրությամբ/, ՀՀ Քր.դատ. օրենսգրքի պահանջներին համապատասխան կազմվում է արձանագրություն, որը պետք է տա ամբողջական և հստակ պատկերացում պայթյունի տեղանքի, հայտնաբերված և առգրավված հետքերի, առարկաների և փաստաթղթերի մասին: Դրանցից յուրաքանչյուրի վերաբերյալ անհրաժեշտ է նշել ճշգրիտ տեղակայումը, օբյեկտի վիճակը, խմբային և անհատականացնող հատկանիշները: Արձանագրությանը պետք է կցվեն սխեմաներ, որոնք գծվում են զննությամբ առանձնացված օբյեկտների մեջ եղած տարածության նշմամբ, և մասշտաբային պլաններ, քրեագիտական օբյեկտների ընդունված պայմանական անվանումներով և նշագրումներով:

2. Զննության ընթացքում կատարվում է հանգուցային և դետալային լուսանկարահանում, որի ընթացքում անհրաժեշտ է օգտագործել խորքային մասշտաբ, քանի որ պայթյունատեխնիկական հետազոտությունների հա-

մար էական նշանակություն ունի օբյեկտների փոխադարձ տեղակայումը և դրանց մեջ եղած տարածությունը: Դետալային լուսանկարահանումը կատարվում է մասշտաբային քանոնի օգտագործմամբ, որը տեղադրվում է անմիջականորեն օբյեկտի մոտ՝ նույն հարթության մեջ: Լուսանկարվող առարկան պետք է հնարավորինս ամբողջությամբ զբաղեցնի կադրը:

Դիակների դիրքը, պայթուցիկ սարքավորման մնացորդները, շրջակա միջավայրի փոփոխությունները ֆիքսվում են ըստ պայթյունի օջախի /նախնտրելի են համայնապատկերային, կողմնորոշիչ և հանգույցային լուսանկարահանման մեթոդները/:

3. Զննության տեսաձայնագրությունը օգտագործվում է նաև որպես շրջակա միջավայրում պայթյունի հետևանքները վերացնելու /տուժողներին օգնության ցուցաբերում, հրդեհների մարում, փլուզումների վերացում, դիակների տեղափոխում և այլն/ և բեկորների հավաքման, տարբեր կարգի նմուշառման ընթացքում առաջացած փոփոխությունների ֆիքսման միջոց:

4. Դեպքի վայրում հայտնաբերված ծավալային հետքերից /ոտնահետքեր, տրանսպորտային միջցների հետքեր և այլն/ ստացվում են գիպսե կամ պոլիմերային արտատպվածքներ, իսկ հայտնաբերված մատնահետքերը արտատպվում են դակտոժապավենի վրա: Պայթուցիկ սարքավորման մնացորդների և այլ առարկաների առգրավումից առաջ, հնարավորության դեպքում անհրաժեշտ է կատարել դրանց տարանջատումը. ըստ խմբերի առանձնացնել իրանի, փաթեթավորման, քողարկիչի մասերի ու բեկորների, հարուցիչի մնացորդների և այլ առարկաների, որոնք հայտնաբերվել են զննության յուրաքանչյուր սեկտորում, ինչը թույլ կտա պարզել բացակայող օբյեկտներն ու դրանց մասերը և անհրաժեշտության դեպքում վերսկսել վերջիններիս որոնումը:

5. Ապահովել առավելագույն զգուշություն պայթյունի հետքերի /մնացորդների/ ֆիքսման և փաթեթավորման ժամանակ, որպեսզի չխախտվի դրանց ամբողջականությունը, չոչնչացվեն հանցագործի հնարավոր մատնահետքերը, չվնասվեն օբյեկտների մակերեսները և չկորցվեն պայթյունի արգասիք հանդիսացող պայթուցիկ նյութի միկրոքանակությունները:

6. Առանձին առարկաների կամ տարանջատված առարկաների խմբերի փաթեթավորումը փաթեթներում կատարել ըստ պատկանելիության՝ իրանի մասեր, հարուցիչի, դետոնատորի բեկորներ, շրջակա միջավայրի վնասված օբյեկտների հատվածներ և այլն:

Բոլոր օբյեկտները մինչև փաթեթավորելը հարկ է փաթաթել բամբակով կամ տեղադրել թղթյա փաթեթում: Փաթեթավորման ընթացքում առարկաները փոշուց և խոնավությունից պահպանելու նպատակով ուշադրություն դարձնել վերջիններիս հերմետիկության վրա:

Ֆիզիկաքիմիական հետազոտության համար օբյեկտների հավաքա-

գրման անմիջական գործողությանը պետք է անցնել պայթյունի վայրի զննության սկզբնական փուլի ավարտից հետո: Պայթյունի վայրում առկա ավերածությունների և պայթյունի հետքերի /ավերածությունների բնույթը, խառնարանի չափը, փշրտող ներգործության հետքերի, բեկորների և խոցող էլեմենտների, մրի առկայությունը, չգործարկված պայթուցիկ նյութի մնացորդները և այլն/ արտաքին զննության արդյունքներից առավել կարևորվում է գոնե հավանական տեսանկյունից պայթուցիկ նյութի տեսակի որոշումը /փշրտող պայթուցիկ նյութ, վառոդ, պիրոտեխնիկական խառնորդ/, որը դիտարկվում է որպես գործածված պայթուցիկ սարքավորման լիցք, ինչպես նաև համեմատաբար ամուր իրանի առկայությունը կամ դրա բացակայությունը պայթուցիկ սարքավորման կառուցվածքում: Հիմնվելով պայթուցիկ նյութի տեսակի և պայթուցիկ սարքավորման կառուցվածքի /իրանի առկայության/ նախնական հետևությունների վրա՝ կարելի է ընտրել առավել ինֆորմատիվ օբյեկտներ ֆիզիկաքիմիական հետազոտության համար:

Բոլոր դեպքերում հետազոտության համար օբյեկտների առգրավման և փաթեթավորման գործողությունները պետք է կատարվեն ռետինե ձեռնոցներով և մաքուր գործիքների, լուծիչների, փաթեթավորման նյութերի օգտագործմամբ: Անհրաժեշտ է բացառել օբյեկտների զննության, հավաքագրման և փաթեթավորման գոտում այլ պայթուցիկ նյութերի /համեմատական, ստուգիչ նմուշներ և այլն/ կամ պայթուցիկ նյութեր պարունակող առարկաների առկայությունը, ինչպես նաև դրանց հետ ցանկացած շփումը աշխատանքների կատարման ընթացքում: Ֆիզիկաքիմիական հետազոտության համար առավել կարևոր օբյեկտներ են հանդիսանում պայթյունի վայրում հայտնաբերված այն առարկաների և դետալների բեկորները, որոնք անմիջականորեն հանդիսացել են պայթուցիկ սարքավորման մաս /իրան, հարուցման միջոց, սնուցման էլեմենտներ, քողարկման պարագաներ, ժամացույցի մեխանիզմ և այլն/: Դրանք հանդիսանում են առավել ինֆորմատիվ, քանի որ կարող են պարունակել ոչ միայն պայթյունի հետևանքով առաջացած, այլ նաև պայթուցիկ սարքավորման պատրաստման ընթացքում հանցագործի կողմից թողնված պայթուցիկ նյութի հետքեր, մասնավորապես՝ փոշենման և գրանուլացված պայթուցիկ նյութի օգտագործման պարագայում: Նշված օբյեկտներն առգրավվում են ռետինե ձեռնոցներով, առանց դրանց թափահարման և արկաախտոտվածության, մրի և այլ նստվածքների մաքրման, փաթեթավորվում են պոլիէթիլենային փաթեթների կամ թղթյա ծրարների մեջ: Եթե օբյեկտները պարունակում են խոնավության հետքեր /անձրև, ձյուն, խոնավ միջավայր/, ապա կոռոզիայի ենթարկվելու և պայթուցիկ նյութի ջրալուծվող կոմպոնենտների մաքրման պրոցեսը բացառելու համար դրանք մինչ փաթեթավորելը անհրաժեշտ է չորացնել:

 Եթե դեպքի վայրում հայտնաբերվում է նյութ՝ 1գ կամ ավելի քանակու-

թյամբ, որը կասկածվում է որպես պայթուցիկ նյութի լիցքի մաս /օրինակ, ինչպես նախատեսված, այնպես էլ ինքնաշեն հարուցման միջոցներով պայթուցիկ նյութի լիցքի հարուցման սխալ պայմանների դեպքում, մասնակի դետոնացիայի, դետոնացիայի պրոցեսի մարման կամ ինչ-ինչ պատճառներով պայթուցիկ նյութի այրման հետևանքով/, ապա պայթյունատեխնիկ-մասնագետի կողմից կատարվում է նյութի նմուշառում, հետագա լաբորատոր հետազոտությունների համար: Վերցվում են նյութի երկուսից ոչ պակաս նմուշներ, տարբեր տեղերից. ընդ որում, նմուշն իր պարունակությամբ պետք է լինի ինֆորմատիվ և առարկայական /ոչ քիչ, քան 0.5գ/ և հնարավորինս չպարունակի այլ միացություններ: Նմուշները տեղադրվում են ապակյա բյուքսերում կամ պոլիէթիլենային փաթեթներում:

Դեպքի վայրում որպես պայթուցիկ նյութ կասկածվող օբյեկտ հայտնաբերելու դեպքում պայթյունատեխնիկ-մասնագետը կարող է անցկացնել դրա էքսպրեսս-անալիզը, որի արդյունքներով սակայն կարելի է միայն նախնական եզրակացության հանգել հետազոտվող նյութի պայթուցիկների նպատկանելիության և տեսակային տարանջատման վերաբերյալ: Վերջնական եզրահանգումն, ամեն դեպքում կատարվում է լաբորատոր, համապատասխան ֆիզիկո-տեխնիկական իդենտիֆիկացիոն հետազոտություններից հետո:

Եթե դեպքի վայրում հայտնաբերվում են չգործարկված պայթուցիկ նյութի առանձին մասնիկներ կամ պայթուցիկ նյութի բաղադրիչներ, օրինակ՝ ալյումինե մասնիկ, չայրված վառոդային էլեմենտներ, ապա նշված օբյեկտները նպատակահարմար է առգրավել, տեղադրել ապակյա բյուքսերում կամ պոլիէթիլենային փաթեթներում և ուղարկել լաբորատոր հետազոտության: Համանման ձևով պետք է գործել դեպքի վայրում շլաքաձև նյութի զանգվածի հայտնաբերման դեպքում, քանի որ վերջինս կարող է հանդիսանալ ծխատու վառոդի կամ պիրոտեխնիկ խարնորդի այրման արգասիք:

Պայթուցիկ նյութի հետքային քանակների ֆիզիկաքիմիական լաբորատոր հետազոտությունների նպատակով պայթյունի կենտրոնից և մոտակա գոտուց առգրավվում են հողի, փոշու, բուսականության, մանրացված ասֆալտի, բետոնի նմուշներ, մակերեսներից կատարվում են քերվածքներ և վերցվում են քսուկներ: Յուրաքանչյուր նման նմուշի հետ պետք է վերցնել ստուգիչ նմուշ, քսուկ կամ կատարել մակերեսի քերվածք: Հողի, մանրացված ասֆալտի կամ բետոնի նմուշները վերցվում են անմիջապես խառնարանից և դրա եզրերից: Եթե խառնարանը չափերով մեծ է, ապա նմուշները հատակից և վերին հատվածից կարելի է վերցնել առանձին: Յուրաքանչյուր նմուշի քաշը՝ 1-5կգ: Փոշու և բուսականության նմուշները վերցվում են խառնարանի եզրից և հարակից գոտուց: Համանման օբյեկտների ստուգիչ նմուշները վերցվում են պայթյունի կենտրոնից բավականին հեռավորության վրա գտնվող տարածքներից:

Պայթյունի կենտրոնում և մոտակա գոտում առկա առարկաներից և օբյեկտներից կատարվում են քերվածքներ և վերցվում են քուկներ: Եթե պայմանները թույլ են տալիս, ապա պայթունի հետքեր կրող օբյեկտները կամ դրանց առանձին հատվածները նպատակահարմար է առգրավվել, վերը նշված նմուշառման գործողությունները լաբորատոր պայմաններում կատարելու համար: Ընդ որում, միաժամանակ համանման օբյեկտների կամ առարկաների մակերեսներից պետք է վերցվեն ստուգիչ նմուշներ: Եթե պայթյունի հետքեր կրող օբյեկտների առգրավումը անհնար է /օրինակ՝ կառուցվածքային առաձնահատկությունների պատճառով/, ապա նմուշառման գործողությունները կատարում են տեղում՝ զննության ընթացքում:

Պայթյունի կենտրոնում և մոտակա գոտում պայթյունի հետևանքով առաջացած մրի կամ այրման արգասիքների նստվածքներ պարունակող առարկաներից և օբյեկտներից կատարվում են քերվածքներ: Առգրավված զանգվածները տեղադրվում են /փաթեթավորվում/ ապակյա բյուքսերում կամ պոլիէթիլենային փաթեթներում: Պայթյունի կենտրոնից որոշակի հեռավորության վրա գտնվող համանման օբյեկտի մակերեսից կատարվում են ստուգիչ քերվածքներ: Քուկները վերցվում են բամբակյա կամ թանզիվեխծուծներով, թացացված՝ ացետոնով /օրգանական նյութեր/ և ջրով /անօրգանական նյութեր/: Հնարավորութան դեպքում, ացետոնային և ջրային քուկները վերցվում են նույն չափի մակերեսներից և պայթյունի կենտրոնից նույն հեռավորությունից: Ջրային քուկների համար անհրաժեշտ է օգտագործել բիդիստիլյատ /կրկնակի թորում/: Ացետոնային քուկներով նմուշառման պարագայում հնարավորինս զերծ մնալ այլ օրգանական նյութերով /բիոլոգիական օբյեկտներ, քսայուղեր, ներկանյութեր և այլն/ նմուշների աղտոտումից: Ստուգիչ քուկները վերցվում են նույնատիպ խծուծներով և լուծիչներով՝ պայթյունի կենտրոնից որոշակի հեռավորության վրա գտնվող համանման օբյեկտների նույն չափի մակերեսներից: Ստացված քուկներով խծուծները փաթեթավորվում են պոլիէթիլենային փաթեթներում: Սակայն մինչ փաթեթավորումը դրանք նպատակահարմար է չորացնել:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ զննությունը նպատակահարմար է կատարել օրվա ցերեկային ժամերին՝ մեծ տարածքների դեպքում առաջանում է կրկնակի զննության անհրաժեշտություն /տարածքի պատշաճ պահպանումը ևս կարևորգոր ծառույթ է/: Այդ դեպքում ստացված ինֆորմացիայի նախնական վերլուծությունը թուլ է տալիս առավել նպատակային իրականացնել համապատասխան դիտարկումներ և հետազոտություններ կրկնակի զնութան ժամանակ: Դեպքի վայրի կրկնակի զննութունը կատարվում է նաև շինարարական տեխնիկայի աշխատանքներից հետո /օրինակ՝ փլուզումների վերացման դեպքում/:

ՎՃՌԱԲԵԿ ՎԱՐՈՒՅԹԻ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԸ

Ա.Ս. Նազարեթյան

ԱՄՓՈՓՈՒՄ

Սույն հոդվածը վերաբերում է վճռաբեկ դատարանի վարույթում քաղաքացիական գործերով կայացված դատական ակտերի բողոքարկման իրավունք ունեցող սուբյեկտների ցանկին: Պարունակում է նաև առաջարկներ նշված սուբյեկտների ցանկի ընդլայնման, և այդ կապակցությամբ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենս•իրքը որոշ դրույթներով լրացնելու մասին: Դա հիմնականում կատարվել է ՀՀ և ՌԴ ՔԴՕ-ների իրավահամեմատական վերլուծության և դատական պրակտիկայի հիմնան վրա:

Հիմնաբառեր՝ վճռաբեկ վարույթ, սուբյեկտ, բողոք, բողոքարկում, իրավունքներ, շահեր:

Քաղաքացիական դատավարության իրավունքի տեսության մեջ և պրակտիկայում վճռաբեկ վարույթի սուբյեկտների հետ կապված առաջանում են բազմաթիվ խնդիրներ, այդ թվում՝ կապված դատարանի վճիռների վճռաբեկ բողոքարկման հետ: Վճռաբեկ վարույթի սուբյեկտների խնդիրը (հարցը) ունի կարևոր նշանակություն: Հենց նրանց գործունեության արդյունքում կարող է առաջանալ վճռաբեկ վարույթի անհրաժեշտություն՝ վճիռների օրինականության և հիմնավորվածության ստուգման համար:

Ինչպես արդարացիորեն նշում է Վ.Վ. Յարկովը, առաջին ատյանի դատարանում գործը հարուցելու պահից սկսած գործին մասնակցող անձինք օժտվում են վճռաբեկ բողոքարկման հնարավորության իրավունքով: Քանի որ վճռաբեկ վերանայում հարուցելու դատարանի լիազորություն գոյություն չունի, ուստի դա անմիջականորեն կախված է գործին մասնակցող անձանց կամարտահայտությունից, որոնք և կարող են դիմել վճռաբեկ վերանայման համար[1]:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 223 հոդվածին համապատասխան ստորադաս դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած գործն ըստ էության լուծող դատական ակտը վճռաբեկ դատարանում բողոքարկելու իրավունք ունեն

1. գործին մասնակցող անձինք,

2. գլխավոր դատախազը և նրա տեղակալները՝ օրենքով նախատեսված դեպքերում (պետական գույքային և վարչական շահերի պաշտպանության հարցերով):

Վերաքննիչ դատարանի միջանկյալ դատական ակտերը և վերաքննիչ դատարան բողոքարկված միջանկյալ դատական ակտերի կապակցությամբ վերաքննիչ դատարանի ընդունած որոշումները բողոքարկելու իրավունք ունեն գործին մասնակցող անձինք: Գործին մասնակցող ֆիզիկական և իրավաբանական անձինք վճռաբեկ բողոք կարող են ներկայացնել նաև փաստա-

բանի միջոցով: Ըստ որում, անձը կարող է վճռաբեկ բողոք բերել դատական ակտի՝ միայն իր համար անբարենպաստ մասի դեմ:

Գործին մասնակցող անձինք իրենք են որոշում իրագործել թե չիրագործել վճիռը բողոքարկելու օրենքով իրենց վերապահված իրավունքը: Ընդսմին, գործում է հետևյալ սկզբունքը. «չկա բողոք, չկա վերանայում»:

Քաղաքացիական դատավարության իրավունքի գիտության մեջ գործի վարույթի ժամանակ դատավարական գործողություններ իրականացնելու միակողմանի հնարավորությունը ստացել է սեփական գործողություններ կատարելու իրավազորություն անվանումը, որն ունի իրավաստեղծ նշանակություն կամ միակողմանի կամարտահայտության լիազորություն[2]:

Վճռաբեկ բողոքարկման իրավունքի կառուցվածքի և բովանդակության մեջ որպես թույլատրելի վարքագծի չափ Պ. Ու. Կուզնեցովը առանձնացնում է իրավասությունների հետևյալ ամբողջությունը՝

1. վճռաբեկ բողոք բերելու իրավունքը,

2. այդ բողոքն ընդունելու և քննելու պահանջը,

3. վճռաբեկ վարույթի հարուցման և դատական որոշման օրինականության ու հիմնավորվածության ստուգման պահանջը,

4. օրենքի չկատարման և դատարանի (դատավորի) կողմից բողոք բերողի իրավասություններն իրականացնելիս խոչընդոտներ ստեղծելու դեպքում հարկադիր մեխանիզմների կիրառման հնարավորությունը[3]:

Ի հակադրություն ասվածի՝ Ա.Ս. Գրիցանովը կարծում է, որ նշված իրավունքը չի կարող դիտվել որպես սուբյեկտիվ իրավունք, քանի որ վերջինիս հատուկ է նրան հակադրվող իրավաբանական պարտականությունների առկայությունը: Դրա հետ մեկտեղ նա նշում է, որ գործին մասնակցող անձի միակողմանի կամարտահայտության իրավունքի իրագործման դեպքում առաջանում է քաղաքացիադատավարական սուբյեկտիվ իրավունք վերադաս դատարանի կողմից ստուգել վճիռը և կայացնել պատճառաբանված որոշում, իսկ վերադաս դատարանի մոտ առաջանում է պարտավորություն ստուգել վճռի օրինականությունը և հիմնավորվածությունը ու կայացնել համապատասխան որոշում [4]:

Դրա հետ կապված անհրաժեշտ է ընդգծել հետևյալը: Առաջին՝ սուբյեկտիվ իրավունքին ոչ միշտ է համապատասխանում այլ անձանց պարտականությունը: Իսկ սուբյեկտիվ իրավունքի համար, ինչպիսին հանդիսանում է իրավաստեղծ կամարտահայտման միակողմանի իրավունքը, բնութագրական է հենց պարտականությունների հետ դրա ուղիղ հարաբերակցության բացակայությունը [5]:

Երկրորդ՝ Ա.Ս. Գրիցանովի պնդումն այն մասին, որ բողոքարկման անհրաժեշտ բոլոր պայմանները պահպանելիս միակողմանի կամարտահայտության իրավունքը վերաճում է սուբյեկտիվ իրավունքի, առաջ է բերում

առարկություններ: Իրավաբանական (փաստական) կազմի կուտակման ավարտի դեպքում իրավունքի մի տեսակից մյուսին վերաճում տեղի չի ունենում և չի փոխվում դրա որակական վիճակը: Վճռաբեկ բողոք բերելու իրավազորությունը և բողոք բերող անձի իրավունքը պահանջել դատարանից կատարելու օրենքով նախատեսված գործողությունները առաջ են գալիս միաժամանակ, այսինքն՝ բոլոր անհրաժեշտ նախադրյալների առկայության դեպքում: Միայն թե լիազորությունների կատարումը տեղի է ունենում տարբեր ժամանակներում և օրենքով խստորեն սահմանված կարգով: Ըստ որում, վճռաբեկ բողոքարկման իրավունքն ինքնին չի փոխում իր որակը:

Ի տարբերություն ավելի վաղ գործող դատավարական օրենքի՝ ՀՀ ՔԴՕ-ն, ելնելով կողմերի իրավահավասարության սահմանադրական սկզբունքից (ՀՀ Սահմանադրություն 14.1, 18 հոդվածներ), դատախազին իր կողմից չհարուցված գործերով չի օժտում բողոք բերելու և դատարանից գործը պահանջելու ու ստանալու իրավունքով: Բողոք բերելու նրա իրավունքը սահմանափակված է միայն իր հարուցած գործերով (ՔԴՕ 223 հոդվ.):

1964թ. ՔԴՕ դրույթներին համապատասխան դատախազը բողոք էր բերում դատարանի անօրինական և չհիմնավորված որոշման դեմ անկախ նրանից, թե նա մասնակցել էր տվյալ գործին, թե այն քննվել էր իր բացակայությամբ:

Համաձայն ՔԴՕ 223 հոդվածի 2-րդ կետի՝ ստորադաս դատարանի օրինական ուժի մեջ մտած գործն ըստ էության լուծող դատական ակտը վճռաբեկ դատարանում բողոքարկելու իրավունք ունեն ՀՀ գլխավոր դատախազը և նրա տեղակալները, այդ թվում՝ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ ՀՀ զինվորական դատախազը օրենքով (ՔԴՕ 37 հոդվածով) նախատեսված դեպքերում, այսինքն՝ երբ առաջին ատյանի դատարանում դատախազությունն է հայց հարուցել պետության գույքային շահերի պաշտպանությամբ անկախ համապատասխան պետական մարմնի կողմից վճռաբեկ բողոք ներկայացնելու հանգամանքից (ՀՀ Սահմանադրության 103. ՔԴՕ 223, Դատախազության մասին ՀՀ օրենքի 28 հոդվածներ):

Քաղաքացիական դատավարությունում դատախազի տեղի և դերի մասին հարցը ներկայումս համարվում է վիճելի:

Ռուս որոշ դատավարագետներ գտնում են, որ քաղաքացիական դատավարությունում անհրաժեշտ է աստիճանաբար սահմանափակել դատախազի իրավունքները[6], որը և ՀՀ-ում արդեն արվել է (ՀՀ ՔԴՕ 37 հոդվածի 3-րդ կետ):

Հակառակ տեսակետի կողմնակիցներն ընդհակառակը առաջարկում են ընդլայնել դատախազի իրավունքները [7]:

Մենք ևս գտնում ենք, որ քաղաքացիական գործերի քննության ժամանակ դատախազի մասնակցությունը պետք է դիտվի ավելի շատ որպես բա-

ցառություն՝ պայմանավորված հասարակական շահերի անհրաժեշտ պաշտպանությամբ, եթե անձի համար ծայրահեղ դժվար է ինքնուրույն դիմել արդարադատությանն իր իրավունքների պաշտպանության նպատակով և ստանալ այդպիսի պաշտպանություն: Արդարադատությունը մատչելի դարձնելու խոչընդոտների վերացմանը (որն, առաջին հերթին, կապված է դատարաններում մատչելի մասնագիտական իրավաբանական օգնության ընդլայնմամբ և որակյալ իրավաբանական օգնության ծավալմամբ) դատախազի մասնակցությունը, այսինքն՝ մասնավոր իրավունքից բխող վեճերի քննությանը նրա մասնակցությունը, ՌԴ-ում ևս, ինչպես առաջարկվում է գրականության մեջ, պետք է կրճատվի [8]: Մասնավորապես Եվրոպայի խորհրդի փորձագետները կարծում են, որ քաղաքացիական գործում դատախազի աջակցությունը կողմերից մեկին համարվում է մրցակցության սկզբունքի խախտում[9]:

Մյուս կողմից, ինչպես դեռ 20-րդ դարի սկզբին նշել է ռուս հայտնի իրավաբան Ե.Վ. Վասկովսկին. «Մրցակցության սկզբունքը կարող է օգտակար և նպատակահարմար լինել միայն այն պայմաններում, երբ երկու դատավիճող կողմերը համարվում են հավասարազոր, հավասարաչափ պատրաստված և հմուտ մրցակիցներ են: Այդ դեպքում դատարանին միայն մնում է լուռ հետևել նրանց մենամարտին և անաչառորեն որոշել, թե նրանցից ով է հաղթել: Բայց եթե կողմերը հավասարազոր չեն, ապա մրցակցության սկզբունքը կհանգեցնի նրան, որ ուժեղը կհաղթի թույլին: Կողմերի անհավասարազորության վտանգավոր ազդեցությունը վերացնելու համար անհրաժեշտ է կատարել երկուսից մեկը. կա՛մ ապահովել գործին մասնագետ-իրավաբանի պարտադիր մասնակցությունը, կա՛մ էլ գործի փաստական հանգամանքների հաստատումը, այդ թվում՝ գործով կողմերին աջակցություն ցուցաբերելու պարտականությունը, դնել դատարանի վրա» [10]:

Այս կապակցությամբ դատավարագետները, ըստ մեզ, հիմնավոր կարծիք են հայտնում այն մասին, որ դատախազին դիտարկելով որպես հատուկ սուբյեկտ անհրաժեշտ է հաշվի առնել ոչ միայն դատական համակարգի անկախության կանխադրույթը, այլ նաև հիշել արդարադատության սոցիալական գործառույթները քաղաքացիների իրավունքները պաշտպանելու առումով: Դիմելով դատարան ուրիշների շահերի պաշտպանության համար՝ դատախազը ոչ միայն իրականացնում է իր լիազորությունները, այլև ապահովում է արդարադատության մատչելիությունը առաջին հերթին այն անձանց համար, ովքեր չեն կարող պաշտպանել իրենց իրավունքները[11]:

Այս հարցի ավելի ճիշտ լուծումը մեզանում եղավ այն, որ Հայաստանում սոցիալական պաշտպանության կարիք ունեցող բոլոր անձանց տրամադրվեց որակյալ անվճար իրավաբանական օգնություն (Փաստաբանության մասին ՀՀ օրենքի 6, 41, 42 հոդվածներ):

Ներկայումս Հայաստանում իրավացիորեն դատախազը հսկողություն չի իրականացնում ընդհանուր իրավասության դատարանների գործունեության օրինականությանը հետևելու համար, այսինքն՝ բացառվել է պետության՝ ի դեմս դատախազության, մասնավոր իրավունքին, քաղաքացիների մասնավոր շահերին միջամտելու իրավունքը:

Պետության գույքային շահերի պաշտպանության գործերով օրինական ուժի մեջ մտած դատական ակտերը ՀՀ գլխավոր դատախազը և նրա տեղակալները կարող են վճռաբեկության կարգով բողոքարկել սեփական նախաձեռնությամբ: Դրա համար առիթներ կարող են հանդիսանալ նաև մարզի, Երևան քաղաքի՝ վճռաբեկ բողոք բերելու իրավունք չունեցող դատախազների կողմից ՀՀ գլխավոր դատախազին կամ նրա տեղակալներին կատարված ներկայացումները: Այդ գործողությունն իրականացնելու համար Դատախազության մասին ՀՀ օրենքը ՀՀ գլխավոր դատախազին և նրա ենթակա դատախազներին իրավունք է վերապահել դատարանից պահանջելու ցանկացած գործ, որի վերաբերյալ դատական ակտը մտել է օրինական ուժի մեջ: Եվ որովհետև գործը դատարանից պահանջող մարզի դատախազը և նրանից ցածր դատախազներն օժտված չեն վճռաբեկ բողոք բերելու իրավունքով, ուստի սահմանված է, որ նրանք վճռաբեկ բողոք բերելու միջնորդությամբ դիմում են վերադաս, տվյալ դեպքում՝ ՀՀ գլխավոր դատախազին կամ նրա տեղակալներին (Դատախազության մասին ՀՀ օրենքի 28 հոդված):

Թեկուզև օրենքը ՀՀ գլխավոր դատախազին կամ նրա տեղակալներին նրանց ենթակա դատախազների կողմից կատարվող ներկայացումների բովանդակությունը չի կարգավորվում, այնուամենայնիվ դրանք պետք է լինեն փաստարկված, պարունակեն գործի մանրամասն վերլուծությունը, դրանով թույլ տրված սխալները, կարծիք հայտնեն այն մասին, թե ինչպես պետք է լուծվեր գործը՝ ելնելով դրանում եղած նյութերից և գործող նյութական ու դատավարության օրենսդրությունից [12]:

Դատավարագիտության տեսության և դատական պրակտիկայի համար չափազանց կարևոր է այն հարցը, թե նախորդ ատյաններում (առաջին ատյան, վերաքննիչ ատյան) գործին մասնակից չդարձված անձինք իրավունք ունեն արդյոք վճռաբեկ բողոք բերել: Այդ հարցը քաղաքացիական դատավարության մեջ վիճելի էր նաև ՌԴ-ում [13]: Մինչդեռ այն անձանց իրավունքների ու պարտականությունների հստակ կարգավորումը, ովքեր չեն մասնակցել գործին, բայց որոնց իրավունքների ու պարտականությունների վերաբերյալ ստորադաս դատարանը ընդունել է դատական ակտ, ունի պրակտիկ մեծ նշանակություն, քանի որ հաճախ տեղի է ունենում նշված անձանց իրավունքների խախտում, ինչն անթույլատրելի է, և յուրաքանչյուր դեպքում պետք է ապահովել նրանց իրավունքների ամբողջական իրականացումը:

Ելնելով այս կարևորագույն կանխադրույթից և արդարադատության

մատչելիության վերաբերյալ Եվրոպական կոնվենցիայի (1950թ.) 6-րդ հոդվածի դրույթից՝ ՌԴ օրենսդիրն իր 2010թ. դեկտեմբերի 9-ի № 353 դաշնային օրենքով «Վճռաբեկ դատարան դիմելու իրավունք»-ը ՔԴՕ 376-րդ հոդվածի առաջին մասում ձևակերպեց հենյալ կերպ. «Օրինական ուժի մեջ մտած դատական ակտերը կարող են բողոքարկվել նաև այլ անձանց կողմից, եթե նրանց իրավունքները և օրինական շահերը խախտվել են դատական որոշումներով»:

Դատական ակտերը բողոքարկելու իրավունքը բխում է ՀՀ Սահմանադրության 18,19, 20-րդ հոդվածների դրույթներից և չի կարող կախված լինել սուբյեկտին ձևականորեն գործին մասնակցող անձ ճանաչելու հետ:

Ստորադաս ատյանի դատարանում գործին չմասնակցած անձինք իրականում պետք է վճռաբեկ բողոք բերելու իրավունք ունենան, քանի որ խախտված իրավունքները պաշտպանելու պարտականությունը յուրաքանչյուր դատարանի (այլ ոչ թե առաջին կամ վերաքննիչ դատարանների) պարտականությունն է:

Սրանով հաստատվում է, որ գործին չմասնակցող անձանց իրավունքներն ու օրինական շահերը, որոնք իրականում խախտվում են դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած որոշմամբ, դառնում են համապարտադիր, իսկ համապարտադիր որոշումը նշանակում է, որ այն ենթակա է պարտադիր կատարման անկախ նրանից արդյոք այն շոշափում է սուբյեկտի իրավունքներն ու պարտականությունները, ում վերաբերյալ վեճը չի քննարկվել:

ՀՀ ՔԴՕ նորմերը կանխորոշում են վճռաբեկ ատյանում սեփական նախաձեռնությամբ ստուգելու դատարանի որոշման օրինականությունը դրանցում բեկանման համար բացարձակ հիմքերի առկայության տեսանկյունից, եթե գործը ստուգվում է գործին մասնակցող անձի բողոքի հիման վրա, բայց բողոք բերելու իրավունք չի տալիս գործին չմասնակցող անձանց, մինչդեռ դատարանի որոշումը իրական կյանքում պարտադիր է դառնում նաև գործին մասնակից չդարձված անձանց համար, որը մեր կարծիքով արդարացի չէ:

Շատ դատավարագետներ իրավամբ վճռաբեկ վարույթը համարում են դատարանի որոշումների օրինականության և հիմնավորվածության ստուգման ավելի արագ և ավելի մատչելի միջոց [14]: Քաղաքացիական դատավարության օրենսդրությունը, անշուշտ, այն բոլոր անձանց համար, որոնք մասնակցել են գործին, հնարավորություն է տալիս դիմելու վերադաս ատյանի դատարան՝ վերանայելու ստորադաս ատյանի դատարանի որոշումը, սակայն դա պետք է նախատեսված լինի օրենքով: Այսպես, Ա.Վ. Դոլժիկովը, ուսումնասիրելով մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների սահմանափակման թույլատրելիության սահմանադրական չափանիշները, որոնք ներառում են նաև դատական պաշտպանության իրավունքը, գալիս է այն եզրահանգման, որ անհրաժեշտ է սահմանել հիմնական իրավունքների նվա-

զագույն նորմատիվ-իրավական կարգավորումներ՝ դրանց էական բովանդակության պահպանման համար: Այն աղավաղվում է, երբ հնարավոր չէ օգտվել հիմնական իրավունքներից կամ էլ բացակայում են դրա իրականացման իրավական երաշխիքները [15]:

Օ.Յ. Սկվորցովի կարծիքով եթե բողոքը բերվել է օրենքով սահմանված կարգով և այն անձի կողմից, ով չի մասնակցել գործին, բայց նա հայտնում է, որ բողոքարկվող դատական ակտով լուծվել է իր իրավունքների կամ պարտականությունների հարցը, ապա բողոքն ըստ էության ենթակա է վերանայման: Մենք ևս գտնում ենք, որ այդ կերպ իսկապես կիրականացվեն այն անձանց իրավունքները, որոնք չեն մասնակցել գործին, բայց կարծում են, որ ընդունված դատական ակտով շոշափվել են իրենց իրավունքները [16]:

Համանման տեսակետ ունի նաև Ա.Ս. Կոժեմյակոն. նա կարծում է, որ բողոքարկման սուբյեկտների շրջանակը չպետք է սահմանափակվի որևէ հատկանիշներով: Նա ենթադրում է, որ բողոքարկման իրավունքի սուբյեկտ փաստացի կարող է լինել գործին մասնակցող կամ չմասնակցող ցանկացած անձ անկախ նրանից արդյոք իսկապես այդ որոշմամբ շոշափվել են նրա իրավունքները, թե՝ ոչ: Որպեսզի դատարանը բողոքը ընդունի վարույթ, դիմողին բավարար է միայն բողոքարկվող որոշմամբ իր իրավունքների խախտման վկայակոչումը: Գործի քննության ընթացքում նման խախտման փաստն ինքնին ենթակա է ապացուցման [17]: Նշվածը թույլ է տալիս գալ այն եզրահանգման, որ տվյալ դեպքում ՀՀ ՔԴՕ-ում առկա է բացթողում՝ վճռաբեկ վարույթ նախաձեռնելու իրավունքով օժտված անձանց շրջանակի կարգավորման հետ կապված:

Վերը շարադրվածների հիման վրա գտնում ենք, որ ՀՀ ՔԴՕ 223 հոդվածում պետք է առանձին կետով նախատեսել գործին չմասնակցող անձանց բողոք բերելու իրավունքը՝ այն շարադրելով հետևյալ կերպ.

«Հոդված 23. Վճռաբեկ բողոք բերելու իրավունքը

1.......

2...

21 գործին մասնակից չդարձված անձինք, որոնց իրավունքների և պարտականությունների վերաբերյալ կայացվել է գործն ըստ էության լուծող դատական ակտ:

22 Գործին մասնակից չդարձված այն անձինք, որոնց իրավունքների և պարտականությունների վերաբերյալ կայացվել է գործն ըստ էության լուծող դատական ակտ, վճռաբեկ դատարանում օգտվում են գործին մասնակցող անձանց իրավունքներից և կրում են նրանց համար սահմանված պարտականությունները»:

ՀՀ ՔԴՕ 223 հոդվածը նշված կետով լրացվելու դեպքում այն ոչ միայն կապահովի հուսալի երաշխիքներ արդարադատության մատչելիության հա-

մար, այլև կնպաստի ավելի արդյունավետ իրականացնելու մարդու և քաղաքացու իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը: Գործին չմասնակցող անձանց վճռաբեկ բողոք բերելու իրավունքով օժտելը դատական պրակտիկայում կունենա նախականխիչ նշանակություն ստորադաս ատյանի դատարանների գործունեության համար: Ելնելով նշվածից՝ ստորադաս ատյանի դատարանները գործով կիրականացնեն ավելի օբյեկտիվ և բազմակողմանի քննություն՝ հաշվի առնելով գործի բոլոր փաստացի հանգամանքները և այլ անձանց իրավունքներն ու օրինական շահերը գործի քննության ընթացքում և որոշում կայացնելիս [18]:

Դրա հետ մեկտեղ անհրաժեշտ է նշել նման ընթացակարգային հնարավորությունների որոշակի սահմանափակումներ: Գործին չմասնակցող անձանց բողոքների վերանայման ժամանակ վճռաբեկ ատյանի դերը կայանում է միայն դատարանի որոշմամբ բողոքարկողի իրավունքների խախտման իսկությունը պարզելու, այդ որոշումը բեկանելու և գործը նոր քննության ուղարկելու մեջ: Նշված անձանց կողմից բողոքարկվող որոշումը բեկանելուց հետո վճռաբեկ ատյանը չի կարող ընդունել ինքնուրույն ակտ, որը թույլատրվում է ըստ էության բողոքարկելու դեպքում, քանի որ հակառակ դեպքում նա ստիպված կլինի հաստատելու նոր փաստական հանգամանքներ:

Քաղաքացիների դատական պաշտպանության իրավունքի ընդլայնման հետ կապված, մասնավորապես՝ վճռի վերանայման իրավունքի առումով, նպատակահարմար է լրացուցիչ երաշխիքներ մտցնել քաղաքացիական դատավարության օրենսդրության մեջ քաղաքացիների որոշակի խմբի (կատեգորիաների) համար: Առաջարկում ենք նման անձանց թվին դասել ազատությունից զրկվելու ձևով պատիժ կրող անձանց, այն անձանց, որոնց նկատմամբ վարույթ է հարուցվել հոգեբուժարանում հարկադիր հոսպիտալացման (տեղավորման) և անչափահասների համար:

Այդպիսի քաղաքացիները առաջին հերթին զրկված են դատարանում անձամբ գործ հարուցելու իրավունքից. երկրորդ հերթին հնարավորություն չունեն անձամբ մասնակցելու դատական նիստին: Բարդ է նաև դատապարտյալների կարգավիճակը նրանց դեմ հայց հարուցելու դեպքում: Քանի որ ազատազրկման վայրերը չեն համարվում բնակության վայր, ապա պատիժը կրող պատասխանողների նկատմամբ կիրառվում են ՀՀ ՔԴՕ 83 հոդվածի կանոնները (ընդդատություն հայցվորի ընտրությամբ), ինչը ավելի է բարդացնում նրանց դատական պաշտպանության հնարավորությունները:

Արդարադատության հավասար հնարավորության ապահովման անհրաժեշտությունը ենթադրում է դատական պաշտպանության իրավունքը դիտել յուրաքանչյուր մարդու համար հավասար՝ անկախ նրանից, թե ինչ իրավիճակում են նրանք գտնվում [19]:

Փաստաբանության մասին ՀՀ օրենքի 6, 41, 42 հոդվածները նախատե-

սում են փաստաբանի կողմից տվյալ խմբի (կատեգորիայի) քաղաքացիների շահերը ներկայացնել անվճար, քանի որ նման իրավունքի սահմանումը առաջ է եկել այն անձանց հատուկ պաշտպանության անհրաժեշտությունից, որոնց իրավունքներն ու ազատությունները հաճախ են սահմանափակվում (ոտնահարվում) հասարակության մեջ:

Այդ քաղաքացիների թվին պետք է դասել նաև հաշմանդամներին, որոնք դիմում են խախտված սոցիալական իրավունքների պաշտպանության համար: Դա պայմանավորված է նրանով, որ սոցիալական ապահովության ոլորտում օրենսդրության մշտական փոփոխությունները առաջ են բերում դրա կիրառման հետ կապված բարդություններ:

Կենսաթոշակային ապահովության, նպաստների ու փոխհատուցումների, քաղաքացիների սոցիալական երաշխիքների մասին օրենսդրության նորմերի ոչ միանշանակությունն ու հակասականությունը հնարավորություն են տալիս իրավակիրառ մարմիններին անհիմն (կամայական) մեկնաբանել վերը նշված անձանց ցանկը:

Մեր կարծիքով ՀՀ ՔԴՕ 223 հոդվածում պետք է առանձին կետով նախատեսել, որ երբ օբյեկտիվ պատճառներով պատասխանողի բնակության վայրն անհայտ է, փաստաբանը իրավունք ունի վճռաբեկության կարգով բողոքարկելու դատարանի որոշումը, չնայած որ նրա մոտ բացակայում է հատուկ լիազորագիրը:

Տվյալ դեպքում փաստաբանը օժտվում է իր լիազորություններով ոչ թե պատասխանողի հետ կնքված համաձայնությամբ, այլ օրենքի ուժով և պատասխանողի իրավունքների պաշտպանության համար սահմանված անհրաժեշտ իրավունքով [20]:

Ձևական առումով վճռաբեկ բողոքարկման սուբյեկտներն իրավունք ունեն բողոքարկելու դատարանի որոշումները ցանկացած դրդապատճառներով: Սակայն նախընտրելի է, որ տվյալ իրավունքը սահմանափակվի դիսպոզիտիվության (տնօրինչականության) սկզբունքով, որի շնորհիվ (ուժով) դատավարության յուրաքանչյուր մասնակից կարող է հանդես գալ դատարանում միայն իր անունից և իր սեփական շահերից ելնելով՝ բացառությամբ այն դեպքերի, երբ նա հանձնարարություն ունի կամ էլ լիազորված է օրենքի ուժով պաշտպանել այլ անձանց շահերը: Դրա համար էլ եթե վճռաբեկ բողոքի բովանդակությունը դուրս է գալիս դատավարության մասնակցի իրավունքների շրջանակներից, ապա վճռաբեկ ատյանը կարող է չքննել բողոքի այն մասը, որտեղ այն վերաբերում է այլ անձանց շահերին և չի շոշափում բողոք բերող անձի շահերը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. *Ярков В.В.* Юридические факты в механизме реализации норм гражданского процессуального права. Екатеринбург. 1992. С. 270.
2. *Гурвич М.А.* К вопросу о предмете советского гражданского процесса //Ученые записки ВИЮН. М., 1965. С. 44.
3. *Кузнецов П.У.* Субъективное право кассационного обжалования судебных решений и определений. Свердловск, 1985, С. 6.
4. *Грицанов А.С.* Кассационное производство в советском гражданском процессе. Томск, 1980, С. 17.
5. *Алексеев С.С.* Общая теория права, М., 1981, 2. С. 120.
6. См.: *Жуйков В.М.* Принцип состязательности в гражданском судопроизводстве // Российская юстиция. 2003, № 6*, Каллистратова Р.Ф., Приходько И.А., Пацация М.Ш.* Прокурор в арбитражном и гражданском процессах: актуальные проблемы законодательного регулирования // Материалы второй научно-практической конференции «Принципы гражданского процессуального права, их реализация в проекте ГПК России». Тверь, 2000. СС. 26–35 и т.д.
7. *Власов А.А.* Участие прокурора в гражданском процессе // Законность 2000 №8. С. 43, *Заленский Ю.А. Трошенко И.А., Шарыло Н.П.* Проверка прокурором гражданских дел в кассационные сроки. М., 1987. С.3, *Стрельцова Е.Г.* Автономия воли в гражданском процессе // Российский ежегодник гражданского и арбитражного процесса. 200 –2003. № 2 / Под ред. В.В. Яркова. СПб, 2004. С 49, Тараненко В.В. Участие прокурора в гражданском процессе не только допустимо, но и необходимо. Прокурорская и следственная практика. Орган Генеральных прокуроров стран СНГ. М., 1999 и т.д.
8. *Туманова Л.В.* Лица, участвующие в деле в целях защиты публично-правовых интересов. Тверь, 2001. С. 37–48.
9. *Туманов В.А.* Совершенствование правосудия в России // Государство и право. 1998. №12, С 17.
10. *Васьковский Е.В.* Курс гражданского процесса. Т. 1. М., СС. 132–133.
11. *Ушаков О.В.* Участие прокурора в гражданском процессе // Арбитражный и гражданский процесс. 2003. №6. СС 4–6.
12. *Պետրոսյան Ռ.Գ.* Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարություն/, չորրորդ հրատ., Եր., Ոսկան Երևանցի, 2012, էջ 527–528:
13. *Жукова О.В.* Кассационное производство в гражданском процессе. Учебное пособие. Тверь, 2005, С 12.
14. Научно-практический комментарий к Гражданскому процессуальному кодексу Российской Федерации // Под ред. В.М. Жуйкова, В.К. Пучинского, М.К. Треушникова, М., 2003. С. 685.
15. *Должиков А.В.* Конституционные критерии допустимости ограничения основных прав человека и гражданина в Российской федерации. Автор канд. юрид. наук. Тюмень, 2003. СС. 6–7.
16. *Скворцов О.Ю.* Институт кассации в российском арбитражном процессуальном праве (проблемы судоустройства и судопроизводства): Дис. канд. юр. наук. СПБ, 2000, СС 76–78.
17. *Кожемяко А.С.* Кассационное производство в арбитражном суде: теория и практика. М., 2004. СС. 46–48.
18. Комментарий к гражданскому процессуальному кодексу Российской Федерации (постатейный) // Отв. ред. Г.А. Жилин. 7-е изд. перераб. и доп. М.: Проспект, 2014, СС. 661–664.

19. *Михайловская К.Б., Кузьминский Е.Ф., Мазаев Ю.Н.* Права человека в массовом сознании. М., 1995. С. 28.
20. О судебном решении: Постановление Пленума Верховного суда Российской Федерации от 19.12.2003 // БВС.2004, № 1.

СУБЪЕКТЫ КАССАЦИОННОГО ПРОИЗВОДСТВА

А.С. Назаретян

АННОТАЦИЯ

Данная статья относится к списку субъектов, которые имеют право в кассационном порядке обжаловать судебные акты, вынесенные в гражданско-процессуальном порядке. Содержит также предложения о расширении списка указанных субъектов и в связи с этим о некоторых дополнениях в гражданско-процессуальном кодексе. Статья подготовлена на основании сравнительно-правового исследования ГПК РА и РФ и учета материалов судебной практики.

Ключевые слова: Кассационное производство, субъект, жалоба, обжалование, права, интересы.

SUBJECTS OF CASSATION PROCEEDINGS

A. Nazaretyan

SUMMARY

The article refers to the list of subjects which have the right to appeal judicial acts at cassation proceedings of the civil procedure of RA. It also includes suggestions about the expansion of the list of the subjects mentioned and the supplement of the civil procedure code of RA with some provisions. It is basically executed on the basis of registration of judicial practice and legal comparative analysis of the civil procedure code of RA and RF.

Keywords: Cassation proceedings, subject, appeal, appellation, rights, interests.

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՈՐՈՇՄԱՆ, ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ, ՏՐԱՄԱԴՐՄԱՆԵՎ ԴՐԱՆՑ (ՆՐԱՆՑ) ՀԵՏ ՎԱՐՎԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՐՑԵՐ

Գ.Գ. Սահակյան

ԱՄՓՈՓՈՒՄ

Հեղինակը, կատարելով համապատասխան իրավական վերլուծություններ և ուսումնասիրելով օտարերկրյա օրենսդրական փորձը, հանգում է այն եզրակացության, որ առկա է ՀՀ քաղաքացիական դատավարության պրոցեսում դատարանի որոշմամբ նշանակված փորձաքննությունները կատարելու համար անհրաժեշտ օբյեկտների որոշման, նախապատրաստման, տրամադրման (ներկայացման), ինչպես նաև դրանց (նրանց) հետ վարվելու վերաբերյալ հարցերը համալիր և հստակ կարգավորելու անհրաժեշտություն:

Գիտական հոդվածում կատարվել են գիտագործնական նշանակություն ունեցող կոնկրետ եզրահանգումներ և առաջարկություններ, որոնք կարող են օգտակար լինել նաև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսդրությունը բարեփոխելու հարցում:

Հիմնաբառեր՝ դատական փորձաքննություն, փորձագետ, փորձաքննության օբյեկտ, դատարան, որոշում, իրավունք:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն, դատարանը կայացնում է փորձաքննություն նշանակելու մասին որոշում, որում՝ ի թիվս այլ տվյալների, նշում է նաև փորձագետին տրամադրված նյութերը (փաստաթղթերը), անհրաժեշտության դեպքում՝ դրանց հետ վարվելու պայմանները: Դրանք դատարանի կողմից նշանակված փորձաքննությունը կատարելու համար փորձագետին անհրաժեշտ նյութերը (փաստաթղթերը), այդ թվում՝ համեմատական հետազոտության նմուշներն (այսուհետ՝ փորձաքննության օբյեկտներ կամ նյութեր) են, որոնք փորձագիտության տեսության մեջ անվանվում են փորձաքննության օբյեկտներ: Հավելենք, որ հայրենական օրենսդրությունը չի անդրադառնում այդ եզրույթին:

Փորձաքննության օբյեկտները նյութական աշխարհի առարկաներն են, որոնք ենթակա են փորձագիտական հետազոտության՝ դրա առարկա հանդիսացող հանգամանքների հաստատման նպատակով: Օրինակ, դատահամակարգչային տեխնիկական փորձաքննության օբյեկտ կարող են հանդիսանալ համակարգիչները, հիշողության միկրոսխեմաները, դատաապրանքագիտական փորձաքննության օբյեկտ՝ ապրանքը, հումքը, դատաշինարարատեխնիկական փորձաքննության օբյեկտ՝ շինությունը, դրա առա-

նձին հատվածները և այլն: Նշենք նաև, որ դատաբժշկական, դատահոգեբանական, ինչպես նաև դատահոգեբուժական փորձաքննությունների օբյեկտ է հանդիսանում մարդը, նրա հոգեբանական և օրգանիզմի այլ ֆունկցիաների վիճակը, որը միաժամանակ նաև գործով դատավարության մասնակից է: Դատահոգեբուժական փորձաքննություն կատարելու անհրաժեշտություն, օրինակ, կարող է առաջանալ գործարքն առոչինչ, ամուսնությունն անվավեր, անձին անգործունակ ճանաչելու և նրա նկատմամբ խնամակալ կամ հոգաբարձու նշանակելու, երեխայի դաստիարակության հետ կապված և այլ գործերով[1]:

Այսպիսով, ինչպես հետևում է վերը մեջբերված հոդվածի բովանդակությունից, փորձագետին փորձաքննություն կատարելու համար տրամադրվող (ներկայացվող) օբյեկտները պարտադիր պետք է սահմանվեն փորձաքննություն նշանակելու մասին դատարանի որոշման մեջ: Միաժամանակ, հաշվի առնելով, որ գործնականում միշտ չէ, որ դատարանին կարող է հաջողվել ի սկզբանե սահմանել անհրաժեշտ օբյեկտների շրջանակը, օրենսդիրը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 45-րդ հոդվածի 3-րդ մասով փորձագետին վերապահել է հնարավորություն, եթե դա անհրաժեշտ է եզրակացություն տալու համար, խնդրել դատարանին իրեն տրամադրելու լրացուցիչ նյութեր: Տրամադրված նյութերի անբավարարության դեպքում վերջինս կարող է հրաժարվել եզրակացություն տալուց:

Բացի այդ, իրավաբանական գրականության մեջ արդարացիորեն խոսվում է նաև փորձագետին լրացուցիչ նյութեր փոխանցելու իրավունք դատարանին վերապահելու մասին: Մասնավորապես դատավարագետ Ա.Գ. Դավթյանը գտնում է, որ փորձաքննությունն անցկացնելու ընթացքում դատարանին (դատավորին) պետք է վերապահվի նաև իր նախաձեռնությամբ փորձագետին պատշաճ հետազոտություն կատարելու համար նշանակություն ունեցող լրացուցիչ նյութեր փոխանցելու իրավունք[2]: Նշված տեսակետի հետ, կարծում ենք, չի կարելի չհամաձայնել: Դա կարող է նպաստել արագ և արդյունավետ դատական պաշտպանությանը: Օրենսդրական նման լուծմամբ դատարանները ձեռնպահ կմնան առանց դատարանի որոշման փորձագետին լրացուցիչ նյութեր ուղարկելու՝ գործնականում հանդիպող ոչ իրավաչափ վարքագծից:

---

[1] Դատական փորձաքննության օբյեկտների հետ կապված հարցերի, այդ թվում՝ դրանց առնչությամբ իրավակարգավորման որոշ բացերի վերաբերյալ տե՛ս Փորձաքննությունը քաղաքացիական գործերով դատական վարույթի շրջանակներում, ուսումնական ձեռնարկ, գիտ. խմբագիր՝ Ա. Եգեկյան, Ե., 2014թ., էջ 27–35:

[2] Տե՛ս Давтян А.Г. Экспертиза в гражданском процессе, М., 1995, էջ 44:

Քննարկվող համատեքստում հարց է ծագում, թե ո՞վ պետք է փորձաքննություն կատարելու համար անհրաժեշտ նյութերը տրամադրի (ներկայացնի) փորձագետին: Նշենք, որ ի տարբերություն հայրենական քրեադատավարական օրենսդրության՝ քաղաքացիադատավարական օրենսդրությամբ, որին բնորոշ է կողմերի մրցակցության սկզբունքը, ապացուցման պարտականությունը վերագրվում է գործին մասնակցող անձանց, որոնք դրա բաշխման կանոններին համապատասխան պարտավոր են ապացույցներ ներկայացնել դատարանին, իսկ դատավարական իրավահարաբերությունների պարտադիր մասնակիցը՝ դատարանն, իրականացնում է այդ առնչությամբ բացատրական գործունեություն, գործին մասնակցող անձանց միջնորդությամբ օժանդակում նրանց ապացույցներ ձեռք բերելու գործում, սահմանված կարգով սահմանում ապացույցներ ներկայացնելու ժամկետները և պահանջում դրանք այդ անձանցից:

Ինչպես հետևում է քաղաքացիական դատավարության օրենսդրության մի շարք հոդվածների համադրված վերլուծությունից, դատարանը, փորձաքննություն նշանակելու մասին որոշում կայացնելով, ապացույցների թույլատրելիության և վերաբերելիության կանոնների պահպանմամբ ինքն է որոշում փորձաքննություն կատարելու համար փորձագետին տրամադրման (ներկայացման) ենթակա անհրաժեշտ օբյեկտների վերջնական շրջանակը և, սահմանելով փորձաքննություն նշանակելու մասին որոշման մեջ, ապահովում դրանց տրամադրումը փորձագետին: Իհարկե, գործին մասնակցող անձինք՝ որպես գործի ելքով շահագրգռված սուբյեկտներ, իրենք պետք է ձեռնարկեն համապատասխան միջոցներ իրենց պահանջների և առարկությունների հիմքում ընկած փաստերն ապացուցելու համար՝ դատարանին ներկայացնելով փորձաքննության ընթացքում հետազոտման ենթակա օբյեկտներ: Այսինքն, փորձագետը կարող է տալ օբյեկտիվ եզրակացություն, եթե դատարանը գործին մասնակցող անձանց կողմից ներկայացված գործի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքները հաստատող անհրաժեշտ (բավարար) նյութերը ներկայացնի փորձագետին, այն է՝ եթե դատարանի հանդիպակաց պարտականությունը պատշաճ կատարվի:

Ի տարբերություն հայրենական քաղաքացիադատավարական օրենսդրության՝ փորձագետին օբյեկտներ ներկայացնելու դատարանի պարտականությունն ուղղակիորեն ամրագրվել է «Ռուսաստանի Դաշնությունում պետական դատափորձագիտական գործունեության մասին» դաշնային օրենքի 19-րդ հոդվածում, որի համաձայն դատական փորձաքննություն նշանակող մարմինը կամ անձը ներկայացնում է հետազոտություն անցկացնելու և փոր-

ձագետի եզրակացություն տալու համար անհրաժեշտ հետազոտության օբյեկտներ ու գործի նյութեր[3]: Ինչպես ցույց է տալիս հայրենական դատական պրակտիկայի ուսումնասիրությունը, հարցի ուղղակի կարգավորման բացակայությունը, ուստի և դրա ոչ միարժեք ընկալումը դատավորների ու դատավարության մասնակիցների կողմից նպաստում է փորձագետներին ձգձգումներով, թերի, ոչ ամբողջական ծավալով նյութերի տրամադրմանը: Եվ թեև լիովին կիսում ենք Տ.Ա. Լիլուաշվիլու տեսակետն այն մասին, որ փորձաքննության հետ կապված հանգամանքներ պարզաբանելու համար լրացուցիչ նյութեր տրամադրելու փորձագետի խնդրանքի մասին նշումն օրենքում կարող է վկայել այն մասին, որ փորձագետն իրավունք չունի ինքը հավաքել այդ նյութերը[4], այնուամենայնիվ, հաշվի առնելով վերը նշվածը և խնդրի գործնական կարևորությունը, կարծում ենք՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքն անհրաժեշտ է լրացնել ՌԴ օրենքի համանման դրույթով:

Նշված համատեքստում անհրաժեշտ է նշել նաև, որ դատարանները հաճախ ուղղորդում են փորձագետներին կատարելու իրենց իրավասությ+ան մեջ չմտնող գործողություններ: Մասնավորապես, դատարանը կայացնում է փորձաքննություն նշանակելու մասին որոշում՝ դրանում նշելով. «փորձաքննությանը մասնակից դարձնել կողմերին և նրանց պարտավորեցնել փորձագետի պահանջով տրամադրել անհրաժեշտ նյութեր (փաստաթղթեր) փորձաքննությունն անցկացնելու համար»: Նշվածը գործնականում բացատրվում է նաև փորձաքննության կատարումը չձգձգելու նկատառումով[5], որը, սակայն, իրավական առումով հիմնավորված չէ:

Մինչդեռ, ինչպես իրավացիորեն նշում է նույն հեղինակը՝ Տ.Ա. Լիլուաշվիլին, նյութերը հետազոտության ուղարկելով, դատարանը պետք է համոզվի

---

3 Տե՛ս Федеральный закон о государственной судебно-экспертной деятельности в Российской Федерации, 31.05.2001:

4 Տե՛ս Т.А. Лилуашвили, Экспертиза в советском гражданском процессе, Т., 1967. С. 109:

5 Իհարկե, գործնականում հաճախ են առաջանում դատարանի կողմից նշանակվող փորձաքննությունները ոչ սեղմ ժամկետներում կատարելու հետ կապված խնդիրներ, քանի որ քաղաքացիադատավարական օրենսդրությամբ դրանք կատարելու և կազմված փորձագիտական եզրակացությունը դատարան ներկայացնելու ժամկետ սահմանված չէ՝ դրանից բխող համապատասխան անցանկալի հետևանքերով: Դատական փորձաքննության ժամկետներին առնչվող հարցերի վերաբերյալ տե՛ս գիտ. խմբագիր Ա. Եզեկյան, Փորձաքննությունը քաղաքացիական գործերով դատական վարույթի շրջանակներում, ուսումնական ձեռնարկ, Եր., 2014թ., էջ 129–130, Ա.Գ. Ջհիրաբյան, Փորձագետի եզրակացությունը քաղաքացիական դատավարությունում, Եր., 2013թ., էջ 149–152:

դրանց արժանահավատության և լավորակության հարցում: Այլապես, նյութերի լավորակության ստուգումը դատարանի կողմից կիրականացվի միայն փորձագետի եզրակացությունը հետազոտելիս և գնահատելիս: Մինչդեռ, ինչպես ցույց է տալիս դատական պրակտիկայի ուսումնասիրությունը, նման ստուգումն անհրաժեշտ է նաև այդ նյութերն ընտրելիս և նախապատրաստելիս՝ նախքան դրանք փորձագետին տրամադրելը[6]:

Փաստորեն, կարող ենք արձանագրել, որ վերը հիշատակված դեպքերում փորձագետը մասնակցում է փորձաքննություն կատարելու համար անհրաժեշտ օբյեկտների շրջանակի որոշմանը, ձեռք բերում դրանք անմիջապես դատավարության մասնակիցներից և հետազոտում դրանք, որը, կարծում ենք, իրավաչափ չէ:

Կարևոր է նշել, որ փորձագետի կողմից ինքնուրույն նյութեր հավաքելու անթույլատրելիության հարցին հստակ կարգավորում է տվել ՌԴ օրենսդիրը՝ ՌԴ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 85-րդ հոդվածի 2-րդ մասում նշելով, որ փորձագետն իրավունք չունի ինքնուրույն հավաքել փորձաքննության անցկացման համար անհրաժեշտ նյութեր[7]: Այդ բովանդակությամբ դրույթ նախատեսված է նաև «Ռուսաստանի Դաշնությունում պետական դատափորձագիտական գործունեության մասին» դաշնային օրենքի 16-րդ հոդվածում, որից հետևում է, որ արգելքը կիրառվում է նաև դատական մյուս ոլորտների շրջանակներում փորձաքննություններ անցկացնելիս, որը միանգամայն հիմնավորված է:

Սա, մեր կարծիքով, համարվում է փորձագետի պատշաճ աշխատանքի կատարման համար կարևոր իրավական նախադրյալ, քանի որ եթե վերջինս ինքը զբաղվի փորձաքննության օբյեկտներ հավաքելով՝ հարաբերությունների մեջ մտնելով դատավարության մասնակիցների հետ, ապա դա կարող է կասկածի տակ դնել նրա կողմից կատարված հետազոտության բազմակողմանիությունը, լրիվությունը և օբյեկտիվությունը: Ինչպես հետևում է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 5-րդ մասի բովանդակությունից, օբյեկտները պետք է փորձագետին տրամադրվեն (ներկայացվեն) փորձաքննության նշանակումը նախաձեռնող մարմնի՝ փորձաքննություն նշանակելու մասին որոշման մեջ ներառելով: Բացի այդ, օտարերկրյա համապատասխան օրենսդրական ակտերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դրանցով սահմանվում են փորձաքննության ներկայացվող օբյեկտները նախապատրաստելու և ներկայացնելու ընթացակարգեր: Այդ

---

[6] Տե՛ս Т.А. Лилуашвили, Экспертиза в советском гражданском процессе, Т., 1967, էջ 111–112:

[7] Տե՛ս Гражданский процессуальный кодекс Российской Федерации, 14.11. 2002:

առումով որոշակի կարգավորում տվել է, օրինակ, Ղազախստանի Հանրապետության օրենսդիրը: «Ղազախստանի Հանրապետությունում դատափորձագիտական գործունեության մասին» օրենքի 27-րդ հոդվածով նախատեսվում է, որ դատական փորձաքննության օբյեկտները, եթե դրանց ծավալը և հատկանիշները թույլ են տալիս, տրամադրվում են փորձագետին փաթեթավորված և կնքված վիճակում: Մնացած դեպքերում դատական փորձաքննություն նշանակող մարմինը (անձը) պարտավոր է ապահովել հետազոտության օբյեկտների գտնվելու վայր դատական փորձագետին հասցնելը, անխոչընդոտ մուտքը և հետազոտություն անցկացնելու համար անհրաժեշտ պայմաններ: Իրեղեն ապացույցների և փաստաթղթերի հետազոտության ժամանակ դատական փորձաքննություն նշանակող մարմնի (անձի) թույլտվությամբ օբյեկտները կարող են վնասվել կամ օգտագործվել միայն այն չափով, որքանով դա անհրաժեշտ է հետազոտություն կատարելու և եզրակացություն տալու համար: Նշված թույլտվությունը պետք է ներառվի դատական փորձաքննություն նշանակելու կամ դատական փորձագետի միջնորդությունը բավարարելու կամ այն մասնակի բավարարելու մասին որոշման մեջ:

Այդ օրենքի 18-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանվում է նաև, որ դատական փորձագետն իրավունք չունի անցկացնել հետազոտություն, որը կարող է հանգեցնել օբյեկտների լրիվ կամ մասնակի վնասման կամ դրանց արտաքին տեսքի վնասման, եթե առկա չէ դատական փորձաքննություն նշանակող մարմնի (անձի) հատուկ թույլտվությունն այդ մասին: Բացի այդ, նույն օրենքի վերը հիշատակված՝ 27-րդ հոդվածը սահմանում է դատական փորձաքննության օբյեկտների հետ վարվելու կարգը սահմանելու կառավարության իրավասությունը, որը, կարծում ենք, արդարացված մոտեցում է՝ հաշվի առնելով այդ մանրամասները ոչ թե օրենքով, այլ ենթաօրենսդրական նորմատիվ ակտով սահմանելու նպատակահարմարությունը[8]:

Բացի այդ, անպատասխան է մնում այն հարցը, թե ի՞նչ ժամկետում պետք է դատարանը բավարարի լրացուցիչ օբյեկտներ տրամադրելու փորձագետի խնդրանքը[9]: Նշված անորոշությունը, մինչդեռ, դատական պրակտիկայում առաջացնում է դժվարին, իսկ որոշ դեպքերում՝ անելանելի իրավիճակներ: Նկատենք, որ փորձաքննություն կատարելու համար անհրաժեշտ օբյեկտների պակասը փորձագետի աշխատանքի ամենալուրջ խոչընդոտն է,

[8] Տե՛ս закон о судебно-экспертной деятельности в Республике Казахстан, 20.01.2010:

[9] Պետական մասնագիտացված փորձագիտական հաստատությունների պրակտիկայում դա ձևակերպվում է որպես միջնորդություն, որոնց պատասխանները ներկայացվում են մեկ, երկու, իսկ ոչ սակավ դեպքերում՝ ավելի երկար ամիսների ընթացքում:

որի պատճառով կարող է տուժել փորձագիտական եզրակացության որակը, ձգձգվել գործի քննությունը:

Միաժամանակ, ՀՀ քաղաքացիադատավարական օրենսդրությունից հստակ չի հետևում նաև փորձագետին փորձաքննություն կատարելու համար տրամադրված օբյեկտների հետագա ճակատագիրը: Մինչդեռ վերջինիս կողմից դրանց տիրապետումն ունի սույն ժամանակավոր բնույթ, քանի որ այդ օբյեկտները ենթակա են պահպանման և փորձագիտական եզրակացության հետ միասին վերադարձման փորձաքննությունը նշանակող մարմնին: Այդ հարցը նույնպես ՌԴ օրենսդիրն ուղղակիորեն կարգավորել է օրենսդրությամբ: «Ռուսաստանի Դաշնությունում պետական դատափորձագիտական գործունեության մասին» դաշնային օրենքի 16-րդ հոդվածով մասնավորապես սահմանված է, որ փորձագետը պարտավոր է ապահովել հետազոտության համար ներկայացված օբյեկտների և գործի նյութերի անվնաս պահպանումը: Այդ օրենքի 14-րդ հոդվածով սահմանվում է նաև հետազոտության ավարտից հետո փորձագետի եզրակացությունը, հետազոտության օբյեկտները և գործի նյութերը դատական փորձաքննությունը նշանակող մարմնին կամ անձին ուղարկելու՝ փորձագիտական հիմնարկի ղեկավարի պարտականությունը: Վերոգրյալի ամփոփմամբ կարող ենք նշել, որ համապատասխան կարգավորումների անհրաժեշտություն ունի նաև ՀՀ քաղաքացիադատավարական օրենսդրությունը:

Սույն համատեքստում կարևոր է անդրադառնալ մեկ հարցի ևս. իսկ ինչպե՞ս պետք է վարվի դատարանը, երբ ինքնուրույն չի կարող որոշել փորձագետին տրամադրման ենթակա օբյեկտների շրջանակը: Իրավաբանական գրականության մեջ այս առումով կա երկու տեսակետ. հեղինակների մի մասը գտնում է, որ օբյեկտները նախապատրաստելիս դատարանին պետք է տրվի մասնագետի օգնությանը դիմելու հնարավորություն, իսկ մյուս խումբ հեղինակների կարծիքով փորձաքննություն կատարելու համար անհրաժեշտ նյութեր պետք է հավաքի հենց փորձագետը, քանի որ դրանց որոշման համար պահանջվում են հատուկ գիտելիքներ: Ընդունելով, որ առանց համապատասխան մասնագետի մասնակցության նյութերի ձեռք բերումն ունի որոշակի դժվարություններ, քանի որ վարույթ իրականացնող մարմինը կարող է իր չիմացության պատճառով վնասել դրանք՝ դարձնելով փորձաքննության համար ոչ պիտանի, կամ պարզապես չկարողանա գտնել կամ վերցնել անհրաժեշտ նյութեր՝ նպատակահարմար կլինի դրանց հավաքմանը ներգրավել համապատասխան բնագավառի մասնագետի՝ ապահովելով որակյալ նյութերի ստացումը և օգտագործումը փորձաքննության ընթացքում:

Այսպիսով, ընդհանրացնելով, կարող ենք արձանագրել, որ հայրենական քաղաքացիադատավարական օրենսդրության շրջանակներում օրենսդիրը ձեռնպահ է մնում դատական փորձաքննության օբյեկտների որոշման,

նախապատրաստման, տրամադրման և դրանց (նրանց) հետ վարվելու վերաբերյալ հստակ պահանջների սահմանումից, որը գործնականում առաջացնում է մի շարք հարցեր ու խնդիրներ: Նշվածը, մեր կարծիքով, օրենսգրքի էական թերություններից է: Կենդանի անձանց պարագայում հատկապես, նրանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանության հրամայականից ելնելով, օտարերկրյա օրենսդրական փորձի հաշվի առնմամբ, անխուսափելի է դրանց և արդարադատության ընդհանուր նպատակի, սկզբունքների համաչափ կարգավորման անհրաժեշտությունը: Այլապես պարզ չէ, թե դատավարական ինչ իրավունքներ ունեն և ինչ պարտականություններ են կրում այդ անձինք, մասնագիտական էթիկայի ինչպիսի պահանջներ պետք է պահպանի փորձագետը վերջիններիս վերաբերմամբ հետազոտություն կատարելիս, կամ՝ պետք է արդյոք պահպանի, թե ոչ: Ուստի, մեր կարծիքով, արդիական և հրատապ է սույն աշխատանքում մատնանշված և հատկապես՝ կենդանի անձանց հետ կապված հարցերը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով համալիր և հստակ կարգավորելու անհրաժեշտությունը՝ ելնելով քաղաքացիական գործերի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության, մարդու իրավունքների պաշտպանության երաշխավորման նկատառումներից: Կարևոր է ավելացնել, որ դրանք պատշաճ կարգավորելու համար նախ և առաջ անհրաժեշտ է ընդունել առանձին օրենք, որը կհանդիսանա միասնական հիմք դատավարական, այդ թվում՝ քաղաքացիական դատավարության օրենսդրության կատարելագործման համար, քանի որ անկատար իրավական ինստիտուտների գոյության պայմաններում օրենսգրքերում առկա կարգավորման բացերը շտկելը, այն արդիականացնելը իրատեսական չէ:

ВОПРОСЫ СВЯЗАННЫЕ С ОПРЕДЕЛЕНИЕМ, ПОДГОТОВКОЙ, ПРЕДОСТАВЛЕНИЕМ И ОБРАЩЕНИЕМ ОБЪЕКТОВ ЭКСПЕРТИЗЫ

Г.Г. Саакян

АННОТАЦИЯ

Автор, проведя соотвествующие правовые анализы и исследуя законодательный опыт зарубежных стран, сделал вывод о необходимости комплексного и точного регулирования вопросов, связанных с определением, подготовкой, предоставлением, а также обращением объектов, необходимых для проведения экспертизы, назначенной решением суда в гражданском процессе.

В научной статье предвидены конкретные заключения и предложения, имеющие научно-практическую значимость, которые могут быть полезны также в вопросе реформ гражданского процессуального законодательства РА.

Ключевые слова: судебная экспертиза, эксперт, объект экспертизы, суд, решение, право.

ISSUES ON DETERMINATION, PREPARATION, PROVISION AND USAGE OF THE OBJECTS OF EXPERTISE

G. Sahakyan

SUMMARY

The author, making appropriate legal analyses and studying foreign legislative experience, comes to a conclusion that it is necessary to clearly and complexly regulate the issues of determination, preparation, presentation, as well as handling of performing expertise appointed within the framework of civil trial of the Republic of Armenia.

In the article there were drawnspecific conclusions and recommendations of scientific and practical importance which can be useful for the reform of legislation of the civil trial of the Republic of Armenia.

Keywords: judicial expertise, expert, object of expertise, court, right/law.

ПРАВОПРЕЕМСТВО ГОСУДАРСТВ В ОТНОШЕНИИ ПРАВ, ВОЗНИКШИХ В РЕЗУЛЬТАТЕ СОВЕРШЕНИЯ МЕЖДУНАРОДНОГО ПРОТИВОПРАВНОГО ДЕЯНИЯ ПРОТИВ ГРАЖДАНИНА ГОСУДАРСТВА-ПРЕДШЕСТВЕННИКА

Э.С. Саргсян

eduard.s.sargsyan@gmail.com

АННОТАЦИЯ

Данная статья посвящена вопросу правопреемства в отношении прав, возникших в результате совершения международно-противоправного деяния против гражданина государства-предшественника. Рассмотрен институт дипломатической защиты – как механизм представления интересов граждан со стороны государства-правопреемника, а также проблемы в контексте применения традиционного правила непрерывного гражданства при правопреемстве государств.

Ключевые слова: правопреемство государств, дипломатическая защита, правило непрерывного гражданства.

В международно-правовой практике считается общепризнанным право государств посредством института «дипломатической защиты» представлять интересы своих граждан, пострадавших в результате совершения действий со стороны другого государства. Таким образом, общепринято, что государство «на самом деле отстаивает свои собственные права, свое право обеспечить, в лице своих граждан, уважение норм международного права» [1]. Соответственно, так как государство, защищая своих граждан, фактически «отстаивает свои собственные права», необходимо доказать наличие эффективной связи между лицом, права которого были затронуты государством-правонарущителем и государством, осуществляющим дипломатическую защиту. Это требование отражено в Статье 44 (a) Текстов Статей об ответственности государств за международно-противоправные деяния, согласно которой призвание государства к ответственности не может быть осуществлено «если требование предъявлено не в соответствии с применимыми нормами о государственной принадлежности требований» [2].

Традиционным правилом дипломатической защиты относительно государственной принадлежности требований является принцип «непрерывного гражданства». Первым важным условием для того, чтобы государство осуществляло дипломатическую защиту от имени лица, является условие, согласно которому такое лицо должно иметь гражданство этого государства во время совершения со стороны третьего государства международно-противоправного деяния [3]. Вторым важным условием является то, чтобы такое лицо оставалось гражданином данного государства, по крайней мере, до тех пор, пока данное государство пре-

дьявит это требование [4]. В международно-правовой доктрине, а также в судебной практике, поддерживается правило, согласно которому лицо, дипломатическую защиту которого государство желает осуществлять, должно также иметь гражданство данного государства во время принятия данного решения [5, 6].

Однако в науке международного права поддержка правила «непрерывного гражданства» является далеко не единогласной. В доктрине выражается и точка зрения, что сам по себе принцип «непрерывности гражданства» не является правилом международного права [7, 8]. Подобные критические замечания нашли свое отражение в работе специального докладчика Комиссии международного права Джона Дюгарда по дипломатической защите, для которого «традиционное правило непрерывного гражданства утратило свою пригодность» и «не имеет места в мире, где индивидуальные права признаны международным правом и где гражданство так легко не меняется» [9].

Тем более неприменимым видится правило «непрерывного гражданства» в контексте правопреемства государств. Для рассмотрения данного вопроса следует подразделить случаи правопреемства государств на две разные ситуации – ситуация, когда государство-предшественник перестает существовать, и когда его существование, наоборот, не затрагивается территориальными изменениями.

В тех случаях, когда государство-предшественник перестает существовать, граждане государства-предшественника становятся гражданами государства-правопреемника во время правопреемства. Так как во время совершения международно-противоправного деяния со стороны третьего государства потерпевшие лица имели гражданство государства-предшественника, а не правопреемника, применение правила «непрерывного гражданства» в таких случаях воспрепятствовало бы государству-правопреемнику осуществлять дипломатическую защиту на стороне своих «новых» граждан. Этот принцип широко поддерживается в доктрине [10].

В другой ситуации, когда государство-предшественник не прекращает свое существование, государство-правопреемник аналогично не могло бы осуществлять дипломатическую защиту для своих «новых» граждан, так как во время совершения международно-противоправного деяния со стороны третьего государства, пострадавшие лица не имели гражданства данного государства, а имели гражданство государства-предшественника. Данная позиция также имеет поддержку в доктрине [11].

В доктрине предлагалась точка зрения, согласно которой, в тех случаях, когда государство-предшественник не прекращает свое существование, продолжающее государство, хотя бы теоретически, будет вправе осуществлять дипломатическую защиту [12]. Этот подход действительно применим в случаях, когда лицо, потерпевшее от правонарушения, имевшего место до даты правопреемства, при праве оптации сохраняет за собой гражданство государства, сохранившего свою международно-правовую идентичность. В таком случае, продолжающее государство может представлять интересы физического лица, так как цепь гражданства не рушится. Однако такое право выбора (оптации) существует не всегда, и даже в тех случаях, когда оно существует, лицо может решить не воспользоваться им. В этом последнем случае, лицо, пострадавшее до даты правопреемства, станет гражданином государства-правопреемника, и тем самым продолжающее государство не сможет осущест-

вить дипломатическую защиту данного лица по той простой причине, что это лицо более не является его гражданином во время предъявления заявления. Таким образом, правило непрерывного гражданства не позволяло бы продолжающему государству осуществить дипломатическую защиту тех лиц, которые когда-то имели его гражданство, но которые после наступления даты правопреемства стали гражданами государства-правопреемника [13].

Следовательно, применение правила «непрерывного гражданства» в контексте правопреемства государств:

– не предоставило бы возможности государству-правопреемнику осуществлять дипломатическую защиту своих «новых» граждан, так как они не являлись таковыми во время совершения международно-противоправного деяния;

– не предоставило бы возможности государству-продолжателю осуществлять дипломатическую защиту своих граждан по причине того, что они более не являются его гражданами на момент предъявления требования против государства, ответственного за совершение международного противоправного деяния.

Тем самым, в обоих случаях: когда государство-предшественник продолжает свое существование, и когда государство-предшественник прекращает свое существование, можно прийти к выводу, что применение правила «непрерывного гражданства» в контексте правопреемства государств не позволило бы осуществить дипломатическую защиту от имени лица, пострадавшего в результате международно-противоправного деяния, совершенного до момента правопреемства, ни со стороны государства-продолжателя, ни со стороны государства-правопреемника. Так как ни одно государство не имело бы права требовать возмещения от ответственного государства и, следовательно, международно-противоправное деяние осталось бы безнаказанным.

О недопустимости применения правила «непрерывного гражданства» в контексте правопреемства государств свидетельствует также международно-правовая практика и прецедентное право. Так, традиционное правило о непрерывном гражданстве было строго раскритиковано судьей Й. ван Эйсинга в его особом мнении по делу *Железной дороги Panevezys-Saldutiskis* [14]. Он придерживался точки зрения, согласно которой правило, которое удержало бы государство-правопреемника от «поддержки любого требования любого из своих новых граждан по возмещению ущерба, понесенного до изменения гражданства» привело бы к «несправедливым результатам» [15].

Судья Фицморис в его особом мнении в деле Барселона Трэкшн также раскритиковал правило непрерывного гражданства и его применение в контексте правопреемства государств. Он отметил, что когда изменение гражданства не является преднамеренным (как, например, при правопреемстве государств) данное правило «будет несправедливым», так как оно лишает новых граждан государства-правопреемника всех возможностей получать возмещение за прошлые международно-противоправные деяния. Согласно его мнению: *«слишком жесткое и стремительное применение этого правила может привести к ситуациям, в которых важные интересы останутся незащищенными, истцы неудовлетворенными а ущерб не возмещенным, только потому, что чисто техничес-*

кие соображения приводят к тому, что ни одно государство не имеет право действовать» [16].

В своем частном мнении по тому же делу, судья Ф. Джессап согласился с комментариями, сделанными судьей Фицморис, и предложил, чтоб правило непрерывного гражданства не применялось в контексте правопреемства государств.

Многие ученые в своих работах отмечают, что применение традиционного правила непрерывного гражданства может вести к несправедливым результатам, когда изменения гражданства носят недобровольный характер, как, например, в случаях правопреемства государств [17–19]. Факт, что применение данного правила в контексте правопреемства государств, в конечном счете, лишило бы «большое количество лиц широкого круга» прав был представлен как «оскорбляющее современную концепцию роли международного права в защите индивида» [20]. Другие утверждают, что применение правила непрерывного гражданства в контексте правопреемства государств фактически поощряет государство-правонарушителя, так как его «международно-противоправные деяния остаются безнаказанными» [21].

Аналогичной позиции придерживается Комиссия по международному праву ООН. Работа специального докладчика Комиссии по международному праву ООН по дипломатической защите ясным образом озвучило позицию, согласно которой традиционное правило непрерывного гражданства не должно применяться в контексте изменений гражданства, имеющих место в результате правопреемства государств. Согласно мнению специального докладчика Джона Дюгарда, непрерывное гражданство «может привести к большой несправедливости, когда потерпевшее лицо подверглось *bona fide* изменению гражданства, не связанного с предъявлением международного иска после причинения ущерба, в результате *inter alia* … перехода территории или правопреемства государств» [22]. Он даже принял более радикальную точку зрения, согласно которой было бы «предпочтительнее отвергнуть доктрину непрерывного гражданства как самостоятельное правило обычного международного права» [23].

В докладе Комиссии относительно ее работы 53-ей Сессии есть ссылка на тот факт, что «большинство членов» Комиссии не дали согласие на предложение Специального докладчика отказаться от традиционного правила непрерывного гражданства. Вместо этого в докладе говорится следующее: *«В то же самое время было выражено согласие с тем, что норму необходимо сделать более гибкой, с тем, чтобы не приходить к несправедливым результатам. Если те члены Комиссии, которые высказывались в поддержку предложения Специального докладчика, придерживались мнения, что для этого требуется пересмотр самой нормы, большинство членов Комиссии отдали предпочтение промежуточному варианту, согласно которому традиционная норма должна быть сохранена, хотя и обставлена некоторыми исключениями в отношении тех ситуаций, когда у индивида не оказывается в соответствующих условиях возможности добиться защиты от государства. Было предложено, чтобы основные исключения были связаны с недобровольными изменениями гражданства защищаемого лица, связанными с правопреемством, государств вступлением в брак и усыновлением»* Таким образом, члены Комиссии соглашались со Специальным докладчиком о том, что традиционное правило непрерывного гражданства должно

существовать как «основное исключение» имеющее дело со случаями «недобровольных изменений гражданства охраняемых лиц, исходящее от правопреемства государств», так же, как и другое исключение для «ситуаций где было бы невозможно применять правило о непрерывности вследствие, например, исчезновения государства первоначального гражданства в результате разложения или расчленения».

В статье 5 текста проекта статей по дипломатической защите, принятого Комиссией на ее пятьдесят восьмой сессии в 2006 году и представленной на рассмотрение Генеральной Ассамблее как часть доклада Комиссии о работе указанной сессии, предусматривается исключение для традиционного правила о непрерывном гражданстве в контексте изменений гражданства имевших место в результате правопреемства государств [24].

В контексте недопустимости применения правила непрерывного гражданства при правопреемстве государств следует также подчеркнуть, что данное правило не соответствует современным тенденциям развития международного права, где физические лица могут рассматриваться в качестве субъекта международного права. Согласно Джону Дюгарду, применение данного правила в контексте правопреемства «не признает место физических лиц в современном международном правовом порядке» [25] с учетом «возрастающей тенденции признания индивидов в качестве субъектов международного права» [26].

Растущее количество международных инструментов (например, в сфере защиты прав человека), которые дают индивидам прямой доступ к международным инстанциям, отменяют фикцию, что ущерб нанесеный непосредственно индивиду должен рассматриваться как ущерб, нанесенный государству [27]. Согласно данной теории, право предъявлять требования против государства, ответственного за международное противоправное деяние, принадлежит индивиду, который пострадал от данного деяния. Данное право «прикреплено» к индивиду и не может подвергаться воздействию в результате смены его гражданства [28] и, ничто не должно препятствовать государству-правопреемнику предъявлять требова-ния в защиту прав данного индивида против государства, ответственного за международное противоправное деяние.

При исследовании международно-правовой практики и судебных прецедентов был выявлен ряд примеров, когда правило непрерывного гражданство не применялось в контексте правопреемства государств.

Например, в арбитражном разбирательстве по иску финских судовладельцев против Великобритании по поводу использования финских судов во время Первой мировой войны вышеуказанное правило не было применено. По данному делу Финляндия предъявила требование против Великобритании по возмещению ущерба, причиненного финским гражданам [29]. На момент совершения противоправного деяния жертвы были гражданами Российской Империи, так как Финляндия не была независимым государством. Однако британская сторона не представила каких-либо аргументов по поводу правомерности предъявления требований со стороны Финляндии. В то же время Единоличный арбитр, приняв дело на рассмотрение и подтвердив свою юрисдикцию по отношению к данному спору, также опосредовано признал, что требование со стороны Финляндии в защиту своих «новых» граждан имеет силу. В международно-правовой доктрине подоб-

ное молчание со стороны ответчика и арбитра было расценено как доказательство, что государства не ссылаются на правило непрерывного граж-дан-ства в случаях правопреемства государств, так же, как и отказа судебных органов от применения этого правила в контексте правопреемства государств.

Существуют также примеры, когда государству-правопреемнику была предоставлена репарация за его граждан, которые не имели его гражданства на момент совершения противоправного деяния. Наиболее известным из них явилось Соглашение о репарациях между ФРГ и Израилем 1952 года.

10 сентября 1952 года между Федеративной Республикой Германия и Израилем было подписано соглашение о репарациях *(Люксембургское соглашение),* по которому ФРГ должна была выплатить в товарной форме Израилю 3 млрд. марок в течение следующих 11–13 лет в качестве компенсации за международные противоправные деяния, совершенные Третьим рейхом во время второй мировой войны [30]. Кроме того, 450 млн. марок уплачивались организации «Конференция по материальным претензиям евреев к Германии» в качестве компесации жертвам нацистского режима [31].

На момент совершения международных противоправных актов со стороны Третьего Рейха жертвы были гражданами европейских стран (Германия, Польша и т.д.), а не гражданами Израиля, который не существовал тогда как независимое государство. Однако это не помешало Израилю предъявить требование от имени своих граждан и евреев, которые не являлись гражданами европейских стран. В январе и марте 1951 года правительство Израиля направило ноты четырём державам, оккупировавшим территорию Германии. Израиль требовал от Германии возместить расходы по приёму на своей территории 500 тысяч человек – беженцев из Европы. Расходы оценивались в размере 3-х тысяч долларов на человека общей суммой в 1,5 млрд. долларов [32]. То есть требования были связаны не с компенсацией ущерба, связанного с противоправными деяниями, а с последствиями данных деяний. В международно-правовой доктрине существует мнение, что данное соглашение является исключением из-за своего политического харакера, *ex gratia* характером выплат, а также фактом, что оно касается компенсации за военное преступление [33, 34], но, в то же время, оно является примером, где традиционное правило непрерывного гражданства не было применено.

Еще одним важным аспектом вышеуказанного соглашения является обстоятельство, которое затрагивает принцип, касающийся не применения правила непрерывного гражданства в контексте правопреемства государств, согласно которому государство-правопреемник не имеет права предъявлять требования против государства предыдущего гражданства индивида. Этот принцип закреплен в статье 5 текста проекта статей по дипломатической защите, принятого Комиссией Международного права ООН: *«Дипломатическая защита не осуществляется настоящим государством гражданства в отношении лица против предыдущего государства гражданства этого лица в связи с вредом, причиненным, когда это лицо было гражданином предыдущего государства гражданства, а не гражданином настоящего государства гражданства»*[35].

Несмотря на это, ФРГ не представила возражений касательно обстоятельства, что требования касаются, в том числе и индивидов, которые являлись не-

мецкими гражданами на момент совершения международного противоправного деяния.

Таким образом, обобщая вышесказанное, можно утверждать, что вопрос, касательно правопреемства в отношении прав, возникших в результате совершения международного противоправного деяния против гражданина государства-предшественника, затрагивает механизм дипломатической защиты. Изучение международно-правовой доктрины, практики государств и судебных прецедентов дает возможность утверждать, что применение традиционного правила непрерывного гражданства не может иметь место при правопреемстве государств, так как может привести к несправедливому результату, когда ни государство-предшественник, ни государство-правопреемник не будут вправе осуществить дипломатическую защиту индивида и международное противоправное деяние останется безнаказанным. Такова позиция многих ученых, Комиссии ООН по международному праву, а также государств и судебных органов, о чем говорилось выше. Лишь одно особое обстоятельство было выявлено касательно данного вопроса – это случай, когда государство-правопреемник не имеет права предъявлять требования против государства предыдущего гражданства индивида (однако и в данном случае имелись исключения).

ЛИТЕРАТУРА

1. Mavrommatis Palestine Concessions case (Jurisdiction), Judgment of 30 August 1924, P.C.I.J., Series A, no. 2.
2. Titles and Texts of the Draft Articles on Responsibility of States for Internationally Wrongful Acts Adopted by the Drafting Committee on Second Reading, 26 July 2001, U.N. Doc. A/CN.4/L.602/Rev.1.
3. Jean Philippe MONNIER, «La succession d'Etats en matière de responsabilité internationale», 8 A.F.D.I., 1962. С. 68.
4. Ibid.
5. Sir Robert JENNING & Sir Arthur WATTS, Oppenheim's International Law, vol. I (Peace: Introduction and Part 1), 9th ed., London, Longman, 1996. PP. 512–513.
6. Ian BROWNLIE, Principles of Public International Law, 5th ed. 1998, at P. 484
7. Ian SINCLAIR, «Nationality of Claims: British Practice», 27 British Y.I.L., 1950, at P. 130.
8. J.H.W. VERZIJL, International Law in Historical Perspective, Part VI (Juridical Facts as Sources of International Rights and Obligations), Leiden, A.W. Sijthoff, 1973. P. 723.
9. Addendum to First Report on Diplomatic Protection, by Mr John R. Dugard, Special Rapporteur, 20 April 2000, U.N. Doc. A/CN.4/506/Add.1, at P. 24.
10. Jean Philippe MONNIER, «La succession d'Etats en matière de responsabilité internationale», 8 A.F.D.I., 1962. CC. 68–69.
11. Suzanne BASTID, Droit international public, Univ. de Paris, les Cours de droit, 1976–1977, at P. 582.
12. Eric WYLER, La rиgle dite de la continuite de la nationalite dans le contentieux international, Paris, P.U.F., 1990, at P. 117.
13. NGUYEN QuocDinh, Patrick DAILLIER & Alain PELLET, Droit international public, 6th ed., Paris, L.G.D.J., 1999, p. 550.
14. Panevezys-Saldutiskis Railway case, Judgment of 28 February 1939, P.C.I.J., Serie A/B, no. 76, at P. 16.

15 Ibid., P.35.
16. Case Concerning the Barcelona Traction, Light and Power Company, Limited (Second Phase) (Belgium v. Spain), Judgment of 5 February 1970, I.C.J. Reports 1970, p. 3, individual opinion of Judge Fitzmaurice, p. 65, at PP. 100–101.
17. Charles ROUSSEAU, Droit international public, vol. V, Paris, Sirey, 1983, at P. 119.
18. Hazem M. ATLAM, Succession d'Etats et continuite en matiere de responsabilite internationale, doctoral thesis, Universite de droit, d'economie et des sciences d'Aix-Marseille (France), 1986, C.C. 154, 182.
19. J.H.W. VERZIJL, International Law in Historical Perspective, t. V, Leiden, A.W. Sijthoff, 1972, at P. 449.
20. D.P. O'CONNELL, State Succession, vol. I, PP. 538–539.
21. Gabriele SALVIOLI, «Les regles generales de la paix», R.C.A.D.I., t. 46, 1933–IV, at pp. 125–127
22. Addendum to First Report on Diplomatic Protection, by Mr John R. Dugard, Special Rapporteur, 20 April 2000, U.N. Doc. A/CN.4/506/Add.1, at P. 1.
23. Ibid., at para. 21
24. Работа Комиссии Международного Права, седьмое издание, Том I, издание Организации Объединенных Наций, Нью-Йорк, 2009 год, № R.07.V.9 ISBN 978-92-1-433038-7. CC. 445–446.
25. Addendum to First Report on Diplomatic Protection, by Mr John R. Dugard, Special Rapporteur, 20 April 2000, U.N. Doc. A/CN.4/506/Add.1, at P. 21.
26. Ibid, at P. 18
27. Patrick DUMBERRY, «L'entreprise, sujet de droit international? Retour sur la question a la lumiere des developpements recents du droit international des investissements», 108 R.G.D.I.P., 2004 PP. 103–122.
28. Francisco ORREGO VICUCA, The Changing Law of Nationality of Claims, Interim Report, in: International Law Association, London Conference (2000), Committee on Diplomatic Protection of Persons and Property, p. 28, at P. 36:
29. Claim of Finnish Shipowners against Great Britain in respect of the Use of Certain Finnish Vessels During the War (Finland v. United Kingdom), Award of Dr. Bagge, 9 May 1934, in: U.N.R.I.A.A., vol. III, p. 1481.
30. Agreement between the State of Israel and the Federal Republic of Germany on Compensation, entered into on 27 March 1953, in: 162 U.N.T.S. P. 205.
31. Protocol II between the Federal Republic of Germany and the Conference on Jewish Material Claims against Germany, in: 162 U.N.T.S., P. 205.
32. Note of 12 March 1951, in: Documents Relating to the Agreement between the Government of Israel and the Government of the Federal Republic of Germany, published by the Ministry of Foreign Affairs of Israel (see documents nos. 5 & 22).
33. Rudolf DOLZER, The Settlement of War-Related Claims: Does International Law Recognize a Victim's Private Right of Action? Lessons After 1945, 20 Berkeley J. Int'l L., 2002, p. 296,
34. Bert-Wolfgang EICHHORN, Reparation als volkerrechtliche Deliktshaftung: Rechtliche und praktische Probleme unter besonderer Berucksichtigung Deutschlands (1918–1990), Baden Baden, Nomos Verlagsgesellschaft mbH & Co. KG, 1992, at P. 158.
35. Работа Комиссии Международного Права, седьмое издание, Т. I, издание Организации Объединенных Наций, Нью-Йорк, 2009, № R.07.V.9 ISBN 978-92-1-433038-7. С. 445.

STATE SUCCESSION TO THE RIGHTS, ARISING IN CONSEQUENCE OF THE COMMISSION OF AN INTERNATIONALLY WRONGFUL ACT AGAINST THE RESIDENT OF THE PREDECESSOR STATE

E. Sargsyan

SUMMARY

The present article is devoted to the issue of succession in respect of rights arising from internationally wrongful acts committed against a citizen of a predecessor state. The institute of diplomatic protection as a mechanism of protecting the interests of the citizen by the successor state, as well as the problems of the application of the traditional rule of continuous nationality are discussed.

Keywords: state succession, diplomatic protection, continuous nationality rule.

ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱՎԱՀԱՋՈՐԴՈՒԹՅՈՒՆԸ ԻՐԱՎԱՆԱԽՈՐԴ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑՈՒ ԴԵՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ԱՌԱՋԱՑԱԾ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ

Է.Ս. Սարգսյան

Ամփոփում

Հոդվածը վերաբերում է իրավանախորդ պետության քաղաքացու դեմ կատարված միջազգային իրավախախտման հետևանքով առաջացած իրավունքների նկատմամբ իրավահաջորդությանն առնչվող հարցերին: Դիտարկվել է դիվանագիտական պաշտպանության ինստիտուտը` որպես իրավահաջորդ պետության կողմից քաղաքացիների շահերը ներկայացնելու մեխանիզմ, ինչպես նաև անընդմեջ քաղաքացիության սկզբունքի կիրառման համատեքստում առաջացող խնդիրները:

Հիմնաբառեր` պետությունների իրավահաջորդություն, դիվանագիտական պաշտպանություն, անընդմեջ քաղաքացիության սկզբունք:

ԴԱՍԱԿԱՆ (ԴԵԿԱՐՏՅԱՆ) ՊԱՐԱԴԻԳՄԱՅԻ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԸ ԱՌԿԱ ՌԻՍՈՒՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Գ.Ս. Եսայան

ԱՄՓՈՓՈՒՄ

Հոդվածում ներկայացված են ներկայիս ուսուցման համակարգում դասական՝ դեկարտյան պարադիգմայից ածանցված մեխանիստական մտածելակերպի սահմանափակումները: Ինչպես նաև աշխատանքում առաջարկված են այդ սահմանափակումներից դուրս գալու ելքերը:

Հիմնաբառեր՝ պարադիգմա, մեխանիստական մտածելակերպ, կրթական համակարգ:

Հանճարը շիզոֆրենիկից տարբերվում է նրանով,
որ նա կարողացել է ապացուցել իր
ճշմարտացիությունը, իսկ երկրորդը՝ ոչ:

Աշխարհի դասական (մեխանիստական) պատկերը, ինչն իր վերջնական հաստատումը գտավ դեկարտյան փիլիսոփայության մեջ, իր ազդեցությունը թողեց բոլոր գիտական ոլորտների վրա՝ ֆիզիկա, կենսաբանություն, մաթեմատիկա, տիեզերաբանություն և այլն: Մի կողմից դրանցում առկա են էական տարբերություններ, իսկ մյուս կողմից այդ գիտությունների մեթոդաբանական հիմքում ընկած են ընդհանուր սկզբունքներ: Այդ շարքին են պատկանում

1) դետերմինիզմի սկզբունքը, ինչի համաձայն բնության երևույթների միջև հաստատվում են միանշանակ պատճառահետևանքային կապեր, 2) գիտական գիտելիքների վերաբերյալ բացարձակ իսկության և բացարձակ օբյեկտիվության սկզբունքը, 3) գիտական մեթոդի ունիվերսալ լինելու ընդունումը, 4) մի առարկայի վերաբերյալ մեկ կոնցեպցիայի գոյությունը և բացարձակ ճշմարտության գոյության ընդունումը և 5) գիտության անընդհատ, անդադար զարգացման ընդունումը: Այս սկբունքները և դրույթները հանդիսանում են մարդու և իրեն շրջապատող աշխարհի, բնության, այլ մարդկանց հետ փոխհարաբերությունների որոշակիացումը և «օբյեկտիվության» չափանիշները: Այդ սկզբունքներում և դրույթներում արտացոլված է ռացիոնալության այն տիպը, ինչը կարելի է բնորոշել իբրև դասական, դեկարտյան: Վերո-

նշյալ սկզբունքներով և դրույթներով առաջնորդվում է մեր կրթական ամբողջ համակարգը՝ դպրոցներ, բարձրագույն և գիտական հաստատություններ:

Նման ուղղությամբ շարժվելով մարդկությունը բազմաթիվ գիտական նվաճումներ է ձեռք բերել և գիտական ոլորտում անասելի թռիչքներ գործել: Իհարկե, այդ ձեռքբերումները կատարվել են այնպիսի գիտնականների կողմից, ում անունները հայտնի են ոչ միայն գիտական շրջանակներին, այլ նաև հասարակությանը ընդհանրապես: Դրանց թվին են պատկանում Ի. Նյուտոնը, Ա. Էյնշտեյնը, Կ. Ցիալկոսկին, Դ. Մենդելենը, Չ. Դարվինը, Կ. Լինեյը, Բ. Գեյթսը, Ջ. Նեշը և այլոք: Այս և շատ ուրիշ հանճարների շնորհիվ է, որ մենք այսօր ապրում ենք այսպիսի աշխարհում, և դժվար է նույնիսկ պատկերացնել, թե ինչպիսին կլիներ աշխարհը, եթե չլինեին այդ գիտնականները:

Սույն աշխատանքում փորձելու ենք հակիրճ վերլուծել և ներկայացնել ներկայիս կրթական համակարգի սահմանափակումները, ինչը (կրթական համակարգը) ձևավորվել է աշխարհի դասական (դեկարտյան) պատկերի և դրանում գործող սկզբունքների և դրույթների միջոցով:

Մեր կրթական համակարգը ստանձնել է այն դերը, որի օգնությամբ պետք է ստեղծվեն, ի հայտ գան ականավոր գիտնականները: Այն պետք է նպաստի և բացահայտի երեխաների, պատանիների, երիտասարդների մեջ այն հանճարը, որը հետագայում առաջ կտանի գիտությունը: Կրթական հաստատություններում ընդունված գնահատման համակարգի օգնությամբ դասավանդողները փորձում են խրախուսել նման անձանց և դրանով իսկ խթան հանդիսանալ: Այդ գնահատականները արտացոլում են այն գիտելիքները, որոնք անհատը յուրացրել է դասապրոցեսի ժամանակ: Հետագայում, այդ գիտելիքները զարգացնելով, ստեղծվում են հանճարեղ հայտնագործություններ:

Առաջին հայացքից կարծես թե անթերի գործող համակարգ է. սակայն արդյո՞ք այդքան հարթ է ընթանում, ինչպես, որ մեզ է թվում: Այսպիսով, այն անձինք, ովքեր լավ են յուրացրել դասապրոցեսի ժամանակ տրված գիտելիքները, պետք է հետագայում հենց դառնան այն հանճարները, որոնց մենք վերևում նշեցինք և, հետևաբար, այն անձինք, ովքեր դասապրոցեսի ընթացքում լավ չեն յուրացնում գիտելիքները, լավ չեն կարողանում սովորել, իրենց տեղը կզբաղեցնեն գիտության ոլորտից այն կողմ: Ամեն ինչ տրամաբանական է և պետք է որ անշեղորեն գործեր, սակայն, որքան էլ որ զարմանալի թվա, վերոնշյալ ականավոր գիտնականները (Ի Նյուտոն, Ա. Էյնշտեյն, Կ. Ցիալկովսկի, Դ. Մենդելեև, Չ. Դարվին, Կ. Լինեյ, Բ. Գեյթս, Ջ. Նեշ և էլի շատ այլոք), դպրոցում ոչ միայն չէին փայլում իրենց գիտելիքներով, այլ նաև ստանում էին անբավարար գնահատականներ: Նրանցից շատերն էլ իրենց տարօրինակ վարքի համար համարվում էին հոգեբանական շեղումներ ունեցող անձինք: Այնուամենայնիվ, սրանք այն մարդիկ էին, առանց որոնց դժվար կլիներ պատկերացնել գիտության ներկայիս վիճակը: Ստացվում է,

որ հանճարեղ նորարարություններ անելու համար մեր կրթական համակարգում տրված գիտելիքների լավ յուրացումը պարտադիր պայման չէ և դրանք նույնիսկ վատ յուրացնողները կարող են ականավոր գիտնականներ դառնալ: Այս ամենին էլ եթե ավելացնենք այն փաստը, որ նման անձինք ոչ միայն դպրոցում, այլ նաև կյանքում հաճախ աչքի են ընկել ոչ սովորական՝ տարօրինակ պահվածքով, խնդիրը ավելի է խճճվում: Դեռևս Չ. Լոմբրոզոն (1836) զուգահեռներ էր տանում հանճարեղության և հոգեխանգարման միջև՝ համարելով, որ հանճարներին բնորոշ են այս կամ այն հոգեկան շեղումները [6]: Իսկ գուցե հենց այդտեղից պետք է սկսել հետազոտությունները և, հնարավոր է, այդտեղ է թաքնված վատ սովորելու բանալին: Այսպես.

Մեր կողմից նշված Ա. Էյնշտեյնը, Ի. Նյուտոնը և Բ. Գեյթսը, համաձայն Քեմբրիջի և Օքսֆորդի աշխատակիցների, ցուցաբերել են աուտիզմին բնորոշ ախտանիշներ, ավելի ստույգ՝ Ասպերգերի համախտանիշ [14]: Ասպերգերի համախտանիշը ավելի շատ նկատվում է արական սեռի ներկայացուցիչների մոտ: Համարվում է, որ այդ համախտանիշով մարդիկ ժամանակի ընթացքում սովորում են ապրել այդ ախտանիշների հետ, սակայն երբրիցե չեն «բուժվում». լիարժեք ապաքինում որպես այդպիսին երբեք չի լինում: Նրանք ստիպված են լինում ինտելեկտի օգնությամբ սովորել սոցիալական նորմերին, ինչի արդյունքում սոցիալական զարգացումը դանդաղում է: Հասակակիցների հետ շփվելու ցանկության բացակայությունը ևս համարվում է այդ համախտանիշի բնորոշ դրսևորումներից: Այդպիսի մարդիկ ցուցաբերում են սոցիալական շփումներում նախվություն, գերճշմարտախոսություն և, երբ նրանց դիտողություն են անում, նրանք չափից ավելի վիրավորվում են:

Նման անձինք դժվարությամբ են հասկանում, թե ինչ է ցանկանում ասել կողմանկի մարդը, երբ չի արտահայտվում ուղիղ կերպով (այսինքն չեն կարողանում հասկանալ տողատակերը): Դա նրանից չէ, որ նրանք չեն կարողանում տրամաբանել, այլ նրանից է, որ նրանք չեն կարողանում ընտրություն կատարել հնարավոր պատասխանների միջև. սոցիալապես «կույր» մարդը չի կարողանում հավաքել բավարար տեղեկատվություն, որպեսզի այն անի:

Ասպերգերի համախտանիշով տառապող մարդիկ սովորաբար առօրյա շփումների ժամանակ խնդիրներ են ունենում հասակակիցների հետ: Այդ խնդիրները կարող են լինել շատ լուրջ՝ հատկապես երեխա և պատանի տարիքում. նրանք իրենց յուրօրինակ վարքի, խոսքի և հետաքրքրությունների համար դպրոցում հաճախ դառնում են խուլիգանների, կռվարարների զոհ: Այդպիսի երեխաները և պատանիները մտահոգվում են, երբ իրենց նկատմամբ ցուցաբերում են նման վատ վերաբերմունք, նրանք չեն կարողանում հասկանալ, թե ինչն են իրենք սխալ արել (ոչ ճիշտ): Այդքանով նրանք անպաշտպան են և ունեն խնամքի և պաշտպանության կարիք, ինչին մենք կանդրադառնանք ավելի ուշ:

Ասպերգերի համախտանիշով անձը, երբ զբաղվում է իր սիրելի զբաղմունքով, այդ ընթացքում, բառիս բուն իմաստով, ոչինչ չի լսում և ոչինչ չի տեսնում՝ ցուցաբերելով ընտրված զբաղմունքում բացառիկ կոմպետենտություն: Իրենց հետաքրքրությունների ոլորտից դուրս գտնվող այլ բաների նկատմամբ հաճախ դրսևորում են ծուլություն: Դպրոցական տարիքում նրանցից շատերը համարվում են խելացի աշակերտներ, սակայն անառաջադեմ (անբավարար սովորող), ովքեր կարող են ավելի լավ սովորել իրենց հասակակիցներից, սակայն ցուցաբերում են ծուլություն (երբեմն նաև այն ոլորտներում, որն իրենք սիրում են): Նման և այլ բաների պատճառով նրանց հաճախ հեռացնում են դպրոցից [11, 47-50]:

2009թ. փետրվարի 18-ին «The Daily Telegraph» ամսագրում «Charles Darwin had autism, leading psychiatrist claims» վերնագրով հոդվածում իռլանդացի հոգեբույժը իր կողմից հավաքված փաստերի միջոցով փորձում էր հաստատել, որ Չ. Դարվինը ևս տառապել է Ասպերգերի համախտանիշով [15]:

Հանճարեղ գիտնականներից շատերին բնութագրում էին իբրև շիզոֆրենիկներ (Ջ. Նեշ) կամ շիզոֆրենիային հատուկ ախտանիշներ ունեցող մարդկանց (Դ.Մենդելեև, Կ. Լինեյ, Կ. Ցիալկովսկի): Նրանցից գուցե ամենավառ օրինակ կարող է ծառայել նոբելյան մրցանակակիր, մաթեմատիկոս, տնտեսագետ Ջ. Նեշը, ում ախտորոշել էին իբրև պարանոիդ-շիզոֆրենիկ: Նրա պատմությունը հագեցած է բազում փորձություններով՝ ստիպողական հոգեբուժարաններ, քաղաքական հալածանքներ և այլն: Նրա մոտ հաճախ դրսևորվում էին վախեր՝ ասես թե իրեն հետապնդում են, ցանկանում են ինչ-որ կարևոր տեղեկություններ կորզել, ծառայեցնել իրենց շահերին և այլն: Սակայն այդ ամենը ի վերջո հաղթահարելով՝ նա արժանացավ գիտության մեջ ամենաբարձր պարգևին՝ նոբելյան մրցանակին [16]:

Այս գիտնականները, դրսևորելով ոչ «նորմալ» վարք, ինչը պայմանավորված էր յուրօրինակ մտածելակերպով, իրենց հայտնագործությունները ևս հաճախ անում էին ոչ «նորմալ» ճանապարհներով, որտեղ բացակայում էին կամ շատ թույլ էին պատճառահետևանքային կապերը, խնդրի վերաբերյալ հարցադրումները սովորականից տարբերվում էին և նույնիսկ թվում էին տարօրինակ: Բոլորիս հայտնի է Ի. Նյուտոնի պատմությունը կապված խնձորի հետ: Ի. Նյուտոնի կենսագրությունը ներկայացնողներից Ու. Սթակլին գրում է, որ 1666թ., երբ Ի. Նյուտոնը նստած էր այգում և այդ ժամանակ ծառից ցած ընկավ խնձոր, նրա մոտ առաջին անգամ հանդես եկավ ձգողության ուժի վերաբերյալ միտքը [1, 17]: Իսկ, օրինակ, Ա. Էյնշտեյնը, երբ տվեց աշխարհի ամենաաղմկահարույց և գիտության պատմության մեջ ամենահայտնի բանաձևը՝ $E=mc^2$, չուներ և չէր օգտվում լաբորատորիաներից: Ինչքան էլ զարմանալի թվա, այդ ժամանակ նա օգտվում էր ոչ թե նորագույն բացահայտումներից, այլ տասնյակ և նույնիսկ հարյուրավոր տարիներ առաջ

մահացած գիտնականների նվաճումներից: Սակայն դա չէ ամենագլխավորը. «Էյնշտեյնը իր գաղափարները չզարգացրեց որոշ քանակի նոր արդյունքների կոմպիլյացիայի ճանապարհով: Ո՛չ, նա, ինչպես մենք տեսնում ենք, երկար ժամանակ անցկացրեց, «երազկոտ» մտածելով լույսի մասին, դրա արագության, այն բանի մասին, թե ինչն է մեր տիեզերքում հանդիսանում տրամաբանական կամ անտրամաբանական: Ճիշտ է, այդ մտորումները «երազկոտ» էին թվում միայն կողմնակի անձանց, ովքեր չէին հասկանում Ա. Էյնշտեյնին: Քանի որ այդ մտորումները նրան բերեցին բոլոր ժամանակների ամենամեծագույն ինտելեկտուալ նվաճումներից մեկին» [3, 118, 119]:

Մի այլ «խելահեղ» երազող էր համարվում Կ. Ցիալկովսկին: Նրա որոնումների կարգախոսը գիտական հաշվարկն էր, ինչը, համաձայն նրա «...քայլում է անուրջների, ֆանտազիաների, հեքիաթների հետևից» [5, 175]: Կ. Ցիալկովսկու «Фатум, судьба, рок» անվանումով չհրատարակված ձեռագիր աշխատանքում գրված է. «Դասատուներ ես ընդհանրապես չեմ ունեցել, այդ իսկ պատճառով ես ստիպված էի լինում ոչ թե ընդունել և յուրացնել, այլ շատ կառուցել և ստեղծել: Ցուցումներ, օգնություն ոչ մի տեղից երբևիցե չեն եղել, անհասկանալի բաները գրքերում շատ էին, իսկ դրանք լուսաբանել ստիպված էի լինում ինքնուրույն: Այսպես ասած, ես ամբողջ կյանքում սովորեցի մտածել, հաղթահարել դժվարությունները, լուծել հարցերը և խնդիրները: Չունենալով գրքեր և դասատուներ՝ շատ գիտություններ ստեղծվել են ինքնուրույնաբար՝ իմ կողմից» [5, 178]: Այսպիսին էր հանճարեղ գիտնական-ֆանտազյորը:

Պարբերական աղյուսակի բացահայտման պատմությունը այնքան հայտնի է, որ ցանկացած ոք գիտի, թե ինչպես է այն տեղի ունեցել: Դ. Մենդելեևը պատմում է. «Գլխում ամեն ինչ կառուցվել էր, բայց աղյուսակի տեսքով չէի կարողանում արտահայտել:» Հետո նա հավելում է. «Երազումս տեսնում եմ աղյուսակը, որտեղ տարրերը դասավորված են ինչպես պետք է: Արթնացա և իսկույն նեթ գրեցի թղթի վրա: Հետո անհրաժեշտ եղավ միայն մի տեղում կատարել ուղղում» [10, 88]: Այսքանից հետո, իհարկե, զարմանալի չէ, որ այդպես էլ իր երկրում հանճարեղ գիտնականը ակադեմիկոսի կոչում չստացավ:

Չ. Դարվինի մոտ էվոլյուցիոն տեսության մտահղացումը ևս պակաս տարօրինակ կերպով չի եղել: Նա պնդում էր, որ էվոլյուցիոն տեսության վարկածը իր մոտ առաջ է եկել 1842թ., և նրան այդ գաղափարին է բերել անգլիացի հայտնի տնտեսագետ Թոմաս Մալթուսի գիրքը («Опыт о законе народонаселения 1798») [4, 128]: Այդ գրքում Մալթուսը ապացուցում էր, որ ժողովրդի քանակը երկրագնդի վրա աճում է համաձայն երկրաչափական պրոգրեսիայի, իսկ գոյատևման միջոցները՝ ընդամենը թվաբանական: Հենց այս գաղափարն էր հանճարեղ գիտնականին մղել ստեղծելու էվոլյուցիոն տեսությունը, այլ ոչ թե Քեմբրիջում ստացած գիտելիքները, որի մասին նա

գրում էր. «Այն ժամանակը, որ ես անցկացրեցի Քեմբրիջում, իսկապես կորած էր, և նույնիսկ ավելի վատ, քան կորած: Երբեմն մենք խմում էինք չափից ավելի, իսկ դրանց հետևում էին ուրախ երգերը և թղթախաղը» [12, 87]:

Դպրոցական տարիներին ուսուցման գործում առաջիններից չէր և նույնիսկ վերջին հորիզոնականներն էր զբաղեցնում մյուս հանճարեղ գիտնական Կ. Լիննեյը: Իր դպրոցի մասին նա գրում էր. «Կոպիտ դասատուները այն բանի փոխարեն, որ երեխաներին տան սկզբնական գիտելիքներ, օգտագործում էին այնպիսի դաժան մեթոդներ, որ մազերս բիզ-բիզ էին կանգնում» [2, 11]: Ամբողջ ազատ ժամանակը և ոչ միայն ազատ նա անցկացնում էր արվարձաններում և ուշադրությունը ուղղում բուսական աշխարհի վրա: Նրա կենսագրությունը ներկայացնողներից մեկի մոտ մենք կարդում ենք հետևյալը. «Իր ոլորտում նա չէր աշխատում մեծ ջանքեր գործադրելով և չուներ մեծ լսարան: Մեծ հետազոտություններ չի անցկացրել բնագիտության ոլորտում: Չուներ խորը գիտելիքներ բնության երեք թագավորությունների վերաբերյալ: Խոշոր կենսաբան կամ կենդանաբան չէր» [2, 197]: Այս ամենը ասված էր մարդկության պատմության մեջ, գուցե, ամենախոշոր կենսաբանի և կենդանաբանի մասին:

Հաջորդ հանճարեղ գիտնականը նախորդի պես դասատուներին չէր մեղադրում, սակայն չէր էլ ցանկանում սովորել այն, ինչն իրեն չէր հետաքրքրում: Վեցերորդ դասարանում անբավարար սովորելու և մոր հետ վեճեր սարքելու համար նրան ստիպված եղան տանել հոգեբանի մոտ, ով մեկ տարի աշխատելուց հետո նրա ծնողներին ասաց. «Դուք կպարտվեք, եթե փորձեք ստիպել, որ նա ավանդական վարք ցուցաբերի կամ լինի լոդ: Դուք ստիպված եք սովորել նրան, քանի որ ծեծը ևս օգուտ չի տա» [7, 6]: Այս ամենը մեր ժամանակակցի՝ Բ. Գեյթսի մասին է, ով հիմնադրեց «Մայքրոսոֆթ» ընկերությունը և առանց որի դժվար է այժմ պատկերացնել աշխարհը: Նրան դասատուները համարում էին «բութ», սակայն, երբ նա կատարեց իր առաջին քայլերը, շրջապատը ստիպված եղավ վերանայելու սեփական կարծիքը: Այսպիսին է եղել Բ. Գեյթսը, ով միշտ հավատացել է, որ կյանքը քաոսային է և իր հաջողությունները կախված են եղել ինչ-որ թիթեռից (խոսքը թիթեռի էֆեկտի մասին է՝ պարզաբանումը մերն է) [7, 86]:

1994թ.՝ 66-տարեկանում, տնտեսագիտությունից նոբելյան մրցանակ ստացավ հանճարեղ տնտեսագետ և մաթեմատիկոս Ջ. Նեշը: Մրցանակը ստանալիս նա հանդիսավոր ելույթից հրաժարվեց՝ վախենալով առողջական վիճակի սրացումից: Բանը նրանում էր, որ նրա մոտ դեռևս տարիներ առաջ ախտորոշել էին շիզոֆրենիա: Ինչպես և վերոնշյալ գիտնականները, նա ևս դպրոցում հաճախ ստանում էր անբավարար գնահատականներ: Չորրորդ դասարանի նրա գնահատականների ցուցակում անբավարար էին գնահատվել երաժշտությունը և մաթեմատիկան: Դասատուները բողոքում էին նրա-

նից և ասում. «Նա պետք է ավելի շատ աշխատի և սովորի հետևել կանոններին» [13, 31]: Դասերի ժամանակ հաճախ նկատում էին, որ նա դասատուներին լսելու փոխարեն ինչ-որ բանի մասին երազում է: Այդպիսին էին նրա տարիները միջնակարգ դպրոցում: Ավելի ուշ՝ մաթեմատիկայի առաջադրանքները ստանալիս, նա գտնում էր իր սեփական լուծումները, որոնք ավելի պարզ էին քան դասագրքերում տրվածները [13, 34]: Ջ. Նեշի կյանքում մաթեմատիկայի նկատմամբ առաջին խթանը հանդիսացել է Է. Բելլի «Մաթեմատիկայի ստեղծողները» գիրքը (1937), որտեղ ներկայացված էինականավոր մաթեմատիկոսների կենսագրությունները և գործերը: Այդ գրքում նա հանդիպում է մաթեմատիկայի գաղտնիքների հետ, ինչը համաձայն նրա «...կապ չուներ դպրոցում դասավանդվող հոգնացուցիչ և անիմաստ թվաբանության և երկրաչափության հետ» [13, 34]:

Ներկայացված 8 հանճարեղ գիտնականները, լինելով գիտության տարբեր ոլորտների ներկայացուցիչներ, ունեին մի շարք ընդհանրություններ. դպրոցում աչքի չէին ընկնում իրենց առաջադիմությամբ և նույնիսկ համարվում էին անբավարար սովորողներ: Նրանց հատուկ էր ոչ սովորական (ժամանակի նորմերին համապատասխան) վարք, նրանցից որոշներն էլ առօրյա շփումներում ունենում էին լուրջ խնդիրներ: Իրենց հանճարեղ հայտնագործություններին խթան են հանդիսացել «անհասկանալի», պատճառահետևանքային կապերից զուրկ կամ շատ թույլ պատճառահետևանքային կապեր ունեցող իրավիճակները, գիտելիքները և այլն, ինչի պատճառով նրանք համարվել են տարօրինակ, իսկ նրանց հայտնագործությունների մղող խթանները անհասկանալի (խնձոր, երազ, ամենատարբեր ֆանտազիաներ): Նրանց տարբերվելը հասարակությունից, հասարակական նորմերին չենթարկվելը պայմանավորված էր այլ գիտակցական վիճակի հետ, ինչը համապատասխանում էր աշխարհի ուրիշ պատկերին, որը տարբերվում էր դասական՝ դեկարտյան աշխարհի պատկերից: Դրանում (նրանց աշխարհի պատկերում) չէին գործում կամ թույլ էին գործում այն սկզբունքները և դրույթները, որոնք համապատասխանում են դասական աշխարհի պատկերին, որոնք (սկզբունքները և դրույթները) մենք բերել ենք վերևում: Նման մարդիկ շրջապատի կողմից անհասկացված լինելու հետևանքով, ինչի պատճառը մտածելակերպի տարբերությունն է, պայքարում են իրենց գաղափարների ճշմարտացիության համար՝ փորձելով հաղթահարել շրջապատի կողմից թելադրված սկզբունքները: Նրանք, բառիս բուն իմաստով, ամեն մի փոքրիկ ճշմարտությունը ապացուցելու համար կռիվ են տալիս, և դժբախտաբար, նման հանճար իրենց մեջ կրող մարդկանցից շատերը այդ պայքարում կարող են դուրս մղվել, պարտվել և չիասկացվել:

Ինչպես նշեցինք, դպրոցում վատ սովորելու, հասակակիցների հետ ոչ «նորմալ» հարաբերությունների պատճառը գիտակցական վիճակի տար-

բերությունն էր: Դպրոցներում, հասարակության լայն շրջանակներում գործող մեխանիստական մտածելակերպը, ինչը ձևավորվել և իր վերջնական հաստատումն էր գտել դեկարտյան փիլիսոփայությունում, թույլ չէր տալիս նրանց հասկացված լինել: Իրենց աշխարհի պատկերում գործում էին այլ սկզբունքներ և դրույթներ, որոնք չէին ենթարկվում դասական աշխարհի պատկերից ածանցված սկզբունքներին և դրույթներին. այդ իսկ պատճառով, նրանցից շատերին համարում էին ոչ ադեկվատ վարք ցուցաբերող, նրանց պարզաբանումները դետերմինացիոն կապերի թույլ լինելու կամ ընդհանրապես բացակայելու պատճառով համարվում էին սխալ և անպետք: Սակայն, ինչպես տեսնում ենք, հենց նման՝ ոչ մեխանիստական մտածելակերպի արդյունքում է, որ նրանց գլխում ծնվել են հանճարեղ հայտնագործություններ: Մինչ այժմ մեր կրթական համակարգում գերիշխում է այդ մեխանիստական մտածելակրպը, ինչի պատճառով շատ հանճարեղ մտքեր կարող են ճնշվել և ի հայտ չգալ: Ստիպելով երեխաներին, պատանիներին մի կողմ դնել երազկոտությունը, ֆանտազիաներով տարվելը և նրանց մեջ մշակելով մեխանիստական մտածելակերպ՝ միաժամանակ սպանում են հանճարին: Իսկ ի՞նչպես վարվել, ի՞նչ անել այդ դեպքում: Մեր կարծիքով կրթական համակարգում պետք է մեխանիստական մտածելակերպին զուգահեռ թույլ տրվի ոչ մեխանիստական մտածելակերպի գոյությունը: Դեռևս տարիներ առաջ հայազգի հոգեբան Արշակ Իսրայելի Միրաքյանը (1929-1995) հոգեկան արտացոլման վերաբերյալ խոսում էր հոգեբանությունում, փիլիսոփայությունում, ֆիզիոլոգիայում և այլ ոլորտնեում մեխանիստական մտածելակերպի թերությունների և սահմանափակումների մասին և մատնանշում ոչ մեխանիստական մտածելակերպի անհրաժեշտությանը: Հետազոտելով հոգեբանության մեջ ամենավիճելի հարցերից մեկը՝ հոգեկան արտացոլման խնդիրը՝ նա եկավ այն համոզման, որ այդ խնդիրը լավ հասկանալու համար անհրաժեշտ է հաղթահարել մեխանիստական մտածելակերպը և այդ հարցին մոտենալ այլ մտածելակերպի միջոցով [8, 97]: Բանը նրանում է, որ ոչ միայն հոգեբանները, այլ նաև փիլիսոփաները, հոգեֆիզիոլոգները, կիբերնետիկները և այլոք փորձում էին այդ խնդիրը մեկնաբանել հենց իրենից՝ խնդրից ելնելով: Սակայն, համաձայն Ա. Միրաքյանի, դա մեխանիստական մտածելակերպի արդյունք է, և նման կերպ շարժվելիս հնարավոր չէ գտնել բուն խնդրի ստեղծող սկզբունքները և օրինաչափությունները: Նա առաջարկում էր այդ խնդիրը հետազոտելիս իբրև ելակետային տվյալներ վերցնել դրան ինդիֆերենտ տվյալներ: Չմանրամասնելով նրա հայեցակարգը՝ միայն նշենք, որ նա այդ կերպ շարժվելով բացահայտեց, որ հոգեկան արտացոլման գործընթացը իրականանում է անիզոտրոպ սկզբունքների ստեղծման շնորհիվ:

Ոչ մեխանիստական մտածելակերպը բնորոշ էր նաև վերոնշյալ հանճարներին: Հենց այդ մտածելակերպի առկայությունն էր առիթ տալիս

շրջապատի մարդկանց նրանց տարօրինակ համարել, սակայն միաժամանակ կրկին դրա գոյությունն էր, որ նրանց «ստիպում» էր կատարել հանճարեղ հայտնագործություններ: Ուղղակի այդ հայտնագործությունները կատարվում էին ոչ «նորմալ» ճանապարհով, ինչի (նորմալի) սահմանները գծվել էին դեկարտյան, մեխանիստական աշխարհի պատկերի շրջանակներում: Մինչ այժմ չընկալելով նրանց ոչ մեխանիստական մտածելակերպը՝ շատերը փորձում են այդ հայտնագործությունները խթանող ազդակները տեղավորել մեխանիստական մտածելակերպի շրջանակներում (Ի. Նյուտոնի խնձորը, Դ. Մենդելեևի երազը, Ա. Էյնշտեյնի, Կ. Ցիալկովսկու ֆանտազիաները և այլն)՝ մի դեպքում համարելով, որ այդ խթանները աղավաղվել են նրանց կենսագրությունները ներկայացնողների կողմից, իսկ մյուս դեպքերում նրանց վերագրել են հոգեկան այս կամ այն հիվանդությունները, ինչի պարագայում դետերմինացիոն կապերը աղավաղվում են: Սակայն դրանք հասկանալու համար մենք ևս պետք է ձեռք բերենք այլ՝ ոչ մեխանիստական մտածելակերպ, ինչը առաջարկում էր նաև հայազգի հոգեբան Ա. Միրաքյանը: Խնդիրներին նման հայացքով նայելու դեպքում (ոչ մեխանիստական մտածելակերպի օգնությամբ) մենք կկարողանանք ոչ միայն լավ հասկանալ այդ հանճարեղ գիտնականներին, այլ նաև ճանապարհ կհարթենք ուրիշ բացահայտումների:

Կրթական ոլորտում թույլ տալով ոչ մեխանիստական մտածելակերպի գոյությունը մենք ոչ միայն երեխաներին, պատանիներին կթողնենք ստեղծագործել այդ մտածելակերպին համապատասխան, այլ նաև նրանց մեջ կմշակենք այդ մտածելակերպը (ասենք, շատ խնդիրների լուծման համար իբրև ելակետային տվյալներ չվերցնել այդ խնդրի արդյունքները, ինչպես մատնանշում էր Ա. Միրաքյանը): Կրթական ոլորտում նման մտածելակերպի առկայության անհրաժեշտության մասին խոսում էր հայազգի մի այլ գիտնական ևս՝ Ռ.Մ. Նաղդյանը, և մատնանշում, որ նախևառաջ պետք է լինեն համապատասխան մտածելակերպով ուսուցիչներ [9]: Իհարկե, մենք այս աշխատանքով չենք ցանկանում հերքել մեխանիստական մտածելակերպի անհրաժեշտությունը և դրանից բխող արդյունավետ հետևանքները: Սակայն, եթե այդ մտածելակերպի հետևանքով, նույնիսկ 100 տարին մեկ մարդկությունը կարող է կորցնել մի Էյնշտեյն, Նեշ կամ Դարվին, ապա անհրաժեշտ է մտածել այդ մասին և ջանքեր ներդնել նման բանի բացառման գործում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. *Акройд П.* Исаак Ньютон. Биография. М., Издательский дом: КоЛибри, Азбука-Аттикус. 2011. С. 62.
2. *Бобров Е.* Карл Линней. Ленинград: Изд-во «НАУКА». Академия наук СССР. Ленинградское отделение. 1970. С. 288.

3. *Боданис Д.* E=mc^2 Биография самого знаменитого уравнения мира. Перевод с английского С. Ильина. КоЛибри М., 2009. С. 448.
4. *Дарвин Ч.* Автобиография / Пер. проф. Соболь С. М.:Изд. Академии Наук СССР. 1957. С. 253.
5. *Космодемьянский А.А.* Константин Эдуардович Циолковский. 1857–1935. / 2-е изд., перераб. и доп. М.: Наука, 1987. С. 304.
6. *Ломброзо Ч.* Гениальность и помешательство. «РИПОЛ классик». М., 2009. С. 400.
7. *Лоу Дж.* Говорит Билл Гейтс. АСТ, Транзиткнига. М., 2004. С. 91.
8. *Миракян А.И.* Константность и полифункциональность восприятия. М., 1992. С. 221.
9. *Нагдян Р.М.* Принцип симетрии в обучении. Ер.:Айастан. 2006. С. 96.
10. *Нечаев С.Ю.* Удивительные открытия. О чем умолчали учебники. М.: Изд-во «ЭНАС», 2012. С. 221.
11. *Ремшмидт Х.* Аутизм. Клинические проявления, причины и лечение. Перевод с немецкого д-ра мед.наук профессора Т.Н.Дмитриевой. М.: «Медицина», 2003. С.120.
12. *Сойфер В.* Чарлз Дарвин и эволюционная теория // ж. «НАУКА из первых рук», № 4 (34). Чарлз Дарвин – великий популяризатор эволюционной идеи. М.: Изд-во ООО «Инфолио» СО РАН, 2010.
13. *Nasar S.* A Beautiful Mind: The Life of Mathematical Genius and Nobel Laureate John Nash. Publisher: Simon & Schuster. New York, 2001. P. 461.

Ինտերնետ կայքէջեր՝

14. http://i-business.ru/blogs/24931
15. http: //www.telegraph.co.uk/health/healthnews/4680971/Charles-Darwin-had-autism-leading-psychiatrist-claims.html
16. http://www.molomo.ru/inquiry/famous_crazy.html

ОГРАНИЧЕНИЯ КЛАССИЧЕСКОЙ (ДЕКАРТОВСКОЙ) ПАРАДИГМЫ В СОВРЕМЕННОЙ СИСТЕМЕ ОБРАЗОВАНИЯ

Г.С. Есаян

АННОТАЦИЯ

В статье представлены производные от классической (декартовской) парадигмы ограничения механистического образа мышления, проявляющиеся в современной системе образования. В статье представлены также пути выхода из этих ограничений.

Ключевые слова: парадигма, механистический образ мышления, система образования.

LIMITATIONS OF CLASSICAL (DEKARTIAN) PARADIGM IN THE EXISTING EDUCATIONAL SYSTEM

G. Yesayan

SUMMARY

The article discusses the limitations of mechanistic thinking which result from the Dekartian paradigm. In this paper the ways out of these limitations are proposed.

Keywords: paradigm, mechanistic thinking, educational system.

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԸ ՀՐԱՆՏ ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻ ՀՐԱՊԱՐԱԿԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Ժ.Վ. Ռոստոմյան

ԱՄՓՈՓՈՒՄ

Հրանտ Մաթևոսյանը հաճախ է անդրադարձել այս կամ այն գրողին, նրա ստեղծագործությանը, իսկ ավելի շատ գրել ու խոսել է Հովհ. Թումանյանի մասին: Հոդվածի հեղինակը անդրադառնում ու վերլուծում է Թումանյան – Մաթրոսյան գրական կապերը, Մաթևոսյանի հայացքը Թումանյանի կյանքին ու գործունեությանը որպես գրողի, մտավորականի, քաղաքացու, պտական գործչի:

Հիմնաբառեր՝ Թումանյանի ստեղծագործությունը, Թումանյանի ժամանակի մեջ, բանաստեղծը, քաղաքացին, պետական գործիչը:

Հայ գրողները Թումանյանի ստեղծագործությանը, նրա տաղանդին հաճախ են անդրադարձել: Գրել և գրում են թե՛ իր ժամանակակիցները, թե՛ նրանից հետո ապրող գրողներն ու գրականագետները: Եվ որքան հեռանում է Թումանյանի ժամանակաշրջանը, այնքան մեծանում ու բարձրանում է գրողը, ընդարձակվում ու խորանում են նրա գրականության սահմանները: Ժամանակի հեռվից իսկան երևում է ամբողջովին՝ վեհությամբ, խորքով, հանճարով:

Թումանյանի մարդկային նկարագրի, նրա՝ հայ կյանքի հանրագիտարանային իմացության, նրա ողջ ստեղծագործության հետ զարմանալի կապ ու կապվածություն է ունեցել մեր երկրորդ մեծանուն լոռեցին՝ մեր ժամանակի լավագույն արձակագիր Հրանտ Մաթևոսյանը:

Մաթևոսյանի մշտատես ու մշտախույզ հայացքի ներքո Թումանյան գրողը, Թումանյան մարդը, Թումանյան ազգային-հասարակական գործիչը դիտարկվում, ուսումնասիրվում նապա գեղարվեստական մի ամբողջություն է դառնում, և դա ոչ միայն գրողի, արվեստագետի հայացք է, այլ նաև գրաքննադատի արժևորող գնահատական, իր մեծ նախորդի նկատմամբ ունեցած հպարտ երախտագիտություն: Ահա ինչու Հ. Մաթևոսյանի բոլոր գեղարվեստական անդրադարձերն անհնար է մի հոդվածով ամբողջացնելը: Մանավանդ որ հոդվածը, որքան էլ այն ծավալուն և ընդգրկուն լինի, այդ խնդիրը լուծել պարզապես չի կարող: Նման մտածումը թողնելով ավելի պատեհ ժամանակի և հնարավորության՝ այսօր կխոսենք Թումանյանի մասին նրան

նվիրված և վերաբերող Հրանտ Մաթևոսյանի հրապարակախոսական հոդվածների, ելույթների միջոցով:

Եվ այսպես. ո՞վ էր Թումանյանը՝ ըստ Մաթևոսյանի և Մաթևոսյանի համար:

Սկսենք երկրորդից: Մարդիկ ճանաչողության ու կյանքի դպրոցն անցնում են յուրաքանչյուրը յուրովի: Ազգային և համամարդկային արժեքների, մշակույթի, գիտության, քաղաքակրթության, փորձի և իմաստնության ընկալման ու ամբարման խիստ ինքնատիպ ճանապարհ է անցնում յուրաքանչյուրը, իսկ մեծերինը՝ ամբարելուց զատ, այն նաև՝ նոր որակներով հարստացված, մարդկությանը վերադարձնելն է: Եվ այս տեսանկյունից չափազանց հետաքրքիր իմացական, գեղագիտական ընկալումների հարաբերություններ են հաստատված Հովհաննես Թումանյանի և Հրանտ Մաթևոսյանի գրականություններում:

Առհասարակ Մաթևոսյանը ինչի մասին էլ խոսում է, վերլուծում, այդ ամենի համար ունի իր չափանիշները, ճշմարտության իր կողմնացույցերը: Եվ այդ չափանիշներից, անաչառ կողմնացույցերից մեկն էլ Հովհաննես Թումանյանն է:

Հրանտ Մաթևոսյանի՝ Թումանյանի նկատմամբ եղած մեծ սերն է, որ արտահայտվում է իր գրական կերպարների՝ Թումանյանի արվեստի սիրահարների, մեծ լոռեցու մարդկային նկարագրով հիացող-հպարտացողների միջոցով՝ դրանով միաժամանակ հաստատելով այն իրողությունը, որ իրոք, Թումանյանը համաժողովրդական, բոլորին ընկալելի ու սիրելի գրող է:

Եվ որքան մեծ է կյանքի, տարբեր երևույթների թումանյանական ընդգրկումն ու գեղարվեստական մեկնաբանությունը, նույնքան ինքնատիպ է Մաթևոսյանի՝ քսաներորդ դարակեսի հայ մարդու, նրա կյանքի ու հոգեբանության ընկալումն ու դրանց կերպավորումը թե՛ գեղարվեստական արձակում և թե՛ հատկապես հրապարակախոսության մեջ: Եվ գրեթե միշտ՝ Թումանյանի գրականության ու ապրած ժամանակի հետ համեմատության ու զուգահեռների, տարբերությունների ու զուգորդումների ամպլիտուդում:

Այսպես. խոսելով հայ մարդու մտածողության և հոգեբանության գրեթե մեկ հարյուրամյակում կրած փոփոխության մասին՝ Մաթևոսյանը մի շատ դիպուկ օրինակ է բերում Թումանյանի ոչ այնքան հայտնի մի պատմվածքից՝ «Սովի ժամանակից»:

«Լոռեցի գյուղացին, գրողի ծննդավայրի անունով ասենք՝ դսեղեցին, աշխատում է և տեսնում է միայն իր հողը և ծոծրակով զգում է իր գլխավերևի չոր երկինքը, որ անձրև չի խոստանում: Նա աղոթում է իր երկնքին և անդավաճան սիրով գուրգուրում է իր հողը: Բայց շատ վատ մի բան է կատարվում. հողն ու երկինքն են դավաճանում նրան: Եղածն իրոք շատ վատ է, քանի որ այդ դսեղեցին իր հույսը կապում էր միայն իր քթի տակի հողի հետ: Իսկ

ավելի վատն այն է, որ երաշտը խփել է նաև ձորի մյուս կողմի գյուղերում, որոնց հետ, այո՛, իրենից թաքուն հույսեր էր կապել դսեղեցին: Դա դեռ աշխարհի վերջը չէ, քանի որ աշխարհը մեծ է և հասնում է Արագածի տակի Շիրակի դաշտերը, որոնք բերքառատ են, որոնք, դսեղեցու կարծիքով, երբեք ենթակա չեն երաշտի իշխանությանը, քանի որ ենթակա են Արագած բարի լեռան խոնավ հովերին: Եվ դսեղեցին, ինքն իրենից ամաչելով, ինքն իրենից շատ ամաչելով, քանի որ շիրակեցին հո մեղավոր չէ Դսեղի երաշտի համար, ձի է վերցնում և ճանապարհ ընկնում դեպի իր իմացած մեծ աշխարհի ծայրը: Բայց կատարվում է սարսափելին. կես ճանապարհին նա հանդիպում է Շիրակի դաշտից Դսեղ փախչող սովյալների»[1]:

Պատմվածքը վերջանում է նրանով, որ մեծ աշխարհի հեռու քաղաքներից ֆուրգոններով հաց է գալիս հայ սովյալների համար:

Նրանք չեն ուզում հավատալ լրաբերին, քանի որ իրենց աշխարհը սահմանափակվում էր Դսեղից մինչև Շիրակ տարածքով, և նրանք իրենք էին պատասխանատու ամեն ինչի, այդ թվում նաև` երաշտի, հեղեղումների, սովի համար: Սա 19-րդ դարի վերջերին և 20-րդի սկզբներին էր:

Քսաներորդ դարում այս մտածողությունը զգալի փոփոխություն կրեց: Հայի աշխարհը մեծացավ, սկզբում դարձավ նախկին ԽՍՀՄ-ի չափով, իսկ ահա Սպիտակի երկրաշարժից հետո այն ընդգրկեց ողջ աշխարհը: Բայց այս մեծ աշխարհի զգացողությունը դրականի հետ հայ մարդու հոգեբանության վրա ազդեց նաև բացասաբար: Ո՞րն է այդ բացասականը: «Բանն այն է, որ միասնական մեծ հայրենիքի ապահովիչ զգացողությունը հայտնաբերեց իր նաև շատ վատ մյուս երեսը, որ է անպատասխանատվություն իր սեփական ոտքի տակի հողի համար: Գյուղացին կորցրեց իր տեղամասի զգացողությունը, խնամքոտ սերը անմիջապես այն հողի նկատմամբ, որի վրա ինքն ապրում է»[2]:

Այսպես է մարդը օտարվում հողից, իր ծննդավայրից, հայրենիքից: «Երկրի քաղաքակրթմամբ` հողի հին կախյալ սերը պետք է վերաճեր, որպես սովետական քաղաքակրթության անկապտելի մասի, բնության պաշտամունքի, այնինչ դարձավ նախ հոխորտանք բնության նկատմամբ, ապա կերպափոխվեց ակնհայտ թշնամանքի` որպես հետամնաց երկրի բռնի քաղաքակրթեցման պարտադիր հավելուկ»[3]:

Գրականագիտության մեջ հաճախ է հնչում այն միտքը, թե Հրանտ Մաթևոսյանի վերաբերմունքը երբեմն, եթե չասենք խիստ է, ապա մեղմ էլ չէ

[1] *Մաթևոսյան Հ.* «Ստիլիզացիայի մասին», Սպիտակ թղթի առջև, Եր., 2004, էջ 46:

[2] Նույն գրքում, էջ 47:

[3] Նույն գրքում էջ 48:

հայ կնոջը կերպավորելիս (հատկապես նկատի է ունեցվում Աղունիկեր պարը):Սակայն գրողի մտածողությունը կամ նրա վերաբերմունքը նման գնահատական ով արժևորելը, կարելի է ասել, այնքան էլ արդարացիչ է: Բան նայն է, որ Մաթևոսյանը յուրաքանչյուր կերպարում խիստ որոշակի բնավորություն, անհատականացված բնավորություն է տեսնում, իսկ ահա հայ կնոջ ազգային, ընդհանրակ անհոգեբանության, նրա էությունը նկալելու գնահատականներում արդեն նկատում ենք գրողի կարծիքի, մոտեցումների մինոր, հետաքրքրական ու ինքնատիպ դրսևորում: Ասվածը հաստատենք դարձյալ դիմելով Թումանյան-Մաթևոսյան զուգորդմանը:

Հիշենք Թումանյանի «Գրազը» պատմվածքը, որումկամորկերպարը: Պատմվածքը քաջ ու անվախհովիվ Չատիի և նրա ընկերների մասին է, որոնք սպանել ենք ուրդավազակին, փրկել իրենց կյանքն ու ոչխարի հոտը և, վերադառնալով իրենց վրանը, այդ թեմայով խոսք ու զրույց են անում: «Չատնի մայրը սոված հովիվների համար կրակի վրա կերակուր էր շինում ու հետն էլ իրեն-իրեն դունդունում.

«Ատղա, նաէլմերկունենա՜...

Ատղահիմինրամերըճամփակպահի՜...

Ատղա, կասի, տղեսետչեկավ...»[4]:

Հիմա տեսնենք՝ ինչ է ասում Մաթևոսյանը Բեյրութի «Կանչ»-ի թղթակցին 1979թ.-ին(ուշադրություն դարձրե՛ք՝ 1979թ.) տված հարցազրույցում:

«Ի՞նչ եմ անելու: Ի՞նչ եմ ուզում: Կինս է պատմել, բայց կարծես ես իմ աչքերով հազար անգամ եմ տեսել: Երեւանում Շիլաչի թաղամաս ունենք: Եղեռնից յետոյ եկել այդտեղ, այդ Շիլաչի թաղում ծուարել էր մեր էն ջախջախուած երամի մնացորդացը: Դարձեալ սէրեր էին եղել. դարձեալ ամուսնութիւններ էին եղել, մանչ զաւակներ էին ծնուել ճիշդ ժամանակին, որպէսզի 1941-ին Գերմանիոյ դէմ մղուած պատերազմի ատեն, իյնային ռազմաճակատում: Հիմա, կաւէ, քարէ այդ տներն են, Երեւանի ամառուայ թանձր շոգը. եւ գերմանացի ռազմագերիները՝ էսօր Նար-Դոսի կոչուող փողոցը բացում, սալարկում են: Մի մայր, մի պառաւ անընդհատ կանգնած է էդ ռազմագերիների մօտ եւ անընդհատ լաց է լինում նրանց գերութեան վրայ, թէկուզ եւ հենց նրանց մէջ է իր որդու դահիճը: Ասում է, ամէն անգամ փոստատարը «սեւ թղթով» թաղ էր մտնում եւ Շիլաչի շոգ, կաւոտ թաղի վրայ կախւում էր ծղրտոցը, յետո լռութիւն էր իջնում եւ ռազմագերիները պապանձւում ու դադարում էին աշխատելուց: Նրանք էին պատերազմը սկսել, մեղաւորը նրանք էին, բայց զգո՞ւմ էին այդ մեղաւորութիւնը թաղի պոլսահայ մայրերը,

[4] *Թումանյան Հովհ.* Ընտիր երկեր, Եր., 1978, էջ 292:

չէ՛ին զգում, այդ չի կարեւորը: Ասում է, իրենց ունեցածից նրանք միշտ ճաշ էին եփում գերիների համար, նոր «սեւ թուղթ» ստանալու օրը միայն նրանք խռովում ու ճաշ չէին տալիս գերմանացիներին: Նրանց վրէժը միայն դա էր: Իսկ մայրերի սիրոյ չափը միայն ես ու դու՝ հայերս գիտենք: Մեր անկրկնելի, մեր մեծ, մեր մարդասեր, մեր անոխակալ, մեր Աստծո չափ բարի կերպարը եթէ ես կարողանամ գոնէ մի քիչ սեւեռել գրականութեան մէջ, գրողական աշխատանքով իմ զբաղումը ես մի քիչ արդարացուած կը համարեմ»[5]:

Հրանտ Մաթևոսյանի հրապարակախոսության մեջ այսպիսի մտքերն ու եզրահանգումները եզակի չեն: Հայ մարդու ու մարդկայինի, հոգեբանության ու վարքաբանության իր դիտարկումները գուցե թե այնքան էլ համընդհանուր ու համընդգրկուն չլինեին, եթե նա չունենար ժամանակաշրջանների, դրանցում ապրող մարդկանց հոգեբանության ու վարքաբանությանմասին լիարժեք տեղեկություններ: Իսկ այդ տեղեկությունների, այդ իրողությունների գիտական, պատմական, գեղարվեստական ներկայացնողներից Հրանտ Մաթևոսյանի համար առաջինը Թումանյանն է և ապա՝ նրա ժամանակաշրջանի մյուս մեծ արվեստագետները, մտածողները: Եվ սա պատահական չէ: Չէ՞ որ այդ դարաշրջանի ուրիշ ոչ մի գրող աշխարհին ու մարդկանց չի նայել այնպես վեհորեն ներող, այնպես արդար ու անաչառ, ինչպես Թումանյանը: Իսկ թե ինչու Մաթևոսյանը հենց Թումանյանին պետք է դիմեր, պատասխանը շատ պարզ է. Մաթևոսյանը խորապես զգացել է իր ու Թումանյանի՝ կյանքի ու մարդկանց նկատմամբ ունեցած աշխարհայացքային նմանությունը: Համեմատենք.

Հովհաննես Թումանյան՝ «Ձեր սրտերը մաքուր պահեք և ամենալավ ու բարի զգացմունքով լիքը, աշխարքին ու մարդուն նայեցեք բարի սրտով ու պայծառ հայացքով: Եվ արդեն ստեղծագործական շնորհքի, բանաստեղծության բնությունն այդպես է իր ծնունդից»[6]:

Հրանտ Մաթևոսյան՝«Ասենք, յուրաքանչյուր մարդու մեջ Աստված կա, ու յուրաքանչյուրի Աստվածն ամենախոր հարգանքի է արժանի: Կողքինիդ մեջ փնտրի՛ր Աստծուն»[7]:

Ահա մոտեցումների ու գրողական հավատամքի մի ընդհանրություն, որը ելակետ ու պատճառ է դառնում, որ մաթևոսյանական գրականությունն իր ընթերցողի հետ խոսի մի լեզվով, ուր գեղագիտական աշխարհընկալումը, կյանքի փիլիսոփայությունը այնպես ներդաշնակորեն զուգահեռվեն, համե-

[5] *Մաթևոսյան Հ.* Ես ես եմ, Եր., 2005, «Կանչ» (Բեյրութ), № 14, 21, 28.04. 1979 (Մ. Վիգէնեան), էջ 189:

[6] *Մաթևոսյան Հ.* Սպիտակ թղթի առջև, Եր., 2004, էջ 23:

[7] Նույն գրքում, էջ 52:

մատվեն, ունենան նմանություններ, բայց նաև ակնհայտ տարբերություններ իր հանճարեղ նախորդի՝ Թումանյանի գրականությունից: Բայց նաև աշխարհին նորովի նայելու, նոր ըմբռնումներով առաջնորդվելու գրողի քաղաքական ու քաղաքացիական կեցվածքով:

«Խիղճ անվանյալ աստծու լույսը» դարասկզբին հայ-թաթարական ընդհարումների ժամանակ Թումանյանին խաղաղության դրոշ պարզած ուղարկեց շրջելու գյուղից գյուղ և սարից սար: Եվ ուր ոտք է դրել՝ պատյանից դաշույն, բերանից չար խոսք ու որևէ դարանից գնդակ չի թռել, թշնամական դիրքերի վրա թևածել է իր խոսքը.«Եթե ուժեղ ենք ու կռվում ենք՝ ուրեմն անխիղճ ենք, եթե թույլ ենք ու կռվում ենք՝ ուրեմն անխելք ենք»:[8]

Դարավերջին հայ մարդու կենսափիլիսոփայության այս դրույթը Հրանտ Մաթևոսյանը փորձում է փոքր-ինչ ձևափոխել. «Ասում ես խիղճ, բայց խիղճը գիտե՞ս երբ է գեղեցիկ-երբ գազանի մեջ է: Քոնը խիղճ չի, խեղճություն է»[9]: Սա աշխարհի հզորների դասն իմացող գրողի եզրահանգումն էր: Բայց հայ մարդու հոգեկան կերտվածքում պատմության դասերը քիչ փոփոխություններ են առաջացրել. խղճի ու խեղճության նման ըմբռնումը դեռևս չի դարձել ազգային մտածողություն և դեռ հարց է՝ Քրիստոսից առաջ ու հետո քրիստոնեաբար ապրած ազգը արդյոք երբևէայդպիսի մտածողության կրողը կդառնա՞: Անհատները՝ գուցե, բայց ազգը... Եվ հապացույց ասվածի՝ քսաներորդ դարավերջի գրողը չի կարողանում չարձանագրել. «Ի՛նչ կ'ուզէք համարէք, բայց ես վստահ եմ, որ եթէ երբեւէՄիաւորուած ազգերի որեւէ կազմակերպութիւն հարկ համարի համաշխարհային խղճի սէմպոլ կերպար ստեղծել, այդ կերպարը, սէմպոլը պիտի ստեղծի հա՛յ մարդու, հայ գիւղացու կերպարով եւ պետք է կանգնեցուի հայոց հողում»[10]:

Թումանյանը գիտեր նաև մի այլ ճշմարտություն.

«Բերանն արնոտ Մարդակերը էն անբան
Հազար դարում հազիվ դառավ Մարդասպան:
Ձեռքերն արնոտ գնում է նա դեռ կամկար,
Ու հեռու է մինչև Մարդը իր ճամփան»[11]:
1918թ., նոյեմբեր:

Այս քառյակի հաստատումն է Հրանտ Մաթևոսյանի դարավերջին՝ 1994 թվականին, «Արցախ» հանդեսում տպագրած հոդվածը. «Թուրքերի բանա-

---

[8] *Մաթևոսյան Հ.* Սպիտակ թղթի առջև, Եր., 2004, էջ.78:

[9] *Մաթևոսյան Հ.* Երկեր, երկու հատորով, 2-րդ հատոր, Եր.,1985, էջ 242:

[10] *Մաթևոսյան Հ.* Ես ես եմ, Ե., 2005, «Կանչ» (Բեյրութ), №14, 21, 28.04. 1979 (Մ. Վիզէնեան), էջ 190:

[11] *Թումանյան Հովհ.*, Ընտիր երկեր, Եր., 1978, էջ 70:

ստեղծը երդվում էր կտրել հայի իմ ձեռքը, եթե Ղարաբաղին մեկնեմ: Երդվում է, և իր ժողովուրդը նրան ցեղապետ է մեծարում, և իր կառավարությունը նրան զարդարում է շքանշաններով: Եվ դա սահմռկելի է, որովհետև և՛ նա, և՛ նրանք լավ գիտեն, որ Ղարաբաղն ինքնիշխան ժողովրդի հայրենիք է, այնինչ՝ խոսում են որպես անտեր-անլեզու տարածքների, որպես տիրամեռ տան մասին»[12]:

Իրոք, որ «…հեռու է մինչև Մարդը իր ճամփան»:

Այժմ դառնանք մեր առաջին հարցին. ո՞վ էր Թումանյանը՝ ըստ Մաթևոսյանի:

1984թ. «Սովետսկայա կուլտուրա» թերթում «Իմ Ծմակուտը մեծ աշխարհի մի մասն է» վերնագրով հարցազրույցում թղթակից Իսկոլդսկայան հարցնում է.

-Գրականության մեջ ո՞ւմ եք համարում Ձեզ ուսուցիչ: Ժամանակակիցներից ո՞վ է Ձեզ ավելի մոտ:

-Առաջին լուրջ գիրքը, որ կարդացել եմ, հավանաբար Շոլոխովի «Խաղաղ Դոնն» էր, հետո սիրահարվեցի Չարենցին ու Բակունցին: Նրանք այդպես էլ մնացին ինձ հետ: Չարենցն իբրև բանաստեղծական վարպետության ու մտքի օրինակ: Բակունցը հիացնում է ժողովրդի կյանքի իմացությամբ: Ամենաառաջին կարդացածս տողերից ինձ հետ է Հովհաննես Թումանյանը՝ ինչպես գետակը հոսում ու աննկատելի ոռոգում է հողը: Այդ հիմքից են աճել սերը, հիացմունքը հայերեն բառի, հայոց լեզվի նկատմամբ: Կարծում եմ՝ հենց Թումանյանն է ինձ նախապատրաստել իսկական գրականության ընկալմանը: Այն ամենը, ինչին նա դիպել է, դարձել է փաստ, հայ մշակույթի ոգեղենության մաս, այդ թվում՝ Պուշկինից կատարած թարգմանությունները: Նա իբրև անհատականություն էլ բարոյականության բարձրագույն օրինակ է: Ինչ ասես արժի խաղաղարարի նրա առաքելությունը, երբ սպիտակ դրոշով անցավ ամբողջ Հյուսիսային Հայաստանով դեպի ադրբեջանական գյուղեր, որ կանխի արյունալի ընդհարումները...[13]

Հրանտ Մաթևոսյանը Հովհաննես Թումանյանի գրականության մասին հանդես է եկել նաև առանձին հոդվածներով՝ «Ամենայն հայոց Թումանյանը», «Կատարելություն» (գրվել է 2001 թվականին Հովհ. Թումանյանի «Ընտրանին» իր իսկ նախաձեռնությամբ կազմելու և հրատարակելու առիթով), ինչպես նաև «Գիրք Թումանյանի մասին» գրախոսությունը, որը տպագրվել է Լևոն Հախվերդյանի՝ 1996թվականին լույս տեսած «Թումանյանի աշխարհը» գրքի կապակցությամբ «Հայրենիքի ձայն» թերթում 1967 թվականին:

[12] *Մաթևոսյան Հ.* Սպիտակթրթիառջև, Եր., 2004, էջ 299:

[13] *Մաթևոսյան Հ.* Ես ես եմ, Եր., 2005, էջ 242 –243:

Մաթևոսյան գրողը համամիտ է Հախվերդյան գիտնականի հայտնած կարծիքին, որ է. «Թումանյանի գրականությունը մեր ժողովրդի բախտավորությունն է: Պետական գործիչ՝ պետականություն չունեցող ժողովրդի մեջ: Հայրենանվեր կյանք մի հայրենիքի, որ շատ թշնամիներ ուներ ու քիչ բարեկամներ: Նրա ամբողջ կյանքը՝ ստեղծագործական ու քաղաքացիական սխրագործություն: Թումանյանը ժողովրդի զոհասեղանին դրեց և՛ կյանքը, և՛ հանճարը»:[14] Եվ ահա այս մտքի ասես շարունակությունն է այն, որ դեռևս երեսնամյա Մաթևոսյանը իր մեծ նախորդին այսպես է բնութագրում. «Գրականագետ Լևոն Հախվերդյանը մեզ համար գրել է մենագրություններից դժվարագույնը. Թումանյանը մեր մանկությունն է, իսկ մանկության տարիներին սովորած բառերը չեն ստուգաբանվում: Հախվերդյանն ահա ստուգաբանել է հայացքի ու ընկալման զարմանալի թարմությամբ: Հախվերդյանի գիրքը կարդալուց հետո Թումանյանի տողերը, վաղուց ծանոթ տողերը դարձյալ դիմադրում են՝ ինչպես առաջին ընթերցման ժամանակ, և դրանց միջով առաջանում ես դժվարությամբ»[15]:

Մի այլ առիթով, դարձյալ անդրադառնալով պետականության և մշակույթի խնդիրներին, Մաթևոսյանը նկատում է.

«...Իսկապես ժամանակակիցներ, արյունակիցներ, գաղափարակիցներ են դառնում՝ հայոց համար հավերժական մեկ խնդրում. ազգի փրկությունը պետականության մեջ են տեսնում: Այդ հիմնահարցն է նրանց մեծացնում մինչև գիգանտություն՝ Խորենացուց մինչև Աբովյան,Թումանյան, Չարենց: Այդ մի հարցն է բոլոր չափումների մեջ դառնում նրանց թուլությունը, հայ գրականության թուլությունը: ... Պատ, որին մշտապես եկել դեմ են առել մեր մեծ այրերը: Այսինքն՝ միաժամանակ նրանք անում էին այն, ինչ ռուս իրականությունը, ռուս կյանքըտարաբաշխել էր իր երկու խոշոր մեծությունների՝ Պետրոս Մեծի և Մեծն Պուշկինի միջև: Մշակութային գիգանտացման համար ռուսական կյանքն ընտրել էրՊուշկինին, իսկ պետությունը առաջ մղելու խնդիրը տվել էր Պետրոսին: Այս իմաստով Թումանյանի մեջ Պետրոսը ու Պուշկինը միասին են՝ և՛ միմյանց թուլացնում են, և՛ միմյանց զորացնում են: Իմ Թումանյանը թիկունքում Պետրոս Մեծ չունենալով, ազգային հարցը կայսերաբար ստանձնելով՝ դարձել է իր գրականության էությունը ու թուլությունը»[16]:

Միանգամայն դիպուկ, արդար նկատված և գիտական բնութագրում:

Առհասարակ Հրանտ Մաթևոսյանի հրապարակախոսությունն իր արձակի պես փոքր ծավալում հզոր մտքերի, խորը զգացմունքների խտացում է:

[14] *Մաթևոսյան Հ.* Սպիտակ թղթի առջև, Եր., 2004, էջ 232:

[15] Նույն տեղում:

[16] *Մաթևոսյան Հ.* Ես ես եմ, «Ինքդ պետք է որոշես՝ Իշխանն ես, թե Ավետիքը», էջ 110:

Եվ նրա ոչ ծավալուն, ոչ սեթևեթ հոդվածներն ավելի տարողունակ են, ամեն ինչ ասող: Սակայն մեծ գրողներին բնորոշ է մի այլ հատկանիշ ևս. տարբեր ժամանակներում, տարբեր առիթներով նույն մարդու, գրողի մասին տալ տարբեր բնութագրումներ, որոնք բոլորն էլ ճշմարիտ են իրենց բովանդակությամբ, արդարացի, միայն տեսանկյունն է փոխված: Դարձյալ մեջբերում, այս անգամ Մաթևոսյանի «Կատարելություն» հոդվածից, որը նա գրել է 2001թվականին Հովհաննես Թումանյանի ստեղծագործությունների՝ իր պատրաստած «Ընտրանու» հրատարակության կապակցությամբ:

«Թումանյանով՝ մենք կանք: Առանց Թումանյանի՝ մենք չկանք: Տարազգի-տարալեզու գրականության մեծ աշխարհ մենք մտնում ենք Թումանյանով՝ և այդ աշխարհին այլևս մեր հայրենի եզերքն է: Առանց Թումանյանի՝ այդ եզերքը մերը չէ, այլև մենք այդ աշխարհի առջև կանգնած ենք աղքատ ազգականի մեր խեղճ ու ցածր թշնամանքով»[17]:

Այս հոդվածը կարելի է սկզբից մինչև վերջ մեջբերել հասկանալու համար Թումանյան-Մաթևոսյան երկու տարբեր ժամանակաշրջանների հայ գրողների հոգևորհարազատությունն ու կապվածությունը:Կապվածություն, որն ամենևին էլ չի նշանակում առաջինի ազդեցություն երկրորդի վրա և կամ երկրորդի գրողական տաղանդի պակաս, նվազ գոյություն: Այս կապվածությունը գալիս է հաստատելու, որ գրական հանճարեղ հայրը՝ անունը Հովհաննես Թումանյան, ունենալու է իր հանճարեղ որդին՝ անունը Հրանտ Մաթևոսյան, որը նույնպես մեծ է ու որքան իր ժամանակակիցներից հեռանա, այնքան ավելի բարձր ու խորքով կերևա: «Անցյալի և ապագայի, անձնականի և ընդհանրականի, ազգայինի և համամարդկայինի, ժամանակավորի և հավերժականի մեկ և ընդհանուր սահմանին կանգնած՝ նա (իմա՝ Թումանյանը) ժամանակավորից պատմականություն է պահանջում և հավերժականից ներկայություն, համամարդկայինից ստույգ հայեցիություն է պահանջում և հայեցիից համամարդկայնություն. մշակույթները եթե համամարդկային չեն՝ մշակույթ չեն և չեն կարող ու չպետք է ճամփորդեն հայրենիքների ու ժամանակների միջով» [18]:

Գիտական այս ստույգ ձևակերպումը, որով Մաթևոսյանը Թումանյանի արվեստն է բանաձևում, կարելի է ասել նաև իր մասին: Հոդվածն ամփոփելուց առաջ Հովհաննես Թումանյանի մասին ասված որպես ամենադիպուկ գնահատական մեջբերենք Հրանտ Մաթևոսյանի մի միտքը, որի տակ, կարծում ենք, առանց վարանելու կստորագրի Թումանյանից հետո ապրած, ապ-

[17] *Մաթևոսյան Հ.* Սպիտակ թղթի առջև, «Կատարելություն»,Եր., 2004, էջ 82:
[18]Նույն տեղում:

րող ամեն հայ՝ անկախ կրթությունից, սեռից, ունեցած գրական վաստակից, գիտական նվաճումներից.

«Այդ ամբողջը նրա աշխարհն է՝ Թումանյանի թագավորությունը, և մենք այդ թագավորության հպատակներն ենք, մենք՝ իրենից հետո եկածներս, նրանք՝ իրենից առաջ ապրած-անցածները,...

Եվ ուրիշ ոչ մի աշխարհ՝ ոչ գրի ու ոչ էլ իրական՝ մեր երեխային, մեր մարդուն, ինքներս մեզ այնքան վստահ չենք դրկում ճամփորդության, ինչքան Թումանյանի թագավորություն, և ուրիշ ոչ մի աշխարհ, ոչ ոք ու ոչինչ այնքան վաղածանոթ ու մտերիմ չէ, ինչքան Թումանյանի աշխարհում. մեր ծնունդից առաջ ասես այնտեղ ենք ապրել, մեր այս երկիր ասես այնտեղից ենք եկել»[19]:

Ամփոփենք: Հովհաննես Թումանյանի ստեղծագործությունը Հրանտ Մաթևոսյանի հրապարակախոսության մեջ ստացել է իրապես գեղարվեստական, անաչառ ու անսեթևեթ մեկնաբանություններ, որոնք փաստարկված են գիտական ճշգրտությամբ:

ОВАННЕС ТУМАНЯН В ПУБЛИЦИСТИКЕ ГРАНТА МАТЕВОСЯНА

Ж.В. Ростомян

АННОТАЦИЯ

Известный современный писатель Грант Матевосян в своих статьях часто обращался к таланту и творчеству поэта Ованеса Туманяна, давая ему своеобразную и справедливую оценку как поэта, так гражданина, как великого гуманиста и патриота своей Родины.

В статье статьи анализируется творчество двух писателей, указываются различия и сходства в их творчестве, а также отношение этих писателей к государству и государственности.

Ключевые слова: творчество Туманяна, Туманян и современность, поэт, гражданин, государственный деятель.

[19]Նույն տեղում, էջ 84:

HOVHANNES TUMANYAN AND HRANT MATEVOSYAN'S SOCIOPOLITICAL JOURNALISM

J. Rostomyan

SUMMARY

The great contemporary writer Hrant Matevosyan often referred to the works of Armenian writers but mainly to Hovhannes Tumanyan whose talent and creativity mostly inspired him. The author has made an attempt to investigate the impact of Tumanyan on Matevosyan's literarty works. The article has brought out differences and similarities, as well as the attitude of these writers to the state and statehood.

Keywords: Tumanyan's work, Tumanyan in time, the poet, citizen, statesman.

ИЗ УНИВЕРСИТЕТСКОЙ ЖИЗНИ

27-го марта в Российско-Армянском (Славянском) университете состоялась конференция на тему: “Национальная культура и литература на рубеже тысячелетий”. Мероприятие было организовано по инициативе кафедр армянского языка и литературы и мировой литературы и культуры Института гуманитарных наук РАУ.

В конференции приняли участие ученые, сотрудники различных кафедр Российско-Армянского университета, а также почетные гости: кандидат филологических наук, сотрудник Литературного института им. Горького Бурастан Зулумян и профессор Оксфордского университета Тео ван Линт. Участники обсуждали перспективы развития национальных культур в новых условиях.

«Сегодня мы видим, что опасности, возникшие во второй половине двадцатого века, препятствуют развитию национальных культур. Я считаю, что без них мировая культура исчезнет», – подчеркнул заведующий кафедрой армянского языка и литературы РАУ А.К. Егизарян.

***

В Калининграде 27–30 апреля состоялся Международный научно-общественный форум «70-летие Великой Победы: исторические уроки прошлого и политические вызовы современности». Армению на данном научно-общественном форуме представили заведующий кафедрой политологии РАУ О.Л. Саркисян и заведующий кафедрой политических институтов и процессов ЕГУ Г.М. Керян.

В своем докладе О.Л. Саркисян представил участие армянского народа во Второй мировой войне. В ходе выступления Оганес Саркисян обосновал также идею о значении осмысления войны и победы в контексте современных глобализационных и регионально-интеграционных процессов.

Международный научно-общественный форум был организована Российским обществом политологов, Балтийским федеральным университетом имени Иммануила Канта и правительством Калининградской области. Конференции прошли в трех секциях: «Великая Отечественная война в исторической памяти России и мира», «Война и национализм: солидарное противодействие угрозе неофашизма в современном мире», «Россия и мир перед вызовами и угрозами XX–XXI веков». В работах форума приняли участие ученые и общественные деятели из более чем двадцати стран мира.

***

4–6 мая в Российско-Армянском (Славянском) университете состоялась студенческая годичная научная конференция, посвященная 70-летию Победы в Великой Отечественной войне. В конференции приняли участие как студенты и

преподаватели РАУ, так и магистранты и аспиранты Гюмрийского филиала Национального политехнического университета Армении, Государственного инженерного университета Армении, Арцахского государственного университета, Московского государственного педагогического университета и других вузов России и Армении.

Серию пленарных докладов открыл студент III курса РАУ Андраник Оганесян с докладом «История и память». В ходе своего выступления докладчик обратил внимание присутствующих на вклад армянского народа: *«На момент начала войны в советские войска ушло около полтора миллиона армян. Наша нация, как и другие нации Советского Союза, понесла большие потери в Великой Отечественной войне. Армяне служили в пехоте, бронетанковых подразделениях, авиации, артиллерии. Звание Героя Советского Союза было присвоено ста солдатам и офицерам, тридцати восьми – посмертно. 27 армян стали кавалерами Ордена Славы всех трех степеней. Армянский народ дал советской армии маршала Ивана Баграмяна, адмирала флота Ивана Исакова, главного маршала бронетанковых войск Амазаспа Бабаджаняна, маршала авиации Сергея Худякова, маршала инженерных войск Сергея Оганова: сегодня именно благодаря им у нас есть возможность говорить и писать об этих событиях, жить и гордиться героизм наших предков».*

С докладом о научной деятельности в годы СССР России и Армении выступил аспирант I курса Грант Оганесян: *«За время войны по официальным источникам только ленинградских учёных было зарегистрировано более 1000 изобретений, но на самом деле их было гораздо больше. Дело в том, что никто их не считал, ученые не заботились об авторских правах, грантах и публикациях, а торопились реализовать полезные идеи».*

Эрмине Берберян, студентка II курса магистратуры РАУ, выступила с докладом о значении образа «Победителя» для национального самосознания армян и русских. Эрмине отметила, что, согласно исследованиям, среди армян процент общей тревожности возрастает, когда речь идёт о прошлом нашего народа: *«Возможно, это связано со столетием геноцида. Это ужасное событие и его значимость нельзя преуменьшать, однако хочется, чтобы в подобных случаях армянская молодежь ставила акцент на образе “Победителя”, ведь именно в таком случае мы будем развиваться и идти дальше».*

В конце первого пленарного заседания студенческой годичной конференции с речью выступил заведующий кафедрой всемирной истории и зарубежного регионоведения Е.Г. Маргарян: *«Для меня большая честь участвовать на такой конференции, когда учащимся различных наук даётся возможность выступать самим и слушать представителей других специальностей, когда речь идёт об одном и том же, но объект обсуждения рассматривается с различных углов: истории, науки, психологии, культуры. Этот взаимообмен знаниями и опытом очень эффективен, служит хорошей пищей для ума».*

По словам сотрудника Департамента науки РАУ Гранта Оганесяна, всего

на конференцию было представлено более 120 докладов по широкому спектру тем: экономики, естественных и точных наук, философии, юриспруденции, политики и филологии.

На закрытии конференции выступил проректор РАУ по науке П.С. Аветисян: *«Хотелось бы выделить секцию естественных наук. Ребята очень постарались и сделали отличные доклады на темы по химии, физике, биологии. На данный момент научно-исследовательская деятельность является основной гарантией того, что мы выпускаем действительно высококвалифицированных профессионалов на всех уровнях высшего образования. Можно утверждать, что уровень образования определяет и задает наука: внедрение в образовательные программы передовых научных идей является первостепенной задачей современного университета. Новое поколение действительно сильнее, чем наше, что особенно проявилось в эти несколько дней».*

***

22-го мая 2015г. Российско-Армянский университет посетила делегация Санкт-Петербургского политехнического университета в составе директора Института физики, нанотехнологий и телекоммуникаций С.Б. Макарова и заведующего кафедрой физики полупроводников и наноэлектроники Д.А. Фирсова. В рамках визита стороны подписали соглашение о взаимном сотрудничестве.

***

В Российско-Армянском университете открыта лаборатория стратегических исследований в области национальной безопасности. Лаборатория создана при поддержке Государственного комитета по науке Министерства образования и науки Республики Армения.

Как отметил завкафедрой Политологии РАУ, заведующий лабораторией Оганес Лаврентьевич Саркисян, причины создания лаборатории стратегических исследований в области национальной безопасности весьма разнообразны: «*В современном мире очень важна и актуальна сама проблематика данной сферы. Наша кафедра давно работает над этим направлением. Проблематика очень широкая и включает в себя не только политологические аспекты, но и культурные, экономические, социальные, военно-политические и т.д. Мы предъявили Государственному комитету по науке проект, который они поддержали и профинансировали. В этом году хотим обратиться также в российский научный фонд. В РА наша лаборатория активно сотрудничает с центром региональных исследований, который действует в Академии государственного управления. Важно отметить, что благодаря усилиями наших магистрантов и аспирантов мы организовываем разнобразные мероприятия, в том числе и за счет финансовой поддержки фонда Горчакова*». Как далее сказал О.Л. Саркисян, в феврале текущего года была проведена большая конференция, в которой участвовали как студенты ведущих вузов Армении, так и стран СНГ и даже Сербии. Недавно был также организован круглый стол, приуроченный к годовщине Геноцида армян в

Османской Турции, в рамках которого с докладами выступили как состоявшиеся ученые, так и студенты.

***

14-го мая в Доме культуры Российско-Армянского (Славянского) университета состоялась встреча с Министром образования и науки РФ Дмитрием Викторовичем Ливановым, директором Департамента государственной политики в сфере высшего образования Александром Борисовичем Соболевым и директором Международного департамента Николаем Рудольфовичем Тойвоненом.

«*Наш университет существует уже 15 лет, и с момента его основания мы задались целью, чтобы он стал лучшим вузом, ибо считаю, что нет смысла создавать университет, если он не претендует на звание лучшего университета страны,* – подчеркнул в приветственной речи ректор РАУ А.Р. Дарбинян. – *У нас учатся самые продвинутые студенты, немалую роль в этом вопросе играет их бикультурность и билингвальность. Я не хочу останавливаться на достигнутом, и мы совместно будем двигаться к тому, чтобы быть лучшими в стране*».

В ходе своего выступления А.Р. Дарбинян предложил представить сотрудников, членов профессорско-преподавательского состава университета к государственным наградам Российской Федерации.

«*Мы поддержим все предложения по награждению сотрудников РАУ государственными наградами РФ,* – заявил Д.В. Ливанов. – *Важность Российско-Армянского университета и для России, и для Армении обусловлена теми столетними связями между нашими народами, которые складывались начиная с XYI–XYIII веков: на протяжении веков наши народы имели культурные и научно-образовательные связи*»

Дмитрий Ливанов отметил, что РАУ задумывался как мост, который должен связывать армянский и русский народы и давать возможность самым лучшим армянским студентам получать качественное образование в соответствии с российскими образовательными программами, стандартами, стажироваться в лучших российских вузах. «*И именно эту задачу университет успешно решает*», – подчеркнул Министр образования и науки РФ. Особый акцент Д.В. Ливанов поставил на вопросе продвижения русского языка и русской культуры в Армении: «*То конкурентное (в том числе языковое) преимущество, которое имеет РАУ, делает его лучшим в стране, и нужно делать всё, чтобы постоянно поддерживать этот статус. Исходя из этих целей два года назад мы приняли решение о дополнительном финансировании Программы развития РАУ. И мы будем продолжать активное сотрудничество*». Отвечая на вопросы собравшихся, Д. Ливанов обещал рассмотреть проблемы, связанные с общежитием для студентов РАУ, участием студентов-граждан РА в российских образовательных конкурсах и др.

В ходе встречи состоялась презентация журнала «Новая Евразия». Издание представила редактор Галина Валентиновна Скоробогатова. Состоялось также открытие Центра науки и технологий РАУ. Лаборатории университета были переоборудованы современной техникой, в частности, лаборатории тонкопленоч-

ных солнечных элементов, биотехнологий, клеточной инженерии, синтеза, анализа и исследования биоактивных азотистых гетероциклов и аналитической биохимии.

В рамках визита российской делегации во главе с Министром образования и науки РФ Дмитрием Ливановым запланировано подписание межправительственного соглашения об условиях деятельности Российско-Армянского (Славянского) университета в Ереване. Подписание соглашения будет способствовать углублению связей двух стран в гуманитарной сфере, развитию экспорта российских образовательных услуг, а также укреплению позиций русского языка в Армении. По словам Ректора РАУ А.Р. Дарбиняна, соглашение об условиях деятельности Российско-Армянского (Славянского) университета придаст достаточно мощный импульс дальнейшему развитию вуза.

СВЕДЕНИЯ ОБ АВТОРАХ

С.Р. Аветисян	соискатель кафедры Уголовного права Российско-Армянского (Славянского) университета
А.Р. Арутюнян	старший преподаватель кафедры Политологии Российско-Армянского (Славянского) университета
Р. Арутюнян	магистрант Российско-Армянского (Славянского) университета
А. Бабаян	магистрант Российско-Армянского (Славянского) университета
Г.А. Варданян	к.э.н.
А.П. Вардеванян	к.ю.н., советник председателя конституционного суда РА, преподаватель кафедры Уголовного права и уголовно-процессуального права Российско-Армянского (Славянского) университета
Н.В. Геворкян	к.п.н., старший преподаватель кафедры Мировой политики и Международных отношений Российско-Армянского (Славянского) университета
Г.Г. Гукасян	начальник отдела по поддержке уголовного розыска Военно-следственного управления Главного следственного комитета РА
Г.С. Есаян	соискатель кафедры Психологии Российско-Армянского (Славянского) университета
Г.И. Коларов	к.п.н., преподаватель Экономического Университета Варны, докторант РУДН «Патрис Лумумба»
Р.А. Маргарян	советник Ректора РАУ по работе со студентами, соискатель кафедры Политологии Российско-Армянского (Славянского) университета
А.Л. Месробян	к.т.н., доцент кафедры Экономики и финансов Российско-Армянского (Славянского) университета
А.С. Назаретян	аспирант кафедры Уголовного права Российско-Армянского (Славянского) университета
Ж.В. Ростомян	к. пед.н., преподаватель кафедры Арменоведения Российско-Армянского (Славянского) университета
Г.Г. Саакян	советник 1-ого класса гражданской службы РА ГНКО «Национальное бюро экспертиз», советник директора
Э.С. Саргсян	аспирант кафедры Международного и европейского права Российско-Армянского (Славянского) университета
О.Л. Саркисян	к. филос.н., доцент, заведующий кафедрой Политологии российско-Армянского (Славянского) университета,
А.А. Яхшибекян	соискатель кафедры Экономики Российско-Армянского (Славянского) университета

К СВЕДЕНИЮ АВТОРОВ

Правила для авторов журнала «Вестник» РАУ

Журнал печатает оригинальные статьи по различным направлениям гуманитарных и общественных наук.

• К рассмотрению принимаются статьи на русском, армянском или английском языках.

• Статьи должны быть представлены в жесткой и электронной форме.

• К материалам статьи прилагается Договор с издательством РАУ, подписанный одним (ответственным) автором (оформляется в одном экземпляре).

• Статья должна иметь направление от учреждения, в котором выполнена работа. Рукопись подписывается автором (соавторами) с указанием фамилии, имени, отчества, домашнего адреса, места работы, номеров телефонов и e-mail. Необходимо указать, с кем вести переговоры и переписку. Авторы могут предложить возможных рецензентов. Отклоненные статьи не возвращаются.

Перед текстом статьи указываются:

– название статьи;

– инициалы и фамилии авторов (для иностранных авторов на языке оригинала или на английском языке);

– название учреждения (без сокращений и аббревиатур), которое направляет статью, его адрес (город, страна);

– e-mail авторов и контактный телефон.

Далее помещается аннотация объемом не более 0.5 машинописной страницы, которая не должна дублировать вводный или заключительный разделы. Аннотация не должна содержать литературных ссылок и аббревиатур. В конце аннотации указываются ключевые слова (keywords). Требуется также аннотация на английском, армянском (или русском) языке.

Адрес Редакции научных изданий:
0051, г. Ереван, ул. Овсепа Эмина, 123
Российско-Армянский (Славянский) университет,
тел⁄факс: (+374 10) 27-70-52 (внутр.: 42–02)
e-mail: redaction.rau@gmail.com